

# ሆሊዮስ

ሐረር

مارزقيك

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

السنة السادسة والثلاثون - العدد رقم ٤٠٥ - VOL. XXXVI N° 405 - 36-07 SU07, 2017, 07 405

## ኢ.ሆ.ሮ.ሆ.-ኢ.ፎ.ሆ. ነገር ኢትዮጵያ ላይ ሆሊዮስ ጉዞ ለሥራ ላይ 9-07 ከብራሲያ ለጽዳቃን





**Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԲԻՆ ՄԱՍԻՆ ԿԱՐԴԱԼ «ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ**

## **«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

Բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.-ական Բիզնես Թորիկեանի մահուան առիթով, «Մարզիկ» պաշտոնաթերթին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները:

Թորիկեան ընտանիք	1.000.000 Լ.ո.
Անդրանիկ Պահարեան (Ֆրանսա)	500 \$
Չաքմաքճեան ընտանիք (Գանատա)	300 Գ.\$
Տիկ. Յասմիկ Թորիկեան եւ զաւակունք	300 \$
Տէր եւ տիկ. Վիգէն Աբէլեան (Մ. Նահանգներ)	250 \$
Տէր եւ տիկ. Վարուժան եւ Անի Սերոբեան (Գանատա)	250 \$
Տէր եւ տիկ. Արա Սիսեռեան	200 \$
Պետիկ եւ Սոնիկ Վարձպետեան (Գանատա)	200 Գ.\$
Գարմէն Տէր Կարապետեան (Մ. Նահանգներ)	150 \$
Հ.Մ.Ը.Մ. Լոնտոն	100 \$
Օրդ. Արսինէ Թորիկեան	100 \$
Օրդ. Չարուհի Տէր Գալուստեան	100 \$
Տէր եւ տիկ. Բաֆֆի Թորիկեան	100 \$
Տէր եւ տիկ. Վիգէն եւ Արտա Գայթեմճեան	100 \$
Տէր եւ տիկ. Մարուան եւ Սիլվա Շուէյրի	100 \$
Վազգէն Կիւլճեան	100 \$
Տիկ. Մաքինաճեան	100 \$
Տէր եւ տիկ. Յակոբ եւ Թալին Գըլպաշեան	100 \$
Տէր եւ տիկ. Վարուժան Շամլեան	100 \$
Տէր եւ տիկ. Վահագն Շամլեան (Գանատա)	100 \$
Հրաչ Տէր Սարգիսեան (Գանատա)	100 Գ.\$
Տէր եւ տիկ. Վարդգէս Շամլեան (Գանատա)	100.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Սիհրան Պէօյիւքեան	100.000 Լ.ո.

Տէր եւ տիկ. Ռազմիկ Յակոբեան	100.000 Լ.ո.
Տիկ. Շաքէ Շիմշիրեան	100.000 Լ.ո.
Պերճ Կիւլպէնկեան	100.000 Լ.ո.
Արա Հացագործեան	100.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Բիզնես Պետոյեան	100.000 Լ.ո.
Ժան Ներսէսեան	100.000 Լ.ո.
Վաչէ Տէքերմենճեան	100.000 Լ.ո.
Վաչէ Կեօզիւպէյիւքեան	100.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Պետրոս եւ Գոհար Գարակէօզեան	100.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Սեւակ Թորիկեան	100.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. ճորճ Վարդանեան	75.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Օննիկ Պապիկեան	50.000 Լ.ո.
Կոնճեան ընտանիք	50.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Սեւակ Աբրահամեան	50.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Հրաչ եւ Միրա Եարտըմեան	50.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Մարսելօ Լթէօֆ	50.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Յակոբ Լատոյեան	50.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Պետիկ Սապունճեան	50.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Յակոբ Աբրահամեան	50.000 Լ.ո.
Տէր եւ տիկ. Բաֆֆի Եսայեան	30.000 Լ.ո.
Մանուկ Կոտալազեան եւ ընտանիք	30.000 Լ.ո.
Պերճ Աթլիկեան (Գանատա)	20 Գ.\$
Ֆրանսուա Գարայեան (Գանատա)	20 Գ.\$
Յակոբ Գարայեան (Գանատա)	20 Գ.\$
Բաֆֆի Հատիտեան (Գանատա)	20 Գ.\$
Անահիտ Մարգարեան	20 Գ.\$
Ռիչըրտ Սելքոնեան (Գանատա)	20 Գ.\$
Տէր եւ տիկ. Արամ եւ Սօսի Սաղըրեան	25.000 Լ.ո.
Տիկ. Վերժին Բանեան	20.000 Լ.ո.
Օրդ. Ազնիւ Բարունակեան	20.000 Լ.ո.
Ներսէս Տօնիկեան	20.000 Լ.ո.



**«ՄԱՐԶԻԿ»-Ի  
ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ**

- ◆ 100-ամեակի տոնակատարություններու մեկնարկը մամուլյ ասուլիսով
- ◆ Բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական Սուրեն Սուրատեանը
- ◆ «Հայ սկաուտի օր»ուան հանդիսաւոր նշում Լիբանանի մէջ
- ◆ Հ.Մ.Ը.Մ.ի Տիրոջի մասնաճիւղի 40-ամեակի տոնակատարութիւն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Յաղթանակի մոլուբիւնը	2-3
ՊԱՏԳԱՍ	4-6
ԱՆԴՐԱԴԱՐԶ	6-8
ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ	9-11
ԳԻՐԹԵՐՈՒ ՅԵՏ	12-13
ՄԻՋ-ԴԻԲԱՆԱԿԱՆ 9-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ	14-25
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ	26
ՄԱՍՆԱԾԻԴԷ ՄԱՍՆԱԾԻԴ	27-61
ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ	62-64



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Մարտ Բէշիշեան, Մեան Նազարեան, Տիրան Շահինեան:

**Վարչական կազմ:** Պարթիկ Կիլպէնկեան, Արտ Մոսիկեան, Տիրվա Սաղրեան, Յարութ Ալանանեան, Նազո Հայկալեան, Ռիթա Օղուլեան, Արլին Շամմասեան:

**Էջադրում եւ ընդհանուր չեւաւորում:** Արշո Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէբեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Քաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաժանորդներու: Տարեկան քաժանորդագրութեան սակ ճշդում է՝ Լիբանան 32 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հարավամասի սակն է 5000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»-ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»-ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»-ի միջոցով:

# ՅԱՂԹՊԱՆԱԿԻ ՄՈԼՈՒԹԻՒՆԸ

**Վ**նասաբեր մոլութիւններու մասին շատ խօսուած է: Ծանօթ եւ ընդհանրացած մոլութիւններ են ծխախոտի, խմիչքի, բախտախառի եւ գրաւախառի մոլութիւնները: Յաղթանակի մոլութիւնը սակայն նորութիւն է, իբրեւ երեւոյթ եւ վտանգ:

Վտանգը կու գայ արդի մարզախաղերու պարզած իրավիճակէն: Մինչեւ մեր մօտիկ անցեալը մարզախաղերը կը ծառայէին առողջ մարմնի մէջ առողջ միտք կերտելու աշխատանքին, սակայն արհեստավարժութեան եւ առեւտրական մրցակցութեան զարգացումով, նաեւ՝ քարոզչութեան եւ ընկերային ցանցերու գերիշխանութեան հաստատումով, այսօր անոնք դիմագիծ եւ նպատակ փոխած են՝ դարձած են հսկայ ճարտարարուեստ, ուր գերակշռող մօտեցումը շահն է, նիւթականը:

Պէտք է շահիլ, շահելու համար՝ յաղթել: Ուրեմն, «Ամէն գնով պէտք է առաջնութեան տիրանալ: Ընդունելի եւ անընդունելի բոլոր ձեւերով յաղթել, որովհետեւ իւրաքանչիւր յաղթանակ կ'ապահովէ նիւթական նոր հովանաւոր, իւրաքանչիւր յաջողութիւն՝ նոր ծանուցում»: Այս է ընդհանուր տրամաբանութիւնը յաղթանակի մոլութենէ տառապողներուն:

Այս տրամաբանութիւնը կրնայ ճիշդ ըլլալ մարզական միջազգային ակումբներու պարագային, որոնք կազմուած են շահակցական նկատառումներով, շահի եւ վնասի հաշուեկշիռով: Ակումբներու բաժնետէրեր միշտ պիտի ուզեն կրկնապատկուած գէրութեամբ տեսնել իրենց պիտոճէները: Այդ պատճառով ալ անոնք խտրութիւն պիտի չդնեն յաղթանակի հասնելու իրենց միջոցներուն մէջ: Պիտի գնեն ու ծախսեն տեսակ-տեսակ մարզիկներ եւ... մրցումներ, պիտի ծախսեն անհաշիւ գումարներ՝ մարզական բարոյականութեան ամէն սկզբունք մէկդի դրած:

Այս տրամաբանութեամբ հասակ պիտի առնէ մարզական արժէքներէ պարպուած սերունդ մը, որ յաղթանակի գիտութեամբ տարուած՝ անհակակշռելի պիտի ըլլայ դաշտերէ ներս թէ դուրս: Մերունդ մը, որ նուազա-



գոյն պարտութիւնն իսկ պիտի դիմաւորէ դժգոհութեամբ, կռիով եւ... մրցակիցին հանդէպ անտեղի ռիսակալութեամբ:

Այս ընդհանուր պատկերին մէջ ո՞ր է Հ.Մ.Ը.Մ.ին դերն ու տեղը:

Հ.Մ.Ը.Մ.ը կամաւոր աշխատանքի հիմքով գործող ազգային մարմնակրթական միութիւն է, որուն համար մարզախաղերը միջոց են եւ ոչ՝ նպատակ: Հ.Մ.Ը.Մ. իր գործունէութիւնը յառաջ կը տանի սկստական, մարզական եւ վարչական թեւ-

րով: Երեք թեւերէն որեւէ մէկը նախապատուութիւն չի վայելեր, ընդհակառակն՝ Հ.Մ.Ը.Մ.ական սկստուներ, մարզիկներ ու վարչականներ կը կազմեն մէկ ամբողջութիւն, միութենական միեւնոյն նկարագիրով, ինքնութեամբ եւ պատկանելիութեամբ, ինչ որ օտարները կը ճանչնան Հ.Մ.Ը.Մ.ականութիւն անունով:

Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը նմաններով ապրուած կեանք մըն է, դաստիարակութիւն է, միութենական կազմաւորում է:

Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը միութենական արժէքներով եւ սկզբունքներով գործելու համոզում է, կամք է:

Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը միութեան ճամբով ազգին ծառայելու հաւատք է, պատրաստականութիւն է:

Առանց այս բոլորին ի՞նչ Հ.Մ.Ը.Մ.ականութիւն, ի՞նչ յաղթանակ:

Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը կը թելադրէ, որ մեր մատղայ տղոց մարզական կուռքերը ըլլան միութենական կենսագրութեամբ հարուստ դէմքեր եւ ոչ թէ նիւթական վարձատրութեամբ հարուստ մարզիկներ, որոնք միութեան շապիկը կրելէ անդին՝ միութենական ոչ մէկ արժէք կը կրեն իրենց երակներուն մէջ:

Ընդունի՞ք, որ մարզական յաղթանակներու ձեռք բերումը ինքնաբերաբար չի կրնար ըլլալ: Որեւէ յաղթանակ կը պահանջէ երեք նախապայման.- ենթակառոյց, նիւթական եւ մարդուժ: Հ.Մ.Ը.Մ.ի նման միութիւններ ունի՞ն, կրնա՞ն ունենալ անհրաժեշտ այն ենթակառոյցը, որ անպարտելի կրնայ պահել զիրենք (արդիական դաշտեր, նորագոյն սարքաւորումներ,



մասնագիտական գրասենեակներ...): Անշուշտ, պետք է ձգտիլ այդ բոլորը ունենալու, սակայն իրապաշտութիւնը կը թելադրէ նկատի ունենալ սեփական կարելիութիւններն ու կարողութիւնները եւ ըստ այնմ ճշդել ակնկալութիւններու չափն ու սահմանը:

Հ.Մ.Ը.Մ.ի նման միութիւններ ի վիճակի՞ են տարեկան հսկայական գումարներ յատկացնելու որոշ մարզախաղերու՝ այլ մարզախաղեր անտեսելու գնով: Միութիւնը առետրական հաստատութիւն չէ, որ նիւթականի անվերջ հոսք ունենայ: Այլ հարց, որ իբրեւ սկզբունք, արդա՞ր է 15-20 մարզիկի համար ծախսել միութեան մը մնացեալ բոլոր անդամներուն համար ծախսուած գումարին տասնապատիկը կամ քսանապատիկը:

Իսկ մարդո՞ւծը. սիրողական սկզբունքներով գործող միութիւն մը ի՞նչպէս կրնայ չափուիլ մեր օրերու ամենէն արհեստավարժ մարզիկներով օժտուած խումբերուն դէմ: Իսկ ինչո՞ւ չափուիլ, երբ միութեան

կանոնագիրով ճշդուած նպատակը մասնակցութիւնն է եւ այդ ճամբով՝ սերունդ համախմբելը, կրթելն ու դաստիարակելը, հայր հայ պահելը: Արհեստավարժներու դէմ կրնան դնել արհեստավարժները միայն, ի հեճուկս պահեստի նստարաններուն վրայ նստող կրտսերներուն, որոնք տարիքային խումբերու մէջ իրենց տարիները մաշեցնել ենք՝ կարգ կը սպասեն միութեան շապիկը կրելու համար:

Միջակցութիւնը լաւ բան է, յաղթանակի ձգտիլը՝ ատելի լաւ, սակայն «յօնք շինելու տեղ աչք պէտք չէ հանել»:

Յաղթանակի մոլութիւնը «ա՛չք կը հանէ», մարզատեղները կը կտրցնէ եւ հաւաքականութիւնները կ'առաջնորդէ նիւթաբարոյական սնանկութեան՝

Հո՛ն, ուր իբրեւ միութիւն երբեք պիտի չուզէինք հասնիլ ո՛չ այսօր, ո՛չ ալ վաղը:

### Հ.Մ.Ը.Մ.Ի 24 ՇՐՋԱՆՆԵՐ, 108 ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱՒՈՐՆԵՐ

**Հայաստան:** Երեւան, Մալաթիա, Չէթուն, Կոմիտաս, Էրեբունի, Արովեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաիր, Էջմիածին, Մարտունի/Չօրաքար, Մարտունի/Ծովինար, Կիւմրի, Վեյրի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պուրմ Համուր, Այնճար, Ծինի, Անթիլիաս, Ժրլէյրէ, Պաուլիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաքաքիա, Գամիշլի, Բեսաս. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղատայ, Մուսուլ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթիանիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնտոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ամսթըր, Արմար, Առնհեմ. **Գերմանիա:** Մյունխի. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Սուդերթելիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիլ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանա:** Մոնրթէլ, Համիլթըն, Թորոնթօ, Բէնպրին, Սէնք Գաթրինգ, Լաւալ. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Ֆրեզնօ, Մոնթեպելլօ, Փասսայրինա, Կլէնլէյլ, Օրէնն Բաունթի, Սան Ֆեռնանտօ, Սան Տիէկօ, Ինլընդ Էմիլայր, Սանթա Գլարա, Բրեսէնթա Հոլիլ, Պրըպէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնաթ Բրիք, Նորթ Հոլիվուդ, Սաքրամենթօ. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքզի, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքոնթ, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոթ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորյուպա, Մոնթեվիդէօ. **Աւստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արաքս»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարար»), Մելբուռն.

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԴՐՕՇԻՆ ՏԱԿ ՈՒԵԻՔ ՀԱՅ ԱՆՏԷՐ ՊԷՏՔ ԶԷ ԶԳԱՅ ԻՆՔՉԻՆՔ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ  
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ  
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

**Պ**արապ ձեռքերով չէ, որ այսօր Հ.Մ.Ը.Մ.Ի Լաթաքիոյ մասնաճիւղը կը ներկայանայ իր 90-ամեակին: Արդարեւ, ան մեր ժողովուրդին կը ներկայանայ տասնամեակներու իր վարկով ու վաստակով:

Այսօր, հիմնականօրէն յարգանքի օր է: Սկսելով մասնաճիւղի հիմնադիրներէն, յարգա՛նք մասնաճիւղի շարքերուն ծառայած ծանօթ եւ անծանօթ վաստակաւոր ու համեստ այն բոլոր դեկավարներուն, մարզիչներուն եւ սկաուտ խմբապետներուն, որոնք հաւատաւոր եւ յարատեւ ճիգերով սերունդներ հասցուցին, իրենց լաւագոյնը եւ առաւելագոյնը տուին, ոգի եւ շունչ դրին իրենց նուիրումին մէջ, անխաթար պահելով Հ.Մ.Ը.Մ.Ի սրբազան առաքելութիւնը:

Մասնաւորաբար շեշտը կը դնենք մասնաճիւղի հիմնադիր այն սերունդին վրայ, որ 1926-ին, Կիլիկիոյ պարպումէն հագիւ 4 տարի ետք, ծովեզերեայ այս շրջանին մէջ հիմը դրաւ մարմնակրթական շարժումի մը՝ համախմբելու համար հայրենական գաղթական զաւակները: Այդ օրերուն, երբ մարդիկ հաց եւ օրապահիկ ապահովելու դժուարութիւն ունէին, երբ մարդիկ սեփական տուն եւ գործ չունէին, ահա՛ խումբ մը «խենթ»եր, հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ Միսաք Շիրոյեանի գլխաւորութեամբ, մասնաճիւղ կը հիմնէին, Փութպոլ եւ աթլէթ կը կիրարկէին, սկաուտութիւն կը յառաջացնէին՝ ազգային մտահոգութիւններով:

Այդ սերունդը անպայման նահանգի կամ երկրի ախոյեանութեան չէր ձգտեր, որքան՝ հայրենիքը համախումբ պահելու, հայ պատանիները եւ երիտասարդութիւնը հաւաքելու եւ դաստիարակելու մասին կը մտածէր:

Յարգա՛նք այդ սերունդին: Յարգա՛նք Միսաք Շիրոյեանին, Յարութիւն Գոլյումճեանին, Կարապետ եւ Պետրոս Ուղուրլեաններուն, Հայկ Ղազարեանին եւ Գրիգոր Զպուքճեանին, որովհետեւ անոնք ունեցան նուիրումի ոգի, յարատեւութեան կամք եւ ծառայութեան գիտակցութիւն:

Յարգա՛նք նաեւ անոնց գործը շարունակողներուն՝ Եղ-



ուարդ Պարսումեանին, Հայկազ Մեսուպեանին, Սմբատ Փանոսեանին, Սուրէն Բաբախեանին, Լեւոն Թոքաճեանին, Գրիգոր Էպիղաթեանին, Համազասպ Հէքիմեանին, Պետրոս Թուխանեանին, Գրիգոր Մարաշլեանին, Սարգիս Հազարապետեանին, վաստակաշատ ատենապետ Գէորգ Թոփճեանին, Մուշեղ Գոլյումճեանին, Խաչիկ Գալաճեանին, Զաւէն Գաբրիէլեանին եւ դեռ ծանօթ ու անծանօթ Հ.Մ.Ը.Մ.ական բազմաթիւ եղբայրներու եւ քոյրերու:

Փառքի ու յաջողութեան օրեր շատ ունեցած է այս մասնաճիւղը: Կ'արժէ, որ հիները յիշեն, իսկ նորերը գիտնան, որ Հ.Մ.Ը.Մ.ական քոյր Անթուանէթ Գալուստեան 1960-ին կը տիրանայ Սուրիոյ փինկ-փոնկի ախոյեանութեան, որ այդ տարի տեղի կ'ունենայ Լաթաքիոյ մէջ: Երկու տարի ետք, այս անգամ, 1962-ին, մասնաճիւղին պատքեթպոլի տղոց ու աղջկանց խումբերը կ'արժանանան Լաթաքիոյ առաջնութեան տիտղոսին:

Մասնաճիւղը իր աշխոյժ մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.ի Զատիկուան միջ-մասնաճիւղային խաղերուն, որոնք տեղի կ'ունենան Հայէպի ու Պէյրութի մէջ: Մարզական խումբերու կողքին, յառաջդիմութիւն կ'արձանագրեն նաեւ սկաուտական խումբերը, որոնք տարուէ տարի կը մեծնան թիւով ու որակով: Կը կազմակերպեն մեծաթիւ բանակումներ եւ սեմինարներ:

Պատմութիւնը երախտապարտութեամբ կը յիշէ, թէ ինչպէ՛ս Լաթաքիոյ մասնաճիւղը 1933-ին, Փութպոլի իր մրցումներէն մէկուն հասոյթը ամբողջութեամբ կը յատկացնէ Պէյրութի հայկական հրկիզեալ հիւղաւանի աղէտահարներուն: Կը յիշէ նաեւ, որ 1955-ին, երբ Ղընէմիէի շրջանէն 25 պատանիներ Լաթաքիա կը հաստատուին՝ մասնաճիւղը արաբախօս այդ պատանիներուն հայերէնի գիշերային դասընթացքներ կը կազմակերպէ, զանոնք իրենց արմատներուն եւ ինքնութեան կը կապէ:

Այս բոլորը, յարգելի՛ ներկաներ, պէտք է յիշուին եւ սերունդէ սերունդ փոխանցուին, որպէսզի մարդիկ ծանօթա-

նան Հ.Մ.Ը.Մ-ի իսկական դիմագրիծին, որ միայն մարզպետը եւ սկստուղծութիւն չէ, բաժակ եւ բանակում չէ, այլ՝ շատ աւելին է՝ հայապահպանում է, հայակերտում է:

Այս տարի մենք կը նշենք մասնաճիւղին հիմնադրութեան 90-ամեակը: Քանի մը ամիսէն՝ Մարտին պիտի նշենք մասնաճիւղին սեփական ակումբին հիմնադրութեան 60-ամեակը: Սա կը նշանակէ, թէ այս մասնաճիւղը 30 տարի գործած է առանց սեփական ակումբի եւ բաւարար յարմարութիւններու: Գործած է, որովհետեւ ան ունեցած է միութեան նպատակին եւ առաքելութեան հաւատացող խումբ մը հայորդիներ, որոնք հոգևոր-սրտով նուիրուած են այս միութեան՝ գոհելով ամէն բան: Հանգիստ, ընտանիք, առողջութիւն եւ գործ:

Այդ բոլորը շատ հեռու ժամանակներու մէջ չէին: Հոս ներկաներէն շատերը թերեւս կը յիշեն այս բոլորը: Ոմանք կրնան գործակից ու մասնակից ալ ըլլալ այն մեծերուն, որոնք այս մասնաճիւղը 90 տարի պահեցին եւ այսօր մեզի աւանդ ձգեցին: Աւանդը մեծ է, պատասխանատուութիւնը՝ շատ աւելի մեծ: Պէտք է արժանի ըլլալ այդ պատասխանատուութեան եւ պատուով պահել ու գուրգուրալ անոր, որպէսզի մեր կարգին կարենանք զայն փոխանցել մասնաճիւղի 100-ամեակի կամ 120-ամեակի սերունդին:

#### Յարգելիներ,

Տասնամեակներ շարունակ, Սփիւռքի մէջ քիչ մը ամէն տեղ, ցիր ու ցան ապրեցանք իբրեւ հայ, գործեցինք իբրեւ տիպար քաղաքացի, բայց հոգիով միշտ կապուած մնացինք հայութեան:

Այս եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը, այս եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի գործը:

Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիւղին 90-ամեակը եւ միութեան հիմնադրութեան 98-ամեակը առիթներ են յետադարձ ակնարկով յիշելու անցեալը, գնահատելու ներկան եւ խոհեմ կերպով ծրագրելու մեր վաղը:

Ներկաներէն քանին՝ երբեմն զրկուած են պատքէթ կամ ֆութպոլ խաղալու հաճոյքէն, որովհետեւ իրենց գաղթական ծնողները չունէին կարելիութիւնը գոյգ մը կօշիկ գնելու: Քանին՝ սկստական համազգեստ ճարելու տաճնապը ապրած են: Քանին՝ համբերութեամբ նստարանին վրայ սպասած են կարգի, որովհետեւ փորձի բաւական գնդակ չունէր Հ.Մ.Ը.Մ-ը:

Այս բոլորը երէկ էին: Այսօր պայմանները բարելաւուած են: Մեր գաւակները լաւագոյն կօշիկներով կը խաղան, լաւագոյն իրերով բանակում կը կատարեն, կեանքի մակարդակի բարելաւումները դրական հնարաւորութիւններ ստեղծած են:

Ժամանակին, Լաթաքիայէն Պէյրութ Զատկուան միջմասնաճիւղային խաղերուն մասնակցիլը բացառիկ երեւոյթ էր: Այսօր, Համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզական կամ սկստական հաւաքները, աշխարհի չորս ծագերէն կը համախմբեն մեր տղաքը: Համա-Հ.Մ.Ը.Մ-ական վերջին մարզախաղերը, երեք տարի առաջ, Շրեւանի մէջ համախմբեցին 16 երկիրներէ աւելի քան 650 մարզիկ-մարզիկուհիներ:

Այս է այսօր Հ.Մ.Ը.Մ-ը, մարմնակրթական այն մեծ կազմակերպութիւնը, որուն սկստական թեւին ներկայացու-

ցիչները, 2014-ի ամառը, Բիւրականի մէջ Համա-Հ.Մ.Ը.Մ-ական իրենց 10-րդ բանակումը կատարեցին, մասնակցութեամբ 17 շրջաններէ աւելի քան 720 սկստուներու:

Ու տակաւին, Հ.Մ.Ը.Մ. այն միութիւնն է, որ այսօր աշխարհի չորս ծագերուն կը գործէ 108 մասնաճիւղերով: Անոր կազմակերպական ցանցը ընդլայնած է վերջին տարիներուն: Նոր մասնաճիւղեր ստեղծուած են Մոսկուայի, Թիֆլիսի, ու նաեւ՝ Հոլանտայի, Գերմանիոյ եւ Շուէտի մէջ, ուր Հ.Մ.Ը.Մ. համախմբած է իրաքի եւ Սուրիոյ տաճնապալի շրջաններէն փոխադրուած մեր ազգայինները՝ անոնց համար ստեղծելով ազգային-մարմնակրթական առողջ միջավայր:

#### Յարգելի՛ ներկաներ,

Հաւանաբար տեղին է հարց տալ, թէ Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիւղին 90-ամեակը ինչո՞վ տարբեր է 50-ամեակէն կամ 70-ամեակէն:

Այսօր, փոխուած են պայմանները: Սուրիան 5 տարի է ի վեր կ'ապրի տաճնապալի պայմաններ: Սուրիահայութիւնը պատնէշի վրայ կը մնայ մեծ գոհողութիւններու գնով: Պատնէշի վրայ կը մնայ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ը: Դամասկոսի, Քեսապի եւ Գամիշլիի մասնաճիւղերը նախկինէն շատ աւելի նուազ թիւերով, սակայն զգալի աշխուժութեամբ, իսկ Հալէպի մասնաճիւղը՝ ծանրօրէն վիրաւոր, սակայն առանց երբեք ընկճուելու: Կ'իմանանք, թէ վերոյիշեալ շրջաններէն մեծ թիւով հայեր ապաստան գտած են յարաբերաբար ապահով նկատուող Սուրիոյ ծովեզերեայ շրջանները՝ Լաթաքիա եւ շրջակայքը: Հետեւաբար, օրուան հրամայականը մէկ է, ինչպէս 90 տարի առաջ, այսօր եւս հաւաքել, համախմբել ցիր ու ցան եղած գաղթական հայութիւնը եւ բոլորին, անխտիր բոլորին, տալ ազգային երդիք, հայեցի միջավայր ու մթնոլորտ: Հ.Մ.Ը.Մ-ի դրօշին տակ ունէ հայ անտէր պէտք չէ զգայ ինքզինք: Հ.Մ.Ը.Մ-ի ակումբին դռները բաց պէտք է ըլլան բոլորին դիմաց, որովհետեւ դռներէն առաջ Հ.Մ.Ը.Մ-ականներու սրտերը բաց են բոլորին դիմաց: Անյապաղ պէտք է կազմակերպել ծովեզերեայ շրջաններու հայութիւնը, կապել զանոնք ազգային մեր արժէքներուն: Այս աշխատանքին համար, հաւատացէք, որ դուք կը վայելէք ոչ միայն Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, այլ՝ Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ 26 հազար անդամներուն աջակցութիւնը:

Ահա՛ 90-ամեակի գլխաւոր մարտահրաւէրը: Ամէնէն հիմնականը եւ անյետաձգելին:

Այսօր փոխուած են պայմանները, ճիշդ է: Տասնամեակներ շարունակ Հ.Մ.Ը.Մ. գործեց կամաւոր եւ պատրաստակամ պատասխանատուներով: Սակայն մեր այսօրուան վարչականը, մարզիչը կամ սկստու իմբապետը յարաբերաբար տարբեր-տեսակի դժուարութիւններ կը դիմագրաւէ: Երբեմն հաւաքավայր-ակումբի պակաս, առօրեայ գործի հեւք, այլասերումի եւ անտարբերութեան երեւոյթներ:

Կը հաւատանք, որ այսօրուան չափահաս սերունդը, ներկաները մեծամասնութեամբ, շատ բան ստացան Հ.Մ.Ը.Մ-էն, միութեանական եւ ազգային պատկանելիութեան հասկացողութեամբ: Ամուր բարեկամութիւններ հաստատեցին: Գայլիկին կանչը՝ «Ընել մեր լաւագոյնը» ի մտի ունենալով բարձ-

րացան մեր անհատական կեանքին մէջ: Շատեր իրենց մտքին ու աչքին լոյսը մաշեցողցին միութեան մէջ: Պարտականութիւն է մեզմէ իւրաքանչիւրին համար, մեր հերթին, փոխադարձել, տալ Հ.Մ.Ը.Մ.ին, տալ նորահաս սերունդին, բարձրացնել զայն:

Մեր ժամանակներու նոր պայմանները, շրջապատէն ազդուած այսպէս կոչուած նոր արժէքները, արագընթաց արհեստագիտութիւնը իրականութիւններ են եւ անպայման իրենց ազդեցութիւնը ունին մեր երիտասարդ սերունդին վրայ: Կան նաեւ ընկերային տխուր երեւոյթներ, որոնք ժխտական անդրադարձներ ունին միութենական, ազգային ու հաւաքական մեր կեանքին վրայ: Արդարեւ, երբ կը պակսի պատկանելիութեան գիտակցութիւնը, կը պակսի միութենական կապուածութիւնը, կը պակսի ներկայութիւնը համայնքային կեանքէն ներս:

Տակաւին, մեր յաջողութեան գաղտնիքներէն է Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական դրամագլուխը, տարիներու վարկը, անունը, որոնց տոկոսներն են որ կու գան խտացնելու մեր շարքերը: Այլ խօսքով՝ անոնք որոնք անցան միութեան շարքերէն, իրենց զաւակները կը դրկեն համոզուած, որ անոնք եւս զարգացնեն այդ պատկանելիութիւնը:

**Յարգելիներ,**

Անցնող տասնամեակներուն, հաւատարիմ իր նպատակին եւ առաքելութեան, Հ.Մ.Ը.Մ. մագնիսական քաշողականութեամբ մը իր դրօշին տակ հաւաքեց մատղաշ տարիքի բազմաթիւ սերունդներ, հեռու պահեց զանոնք նկարագիր խաթարող միջավայրերէ, դաստիարակող դպրոց եղաւ եւ անոնց առջեւ բացաւ հայ մարմնակրթական ընդհանուր միութեան ուղին, ուր անոնք աւելի փորձառու պատասխանատուներու խնամքին տակ դարձան անուանի մարզիկներ, դարձան ախոյեաններ, ախոյեան դարձուցին իրենց խումբերը եւ հպարտութեան անմոռանալի զգացումներով ջերմացուցին հայ մարզոց հոգիները:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները, շեփորախումբի առաջնորդութեամբ, տողանցքներով խանդավառեցին մեր ժողովուրդը, հայ ապրելու կամքը գորացուցին եւ այս, այն տխուր օրերուն, երբ հայրենի հողերէն մղոններով հեռացուած հայութիւնը յուսահատութեան եւ ձուլումի սպառնալիքի դուռը կը գտնէր ինքզինք:

Այսօր, Լաթաքիոյ մասնաճիւղի 90-ամեակի այս հանգրժանին, արդար հպարտութեամբ մը կը հաստատենք, որ Հ.Մ.Ը.Մ., ինչպէս միշտ կը մնայ բովանդակ հայութեան երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը: Ու մենք համոզուած ենք, որ սփիւռքահայ կեանքին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպ ու գործօն յարատեւութեամբ, հաւաքաբար կրնանք աւելի սատարել մեր ազատ ու անկախ հայրենիքին վերականգնումին, որովհետեւ այդ վերականգնումը, իր անմիջականութեամբ հանդերձ, երկար ուղի մըն է: Մենք չէ միայն, այլ յաջորդաբար հասնող սերունդը, սերունդները պիտի ըլլան այդ յանձնառութեան դերակատար պատասխանատուները:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը: Կեցցէ՛ Լաթաքիոյ մասնաճիւղը:  
Եւ կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ին ծնունդ տուող մեր ժողովուրդը:



**Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՍ**

Անգամ մը եւս բախտը վիճակուեցաւ ինծի ներկայ գտնուելու Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհացրիւ ընտանիքի միջ-դիւանական խորհրդաժողովին, որ տեղի ունեցաւ Նիկոսիա, 27-29 Հոկտեմբեր 2016-ին:

Անգամ մը եւս բախտը ունեցայ անմիջականօրէն ճանչնալու միութեան մեծ ընտանիքի աննման զաւակները:

Անգամ մը եւս ապրեցայ Հ.Մ.Ը.Մ. կոչուած մեծ ընտանիքին անգամը ըլլալու երանաշնորհը, կարծեմ՝ առաւելաչընորհը:

Վերջապէս, անգամ մը եւս ապրեցայ հարստութիւնը Հ.Մ.Ը.Մ.ական կոչուած իւրաքայտուկ ոգիին ու որակին:

Այսպիսի նախաբանով կատարեցի մուտքը այս իրապէս կարեւոր խորհրդաժողովի նկարագրականին, որովհետեւ խոստովանիմ, որ ինծի համար սեղան ներկայացուած յաճախ միօրինակ («մոնոթոն») օրակարգէն շատ աւելի հետաքրքրական են նոյն սեղանին շուրջ նստողները, որոնց որակն ու ոգին անփոխարինելի աղբիւրն են Հ.Մ.Ը.Մ.ի ուժին:

Սեղանակիցներ, որոնցմէ իւրաքանչիւրը իր տեսակին մէջ իւրաքայտուկ, իր անմիջական շրջապատով տարբեր, մինչեւ իսկ թերեւս ներաշխարհով իրերամբեթ, նոյն սեղանին շուրջ հաւաքուած, կը վիճարկեն Հ.Մ.Ը.Մ.ի վաղը, անոր ընկիւղը, անոր մարտահրաւէրները, ի տես այս օրուան այսքան լայնատարած թէ տարտղնուած Սփիւռքի դժուարութիւններուն, կը քննեն անոր ազգային ծառայութեան առաւել արդիւնաւորման միջոցները:

Նիւթեր, գորս պետական մակարդակի համակարգեր պէտք է վիճարկէին, պետական կարողականութեամբ մարմիններ պէտք է ստանձնէին, բայց որովհետեւ այդ չկայ, եւ որովհետեւ այդ մէկուն բացակայութեան Հ.Մ.Ը.Մ.ը կայ, ան հարազատ իր երթին ու առաքելութեան, սովորական հազար ու մէկ հարցերուն զուգահեռ, սեղանի վրայ կը բերէ մօտ ապագային հազար մարզիկի մասնակցութեամբ հայրենիքի մէջ տեղի ունենալիք համա-Հ.Մ.-



ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ ԳՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ՝

# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՈՐԱԿԸ

Ը.Մ.ական մարզախաղերը ու քիչ ետք, նոյնքան ստուար թիւով ըսկաուտներու մասնակցութեամբ, համա-Հ.Մ.Ը.Մ ական բանակումին ծրագիրը:

Պէտք է պարզապէս ներկայ ըլլալ այսպիսի հաւաքի ու հետեւիլ սեղանը հարստացնողներու դէմքերուն, խօսքերուն, շարժումներին, ներքին փոթորկումներուն, յաճախ լեզուական դժուարութեանց բերումով որոշ չարանքին, այնուհետեւ՝ անպայման իր առաւելագոյն նպաստը բերելու ճիգին:

Կարելի չէ այսպիսի վայրկեաններուն սկանաւտեա ըլլալ ու պահ մը չսքանչանալ ու չհամայուելի, չսիրահարուելի այսպիսի երիտասարդ սերունդի մը, որուն անդամներէն շատերը իրենց չըջաններու նորակազմ գաղութներուն մէջ նորակազմ մասնաճիւղերու հիմնադրութեան ամբողջ պատասխանատուութիւնը ստանձնած են, ու առաւել՝ կը համարձակին ինչ որ բան ստանձնել նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի համագրային պարտքէն:

Նման սեղաններու մասնակցութիւնը, տեղին ժողովական, տեղին ճաշի, տեղին պարզապէս սուրճի, այսպիսի երիտասարդ-երիտասարդուհիներու հետ, քեզի կու տայ այն համոզումը, որ Հ.Մ.Ը.Մ-ի հարստութիւնը միայն չի կայանար իր ազգային ծառայութեան վաստակին մէջ, այլ՝ իր շարքերուն ունեցած մարդու թէ հայր սքանչելի որակին մէջ:

Որակ, որուն հետ շփուելու եւ ապրելու բախտը անգամ մը եւս ունեցայ: Իրապէս որ բախտաւորութիւն է: Կեցցեն նմանները, որոնց համար կեանքի հարստութիւն է Հ.Մ.Ը.Մ-ը ու անոնք, իրենց կարգին, Հ.Մ.Ը.Մ-ը հարուստ կը պահեն իրենց տեսակով:

Մարդիկ, որոնք մղոններ կտրած են այն համոզումով, որ պարտք ունին բերելիք իրենց միութեան թէ ազգին:

Մարդիկ, պահ մը մոռցած տուն-տեղ, գործ-ընտանիք, ամենայն լրջութեամբ ժողով կը գումարեն, հարց կը ծեծեն, անորոշ հարցերու անպայման լուծումներ կ'առաջարկեն:

Եւ ի՛նչ սիրով, ի՛նչ համբերութեամբ, ի՛նչ հետեւողականութեամբ:

Պարզապէս պէտք է համոզուելի, որ



այս մարդիկը տարբեր խմոր ունին, տարբեր խառնուածք, որ միայն պիտի բացատրուի ու արժեւորուի Հ.Մ.Ը.Մ-ականութիւն կոչուած առեղծը-լածով:

Թերեւս հայ իրականութեան մեծագոյն հաւաքն է այս, ուր հայապահպանումն ու հայահաւաքը կը մընան տիրական օրակարգ:

Հաւաք, ուր սփիւռուս աշխարհի հայ երիտասարդներու ուժացման հարցը կը մնայ հրատապ ու անյե-

տաճգելի օրակարգ:

Հաւաք, ուր հայ երիտասարդին ներգրաւումը իր գաղութային կեանքին ու վերադարձը իր արմատներուն կը մնայ լրջագոյն մարտահրաւէր:

Այս հաւաքին անունն է Հ.Մ.Ը.Մ-ի միջ-դիւանական խորհրդաժողով:

### Ի ՊԱՏԻՒ ՀԱԼԷՊԻՆ

Այն պահուն, երբ ապահովական ծանրակշիռ զարգացումներ կ'արձանագրուէին Հալէպի մէջ, անդին, Կիպրոսի պանդոկներէն մէկուն մէջ կը գումարուէր Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին միջ-դիւանական Գ-րդ խորհրդաժողովը, որուն կը մասնակցէր Հալէպէն ժամանած, Սուրիոյ ներկայացուցիչ եղբ. Մանուկ Քէօշկերեան:





Նման շատերուն, եղբայր Մանուկ ներկայացուց Սուրիոյ եւ յատկապէս Հալէպի շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի տեղեկագիրը: Տեղեկագիր, որ բաւական սեղմ տողերու մէջ հարագատօրէն ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի թէ ընդհանրապէս սուրիահայ երիտասարդութեան պատկերը: տողեր, նկարագրականներ նկարներ ու թիւեր:

Ժողովը իւրայատուկ կեդրոնացումով ու վերաբերումով հետեւեցաւ եղբ. Մանուկի տեղեկագիրին, որ կարծես կը հընչէր աւելին, իբրեւ տարուած յաղթանակի հրովարտակ:

Սխալած պիտի չըլլամ եթէ խոստովանիմ, որ պահ մը շատերու նման ապրեցայ որոշ շուարում, որոշ շփոթ, թէ արդեօք այդ տողերը կը վերաբերէին Հալէպի, այն Հալէպին, որուն վախերուն, վտանգին, ահաւոր առօրեային, հացին ու ջուրին պակասին, տառապանքին մասին վարժուած էինք լսել:

Վարժուած էինք լսել ու, կարծես իբրեւ օրէնք, զգացուիլ, խղճալ, գթալ, զօրակցիլ ու անցնիլ յառաջ:

Այնուամենայնիւ, եղբ. Մանուկին տեղեկագիրը կարծես չըլլէր ամէն ինչ, ու այդ ժողովը որ շունչ ու աւելի պիտի ներարկէր Հալէպին, ա՛ն է որ այդ մէկը աւելիով ստացաւ Հալէպէն:

Ժողովի աւարտին պահ մը կարելիութիւնը ունեցայ եղբ. Մանուկը գտնել առանձին, ու համարձակեցայ Հ.Մ.Ը.Մ-ականի պարկեշտութեան թէ ուղղամտութեան վառ օրինակ, եղբօր հարցնել. Մանուկ, իրապէս ներկայացուած տողերը հարագատ պատկե՞րն են ձեր Հալէպին, ես շատ տարբեր բաներ լսած եմ: Եղբ. Մանուկ առանց պահ մը իսկ տատամսելու ըսաւ. «Եղբա՛յր, այդ բոլորը, զորս լսած ես, իրականութիւն են, բայց նաեւ իրականութիւն են այն բոլորը, որ իմ տեղեկագիրը կ'ընդգրկէր: Վաղը մենք պիտի կատարենք սկստական տողանցք, երդման արարողութիւն: Հ.Մ.Ը.Մ-ը տակաւին Հալէպ է, ինչպէս որ էր, պարզապէս դժուարութիւններով ծանրաբեռնուած»:

Իսկ ես, այս գեղեցիկ տողանցքի պատկերները տեսնելէ ետք պիտի ըսէի, պիտի ըսէի այդ դժուարութիւններով հարստա-

ցած, թէ՛ եղբայր Մանուկին տեղեկագիրը իր նկարագիրին նման տակաւին սեղմ էր ու ժլատ:

**ԻՍԿԱԿԱՆ  
ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ**

Կը խոստովանիմ, որ Առնհեմը, իբրեւ քաղաք թէ շրջան, ինծի համար ուղղակի նորութիւն էր, աւելի ճիշդ՝ յայտնութիւն էր:

Նորութիւն էր, որովհետեւ եթէ Հ.Մ.Ը.Մ-ը այնտեղ մասնաճիւղ մը հիմնած չըլլար, ես երբեք կեանքիս ընթացքին պիտի չզիտնայի, որ Հոլանտայի մէկ անկիւնը Առնհեմ անունով քաղաք կայ, ու հոն ալ հայու շունչ կայ:

Ամէն պարագայի, այսօր ուրախ եմ ո՛չ միայն այն փաստին համար, որ Հ.Մ.Ը.Մ-ը հարագատ իր երթին՝ յաջողած է Եւրոպայի մոռցուած այդ անկիւնը հասնիլ, հայու բեկորները հաւաքել եւ հայու տուն հիմնել, այլ՝ անոր համար, որ միջ-դիւանական խորհրդաժողովին բախտը վիճակուեցաւ ինծի այդ մասնաճիւղին հիմնադիր, գործօն անդամ, ատենապետ եղբ. Լիպարիտ Սիմոնեանը անձամբ ճանչնալու:

Նոյն այդ ճանչնալու պահը ինքնին մեծ ուրախութիւն էր, երբ միջ-դիւանական Թ-րդ խորհրդաժողովի նախօրէին, առիթը ունեցայ նոյն պանդոկի սպասման սրահին մէջ հանդիպելու եղբայր Լիպարիտին, որ ինձմէ շատ առաջ, ինք մօտեցաւ ինծի եւ ներկայացուց ինքզինք: Ուղղակի քառորդ ժամը բաւարար էր, որ հարորդուէիր Լիպարիտին ու պեղէիր ո՛չ թէ միայն տիպար Հ.Մ.Ը.Մ-ականը, այլ՝ իրաւ հայն ու ոչ նուազ մարդը, իր բացարձակ ազնուութեամբ, ընկերասիրութեամբ, ուղղամտութեամբ, պիտի չվարանիմ ըսելու՝ հակառակ տարիքին պատանիի ամօթխածութեամբ:

Յաջորդ քանի մը օրերը պարզապէս ամրագրեցին առաջին օրուան տպաւորութիւններս եւ ուղղակի հմայուեցայ այդ տիպար Հ.Մ.Ը.Մ-ականով, որ կարծեմ ամբողջ մասնաճիւղի մը հիմնադրութեան թէ ապագայ աշխատանքներուն բեռը իր ուսերուն վրայ վերցուցած է:

Կրկնութեան գնով ըսեմ, որ Հ.Մ.Ը.Մ-ի ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ կը կայանայ Լիպարիտներու մէջ, որոնք լաւ ըմբռնած են Հ.Մ.Ը.Մ-ի վեհ առաքելութիւնը, որ ի պատիւ Լիպարիտներուն ու անոնց հետեւողական աշխատանքին, ի հեճուկա ամենհի դժուարութիւններուն, միշտ ալ պիտի դիւրանայ:

Վերջապէս, նման հաւաքները ոչ միայն առիթներ են հաղորդուելու Հ.Մ.Ը.Մ-ի ընթացիկ առաքելութեան թէ զարգացումներուն, այլ նաեւ՝ Լիպարիտի նման առաքեալներու ծանօթացման:

Եւ, ինչու չէ, անոնց նմանով հոգեւին վերանորոգմամբ ու ներշնչմամբ:

# ՅԱԲԱԿՅԱԳԻՐՆԵՐ ԵՂԲ. ԲԻԲԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ



Photo by Ashnag©

Թորիկեան ընտանիքին  
եւ Հ.Մ.Լ.Մ.ի բոլոր անդամներուն,  
Յառով ընդունեցինք մեծավաստակ եւ անձնուէր Հ.Մ.-  
Լ.Մ.ական Բիւզանդ Թորիկեանի մահուան լուրը:

Իսկապէս կորսնցուցինք տիպար հայրդի մը, որուն յիշատակը վառ պիտի մնայ Հ.Մ.Լ.Մ.ականներու եւ համայնքի զաւակներու սրտերուն մէջ, իբրեւ մատաղ սերունդը արժանավայել կերպով դաստիարակող եւ կրթող գործիչի:

Մեծ է լուսահոգի Բիւզանդ Թորիկեանի ներդրումը Հ.Մ.-Լ.Մ.ի թէ՛ մարզական եւ թէ՛ պատմագրութեան լուսաբանման, հանրահռչակման գործին մէջ: Երկար տարիներ մաս կազմելով «Մարզիկ»ի խմբագրական եւ վարչական կազմերուն, մաս կազմելով Հ.Մ.Լ.Մ.ի համագաղութային բարձրագոյն մարմիններուն եւ բեղուն գործունէութիւն ծաւալելով, անոր շնորհուած է Հ.Մ.Լ.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանը: Անոր «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պատմութիւն» խորագիրով քառահատոր աշխատութիւնը լաւագոյնս կ'արտացոլէ Հ.Մ.Լ.Մ.ի կերտած պատմութիւնը մինչեւ մեր օրեր:

Միութենական կեանքի մէջ 75 տարի գործունէութիւն ծաւալած Թորիկեանը իր լուսման ներդրած է նաեւ լիբանանեան մարզամշակութային կեանքի զարգացման մէջ եւ իրաւացիօրէն ան կը համարուի Լիբանանի աթլետիկայի Ֆետերասիոնի հիմնադիրներէն մէկը:

Խորապէս կը ցաւակցիմ հանգուցեալի հարազատներուն, բարեկամներուն եւ Հ.Մ.Լ.Մ.ի ողջ անձնակազմին:

Խորին վշտակցութեամբ՝

**Հ.Հ. ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԲԱՆ**

Պատուարժան Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Յարգելի եղբայրներ,

Հ.Մ.Լ.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը եւ շրջանի բոլոր անդամները սրտի դառն կակիծով իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ՝ եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահուան տխուր առիթով:



Photo by Ashnag©

Թող բարձրեալն Աստուած եղբոր յիշատակը անթառամ պահէ եւ օրհնութիւն դարձնէ բոլորին համար:

Հ.Մ.Լ.Մ.ական ջերմ բարեկներով՝

**Հ.Մ.Լ.Մ.ի ԳԱՆԱՏԱՅԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՅՈՒԹԻՆ**

Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Սրտի խոր կակիծով տեղեկացանք վաստակաշատ Հ.Մ.-Լ.Մ.ական, «Արժանեաց» շքանշանակիր եւ Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ՝ եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահուան գոյժը:

Այս տխուր առիթով, Հ.Մ.Լ.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը, կազմակերպութեանս Արժանիքի եւ Ուրուկուէյի կառույցի ու միութենական իր ընտանիքի անունով, խորին ցաւակցութիւններ կը յայտնէ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Լ.Մ.ական շարքերուն, ինչպէս նաեւ՝ հանգուցեալ եղբոր սգակիր ընտանեկան պա-

րագաններուն եւ հարազատներուն:

Եղբայր Բիւզանդին կորուստը մեծ ցաւ կը պատճառէ բոլորիս: Իր պատգամն ու յիշատակը միշտ վառ պիտի մնան մեր մէջ:

Եղբայրական ջերմ բարեկենդրով՝

**Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**



Photo by Ashnag

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւն,

Հ.Մ.Ը.Մ.Ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը փոխանցէ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ Թորիկեան ընտանիքին, մեզմէ յաւատարմութեամբ եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահուան սուգին առթիւ:

Թող հողը թեթեւ գայ եւ երկինքի արքայութեան արժանայ:

Եղբայրական բարեկենդրով՝

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՒՍՏՐԱԼԻՈՅ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւն,

Յարգելի եղբայրներ,

Սրտի խոր կակիծով ստացանք եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահուան ցաւալի լուրը:

Այս առիթով, վարչութիւնս կու գայ իր խորագգաց ցաւակցութիւնները յայտնելու ձեզի եւ եղբ. Բիւզանդ Թորիկեանի ընտանիքին ու պարագաներուն: Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքը կորսնցուց բազմապատակ միութենական եւ ազգային գործին նուիրուած անձնակորուցիւն մը, որուն յիշատակը պիտի շարունակէ ոգեւորել եւ սրտապնդել յառաջիկայ սերունդները:

Հանգիստ անոր աճիւններուն:

Եղբայրական ջերմ բարեմաղթանքներով՝

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Սիրելի եղբայրներ,

Յաւով ստացանք եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահուան գոյժը: Յանուն Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամբ» մասնաճիւղին, մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք եղբ. Թորիկեանի ընտանիքին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.՝ականներուն:

**ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»  
ՍԱՄՆԱՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւն,

Սիրելի վարչական եղբայրներ, խոր կակիծով կը մասնակցիմ Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի կորուստին եւ Կեդրոնական Վարչութեան սուգին:

Եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահուան այս տխուր պահուն ընդունեցէք իմ խորին ցաւակցութիւններս:

Եղբ. Բիւզանդ մեր ժամանակներու իրերաշարժող Կեդրոնական Վարչութիւններու բազմապատակ

անդամներէն մէկը եղաւ:

Յարգանք բոլորանուէր իր ծառայութեան, յարգանք իր անսակարկ նուիրումին, յարգանք իր երկարամեայ գործունէութեան:

Վարձքդ կատար, եղբայր Բիւզանդ:

**ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵՐՈՒԲԵԱՆ  
Մոնթրէալ**

Տխրած եմ մեր արժանաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Բիւզանդ Թորիկեանի կորուստով:

Յաւակցութիւններս:

**ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ  
Սան Ֆրանսիսքօ**

Կարելի չէ հաւատալ, որ եղբայր Բիւզանդ Թորիկեանը ոչ եւս է այլեւս:

Կորսնցուցինք բազմապատակ Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ բովանդակ կեանքը ապրեցաւ լաւ մարդու բոլոր տուեալներով, եղաւ ազգասէր ու հայրենասէր իր ամբողջ էութեամբ եւ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական մը իր բոլոր արժանիքներով:

Իր ազնիւ բնակորուցեամբ, իր հարազատ հաղորդակաւորութեամբ եւ յարատեւ աշխատասիրութեամբ եղբայր Բիւզանդ կարողացաւ վայելել բոլորին յարգանքն ու սէրը:

Եղբայր Բիւզանդ Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան իր չորս հատորներով ներկայ եւ ապագայ սերունդներու դաստիարակութեան համար կը ձգէ արժէքաւոր եւ օգտակար կտակ մը:

Եղբայր Բիւզանդ Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան շրջուն համայնագիտարանն էր եւ արիւններուն հարուստ շտեմարանը: Իր բոլոր ճամբորդութիւններուն ընթացքին միշտ իր հետն էր «սեւ կողքով տետրակ»ը, որուն մէջ մանրակրկիտ տեղեկութիւններ արձանագրած էր Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր մասնաճիւղերու եւ շրջաններու իրավիճակին մասին, շատ



Photo by Ashnag

օգտակար եւ բժախնդրօրէն դասաւորուած: Տակաւին կը տեսնեմ իր խոնարհ կեցուածքը եւ բարի ժպիտը, երբ իրեն կ'ըսէինք: «Եղբայր Բիւզանդ, քու սեւ կողքով տետրակդ իր օգտակար պարունակութեամբ կը նմանի օդանաւի մը սեւ տուփին անհրաժեշտ տեղեկութիւններուն...»:

Կը խոնարհինք իր անթառամ յիշատակին դիմաց եւ մեր ցաւակցութիւնները կը յայտնենք իր տիկնոջ, զաւակներուն, ընտանեկան պարագաներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի անդամներուն եւ համակիրներուն:

Իր յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ:

Տիեզերական խաղաղութեան մէջ ապրիս սիրելի՛ եղբայր Բիւզանդ: Վստահ եղիր, որ ձգած պատգամդ վարակիչ դեր

պիտի ունենայ մեր ներկայ եւ ապագայ սերունդներուն մօտ:

**ՀՐԱՁ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ**  
Մոնթրէալ

Վշտակիր եղբայրներ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Հաճեցէք ընդունիլ խոր ցաւակցութիւններս վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահուան առթիւ: Բարեյիշատակ եղբ. Թորիկեանի անմնացորդ նուիրաբերումը մաղթենք օրինակ դառնայ նոր սերնդականներուն:

**ՍՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆ**  
Գահիրէ

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

# ՀԱՄԵՍՏ ՈՒ ԸՆԿԵՐԱՍԷՐ ԵՂԲ. ԲԻՒԶԱՆԴԸ

**Սերոր Սահակեան  
ԵՐՈՒՍԱՂԵՍ**

**2**007-ի Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ժողովին էր կարծեմ, գումարուած՝ Ծաղկաձոր, երբ առաջին անգամ առիթը ունեցայ ճանչնալու, հանդիպելու այսօր բացակայ եղբայր Բիւզանդ Թորիկեանին:

Եղբայր Թորիկեան բաւական ծանօթ անուն մըն էր: Բայց ես չէի կրնար երեւակայել, որ Հ.Մ.Ը.Մ.ի պատմագիր եղբ. Թորիկեանը այն համեստ, հետաքրքրական, չափազանց ընկերային մարդն էր, որ կը մօտենար հեռուէն թէ մօտէն ծանօթ իւրաքանչիւր եղբօր եւ ներկայացնելէ հոգ ինքզինք, անպայման կը պրպտէր ու ուղղակի քանի մը վայրկեանի ընթացքին կը պեղէր դիմացինը, պահ մը զայն ձգելով շուարած ու ապշահար:

Որքա՛ն բան գիտէր այս մարդը, ուղղակի համայնագիրտարան մըն էր եւ ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ի, այլ ընդհանրապէս սփիւռքահայ գաղութային կեանքի, ազգային եռուզեռի, դիմադրաւած մարտահրաւէրներու մասին:

Չեմ գիտեր, արդեօք ե՞րբ կամ ի՞նչ առիթով Երուսաղէմ գտնուած է եղբայր Բիւզանդը, թերեւս իբրեւ ուխտաւոր, քանի մը օրուան համար ապրած է քաղաքին սուրբ պատերը, բայց եւ այնպէս, եղբայր Բիւզանդին տեղեկութիւնները կը գերազանցէին այդ քանի մը օրուան ուխտազնացութիւնը, եթէ երբեք պատահած էր այդ:

Եղբայր Բիւզանդ հազար հարցում եւ հազար հաստատում կատարեց Երուսաղէմին վերաբերող: Ան մեր շրջանի տասնեակ մը միութենական եղբայրներու մասին հարցուց ու բարեւներ դրկեց մարդոց, որոնք կարծես իր տա-

րիներու մտերիմները ըլլային: Ինձմէ իմացաւ, որ այդ եղբայրներէն շատերը մեկնեցան հոն, ուր այսօր ինք կը գտնուի:

Այնուհետեւ, եղբայր Բիւզանդ չինայեց մեր շրջանի Աթոռը, անցեալի ու ներկայի հոգեւորականները, որոնց բազմաթիւ գործերուն եւ արկածախնդրութիւններուն մասին լայն ժպիտով շատ բան պատմեց, բայց եւ այնպէս անպայման փափաքեցաւ, որ իր սրտաբուխ բարեւները տեղ հասցնեմ, գէթ անոնց, որոնք տակաւին վարին Երուսաղէմ կը յամենան:

Համակ կեանք էր եղբայր Բիւզանդ: Անոր ընկերութիւնը պիտի ուզէիր ամբողջ ժամեր ու օրեր վայելել, ու իր պրիսմակով դիտել ու վերլուծել հայ իրականութիւնը ամբողջ, իր սեւով ու սպիտակով, սառով թէ գաղջով, մարդով թէ տմարդիով:

Կ'ափսոսամ, որ այսօր եղբայր Բիւզանդը մեզի հետ չէ, նաեւ կ'ափսոսամ անոր համար, որ այս հողեղէն կեանքին մէջ մէկ անգամ միայն առիթը ունեցայ հանդիպելու Հ.Մ.Ը.Մ.ական այս հսկային, որուն ձգած բացը կամրջելու համար կարծեմ երկա՛ր պիտի ճգնինք:

Հողը թեթեւ գայ վրադ, եղբայր Բիւզանդ:



Եղբ. Բիւզանդ Թորիկեանի վերջին լուսանկարը՝ Արամ Ա. կաթողիկոսի Յ.Ս.Ը.Մ.ի կեդրոնայնացելու օրը, 24 Նոյեմբեր 2016-ին:

# ՄԵՐ ՃԻՏԻՆ ՊԱՐՏՔԸ

## Վրժ-Արմեն ՄՈՆՈՐԵԱԼ

**Վ**երջերս լոյս տեսաւ գիրք մը, շատ գիրքերու նման անադմուկ, կարծես ամօթխած կերպով հրապարակ գալով, մինչդեռ ամէն պատճառ կայ, որ անոր ծնունդը հպարտօրէն ծանուցուի ու ծանօթացուի:

Սովորական գիրք մը չէ ան. յաճախ չէ, որ նման հրատարակութիւններ մէջտեղ կու գան: Արդիւնք՝ երկարամեայ աշխատանքի: Ամէնէն կարեւոր հատորներէն մէկն է ան Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առիթով հրատարակուածներուն մէջ, բայց ի տարբերութիւն ուրիշներու, ան ոչ թէ ետ կը նայի, այլ՝ յառաջ: Այս՝ հակառակ անոր, որ ան կը վերարտադրէ մեզմէ աւելի քան դար մը առաջ լոյս տեսած պարբերաթերթի մը խտացեալ, ուստի եւ ա՛յլ աւելի ազդու դարձած բովանդակութիւնը:

Ինչի՞ մասին է խօսքը:

«Մարմնամարզ» պարբերաթերթին, որ լոյս տեսած է չորս տարի միայն՝ 1911-1914, իրաւամբ Հ.Մ.Լ.Մ-ի հիմնադիր նկատող Շաւարշ Քրիսեանի կողմէ խմբագրուած ու հրատարակուած, նախքան իր ալ նահատակութիւնը՝ ի շարս հայ մտաւորական ընտրանիին:

Ահա, ուրեմն, մեր սեղանին է անոր քառամեայ բովանդակութեանէն ծաղկաքաղ մը՝ «Շաւարշ Քրիսեան ու Մարմնամարզ-Մշտագօր աւանդ, անշէջ ջահ» վերնագիրով ու 468 մեծադիր եւ պատկերազարդ էջերով պատկառելի հատոր մը, տպուած Լոս Անճելըս, 2016-ին, համադրուած՝ կազմուած ու խմբագրուած բժ. Շաւարշ Քրիսեանի կողմէ: Անուններու նոյնութիւնը պատահականութեան արդիւնք չէ: Բժիշկը եղբօր թոռն է Մեծ Շաւարշին:

Բայց ո՞վ էր հազիւ 29 տարի ապրած այս հայորդին, որ իր անջնջելի հետքը ձգած է մեր ազգի յառաջընթացին վրայ:

Ծնած՝ Պոլիս, 1886-ին, յաճախած Պէշիկթաշ թաղի Մաքրուհեան ազգային, Պարտիզակի Ամերիկեան բարձրագոյն, ապա Սկիւտարի Պէրպլէրեան վարժարանները, շրջանաւարտ՝ Ռոպըրթ Գոյէճէն, Փարիզի մէջ հետեւած է համբաւաւոր մարմնակրթիչ Տրպոնէի դասընթացներուն, վերջապէս Լոնտոնի աշխարհահռչակ Սանտոյի մարմնակրթական բարձր հիմնարկէն վկայուած է իբրեւ մասնագէտ ուսուցիչ եւ մարզիչ: 1909-ին վերադարձած է Պոլիս ու ոգի ի բռին նուիրուած

է հայ նոր սերունդի մարմնակրթանքին՝ դասախօսութիւններով, դասընթացներով, ուսուցչութեամբ, մարզահանդէսներու ու հայկական առաջին ողիմպիական խաղերու կազմակերպութեամբ, մարզական ակումբներու ստեղծումով Պոլիս թէ գաւառները, նոյնիսկ Ադեքսանդրիա (Եգիպտոս), ուր 1912-ին հիմը դրած է տեղոյն «Կամբ»-ին: Նոյն տարին, «Մարմնամարզ»-ի խմբագրութեան նախաձեռնութեամբ իրագործած է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադիր-ծրագրային առաջին համաժողովը (թէեւ Հ.Մ.Լ.Մ-ը 1918-ին միայն վերջապէս շօշափելի իրականութիւն դարձաւ ձեռամբ իր վերապրած գործակիցներուն ու հետեւորդներուն): Իր մղումով է, որ 1912-ի Սթոքհոլմի միջազգային ողիմպիականին երկու հայ մարզիկներ մասնակցած են իբրեւ Օսմանեան կայսրութեան միակ ներկայացուցիչներ...



Շաւարշ Քրիսեանի մեծագոյն՝ անշէ՛ջ աւանդը, սակայն, կը հանդիսանայ պարբերաթերթը, որուն նուիրած է իր կեանքին վերջին չորս տարիները, եւ «որուն գլխաւոր ու գրեթէ միակ նպատակը պիտի ըլլայ հայերէն գիտցողներուն հասկցնել, թէ ամէն բանէ առաջ մարդ կենդանի մըն է ու պարտաւոր է, իբր բանաւոր էակ, իր ունեցածը, այսինքն՝ մարմինը ինամեկ եւ բարելաւել», կը գրէ ան «Մարմնամարզ»-ի առաջին թիւի խմբագրականին մէջ. յայտնելով նաեւ, որ ապահոված է մանկավարժներու, բժիշկներու ու բնախօսներու ալ մասնակցութիւնը: «Մէկ խօսքով մեր նպատակը պիտի ըլլայ մարդ պարաստել, եւ մարդեր են որ մեզի կը պակսին», կ'աւելցնէ ան:

Ներկայ հատորը կազմող բժիշկ Շաւարշ Քրիսեան յաջողած է ունենալ «Մարմնամարզ»-ի ամբողջական հազուադէպ հաւաքածոներէն մէկը ու քաջալերուած Հայոց Յեղասպանութեան թանգարանի տնօրէն դոկտ. Հայկ Դեմոյեանի այդ ուղղութեամբ ունեցած նախաձեռնութիւններէն ու բարոյական աջակցութենէն՝ որոշած է հրատարակել այս աշխատանքը ու անվճար տրամադրելի դարձնել հաստատութիւններուն, կազմակերպութիւններուն ու փափաքողներուն:

Ներածականէն, Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան խօսքերէն ու խմբագիրին «Դարադարձային ոգեկոչում եւ կոչ» առաջնորդող յօդուածէն ետք, գիրքը կը ներկայանայ հետեւ-

եալ բաժիններով.- Շաւարշ Քրիսեան առաջնորդը, խմբագրը, համակարգողը, դաստիարակը, կանանց յառաջդիմութեան դրօշակիրը, լրագրողը ու մարզիչը: Իւրաքանչիւր բաժինի սկիզբը զետեղուած է նոյնպէս ներածական մը հատորը կազմողին կողմէ, ապա կը յաջորդեն «Մարգաշխարհ»ի չորս տարիներէն պատկերատիպ էջեր, որոնք կը բացայայտեն Շաւարշ Քրիսեանի վերոյիշեալ յատկանիշերը: Այդ էջերուն մէջ կը կարդանք խմբագրականներ, առաջնորդող յօդուածներ, աշխատակիցներու գրութիւններ, հայկական ու միջազգային մարզական իրադարձութիւններու անդրադարձներ, լուրեր, ծանուցումներ մարզական նախաձեռնութիւններու, այլեւ լուսանկարներ մարզիկներու, մարզական ձեռնարկներու եւ այլն: Այս բաժիններուն ալ կը հետեւին այլապէս հետաքրքրական երկու այլ բաժիններ՝ «Վկայութիւններ, մտածումներ, մէջբերումներ» ու «Շաւարշ Քրիսեանի ժառանգը, շարունակութիւն, Արարատ Քրիսեան» (որ բժիշկին հայրն էր ու մարմնամարզի երկարամեայ վաստակաւոր դաստիարակը Գահրէի ազգային վարժարաններու աշակերտութեան):

Այս ակնարկը կարելի է աւարտել առանց անդրադառնալու բժիշկ Քրիսեանի հիմնական մտահոգութեան ու տարիներէ ի վեր ջատագոված գաղափարին՝ հայ կեանքին մէջ որակական փոփոխութեան մը անհրաժեշտութեան: Ան կը գրէ իր առաջնորդող յօդուածին մէջ. «Միթէ դժուար է ըմբռնել հսկայական եւ անհամեմատօրէն «աժան» այն ճանաչումը, զոր ողիմպիական երեւելի ախոյեան մը կամ խումբ մը կը բե-

րէ իր երկրին ու ազգին, երբ միջազգային հեռատեսիլներու ոսպնեակները իր յաղթանակէն ետք կը կեդրոնանան իր շապիկի արձանագրութեան՝ օրինակ՝ «Armenia»-ին եւ պարզեւոր դրօշին վրայ, մինչ կը հնչէ պետութեան մաղթերգը: Կարելի՞ է մատնանշել ուրիշ որեւէ երեւոյթ կամ պարագայ, որ նոյնիսկ փոքր ինչ չափով ընծայէ նման ոսկեայ առիթ՝ ազգային ինքնութեան միջազգային ծանուցման, հսկայածաւալ ճանաչումին եւ համակրանքին՝ պարզեւած ազգային հպարտութեան զուգահեռ»: Իսկ քիչ անդին կ'աւելցնէ. «Հայ գոյատեւող զանգուածները, Հայաստանէն ներս թէ դուրս, անտեսուած, անգիտացուած, բայց եւ անյետաձգելի ու անմիջական կարիքը ունին ժամանակակից ու անվիճելի միջազգային հայ հերոսներու, իմա՝ ակնյայտ ու երեւելի մարզիկ գերախոյեաններու եւ խումբերու՝ արագ եւ վստահ վերագտնելու համար ազգային պատկանելիութեան անվրէպօրէն ջերմացնող ու կապող զգացումը»:

Այս հատորին հրատարակութիւնը քայլ մըն է, համեստ քայլ մըն է այդ ուղղութեամբ միտքերը գրգռելու համար: Բժիշկ Շաւարշ Քրիսեան իր ճիտին պարտքն է կատարել: Մեզի կը մնայ, անհատաբար թէ հաւաքաբար, անսալ «Մարմնամարզ»ի Շաւարշի պատգամին ու կոչին ու մեր կարգին կատարել մեր ճիտին պարտքը...

Ծանօթ- Գիրքէն անվճար օրինակ մը ստանալու համար դիմել բժ. Շաւարշ Քրիսեանին՝ shavarsh\_chr@msn.com

**Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.**

- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar

**Europe Hotel**

*Feel at home, away from home...*

**Reservations Yerevan**  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europelhotel.am

# ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ 9-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵՑ

**27**<sup>-29</sup> Հոկտեմբեր 2016-ին, Նիկոսիան դարձավ Հ.Մ.-Ը.Մ.Ի աշխարհասփիւռ ընտանիքին սեւեռակէտր: Հ.Մ.-Ը.Մ.Ի 7 Շրջանային եւ 12 Մեկուսի շրջաններէ 40 ներկայացուցիչներ, Հ.Մ.-Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան հրահանգով եւ Կիպրոսի Հ.Մ.-Ը.Մ.-Հ.Ն.Մ.Ի վարչութեան հիւրընկալութեամբ, կատարեցին 2015-2019 քառամեակի իրենց միջ-դիւանական խորհրդաժողովը, ուր քննեցին միութեան վերջին Պատգամաւորական ժողովէն ասդին (Սեպտեմբեր 2015) կատարուած աշխատանքները եւ ծրագրեցին գալիք՝ 100-ամեակի հանգրուանին

համար առնուելիք քայլերը: Շրջաններու ներկայացուցիչները գեկուցեցին իրենց մասնաճիւղերու աշխատանքներուն մասին եւ անդրադարձան իրենց դիմագրաւած գլխաւոր դժուարութիւններուն: Ապա, անոնք լսեցին Կեդրոնական Վարչութեան արժեւորումը՝ միութեան պարզած ընդհանուր իրավիճակին մասին եւ, միասնաբար, խորհրդակցութիւններ կատարեցին աւելի կազմակերպ ու արդիւնաւէտ գործունէութեան մը ծաւալման համար: Խորհրդաժողովը նախորդներէն յատկանշուեցաւ քանի մը իրողութեամբ՝ Ա) Մասնակից շրջաններու եւ ներ-



կայացուցիչներու թիւով ան գերազանցեց նախորդ 8 խորհրդաժողովներու մասնակցութեան թիւերը: Առաջին անգամ ըլլալով նման խորհրդաժողովի մը կը մասնակցէին Հ.Մ.-Ը.Մ.Ի Առնհեմի (Հոլանտա), Միւնիխի, Շուէտի զոյգ մասնաճիւղերու՝ Ստեթթեթիոյ եւ Սթոքհոլմի, Թիֆլիսի եւ Հայֆա-Եաֆայի մասնաճիւղերը: Երկար բացակայութենէ ետք, ներկայ էին նաեւ Հ.Մ.-Ը.Մ.Ի Պուլկարիոյ, Մարսէյի, Վալանսի, Արմելոյի եւ Վիեննայի մասնաճիւղերուն ներկայացուցիչները:

Աչքառու էր եւրոպական ցամաքամասի ներկայացուցիչներուն մեծաթիւ մասնակցութիւնը այս խորհրդաժողովին: Ֆրանսա, իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, համա-Հ.Մ.-Ը.Մ.Ի-ական հանդիպումի մը ներկայ էր երեք մասնաճիւղերու (Փարիզ, Վալանս, Մարսէյ) եօթը ներկայացուցիչներով: Հոլանտան ներկայ էր երկու մասնաճիւղով, Շուէտը՝ նոյնպէս, Գերմանիան, Անգլիան, Աւստրիան ու Պուլկարիան ներկայ էին մէկական մասնաճիւղերով: Կը բացակայէր Յունաստանի շրջանը:

Հակառակ իրենց պարած քաղաքա-







կան ու ապահովական մեծ վերիվայրումներուն, Միջին Արեւելքի շրջանները ներկայ էին զգալի թիւերով: Լիբանանը, Սուրիան, Երուսաղէմը, Հայֆան, Եաֆան ու Կիպրոսը խորհրդաժողովի աշխատանքներուն ունեցան լայն մասնակցութիւն: Բացակայեցան Ամմանի, Պաղտատի, Քուէյթի, Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ մասնաճիւղերը:

Ամերիկեան ցամաքամասը ներկայ էր Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու, Հարաւային Ամերիկայի եւ Գանատայի Շրջանային Վարչութիւններով: Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը ներկայ էին նոյն օրերուն իր Շրջանային Ժողովի գումարումին պատճառով:

Ողջունելի ներկայութիւն էին Հ.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի, Թիֆլիսի եւ Հայաստանի (Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ) ներկայացուցիչները:

Աւստրալիոյ շրջանը ներկայ էր չորս ներկայացուցիչով, ինչ որ աննախընթաց երեւոյթ էր:

Բ) Ուշագրաւ էր խորհրդաժողովի մասնակիցներուն համեմատաբար երիտասարդ տարիքը: Բազմաթիւ նոր դէմ-

քեր առաջին անգամ ըլլալով կը մասնակցէին նման խորհրդաժողովի մը, միութենական սերնդափոխութեան առողջ երեւոյթը պարզելով: Արդարեւ, շրջաններու ներկայացուցիչներէն 5-ը՝ 20-30 տարեկան էին, 7-ը՝ 30-40 տարեկան, 9-ը՝ 40-50 տարեկան, 17-ը՝ 50-60 տարեկան, իսկ 2-ը միայն 60-էն աւելի տարիք ունէին:

Գ) Տեղեկատուական արհեստագիտութիւնը մնայուն եւ կարեւոր դեր ունէր խորհրդաժողովի աշխատանքներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ թէ՛ շրջաններու ներկայացուցիչներ օրակարգի գանազան կէտերով հանդէս կու գային տեղեկատուական նորագոյն միջոցներով թիւեր, տուեալներ ու վիճակագրական





տախտակներն երկայացնող փաուլըր փոյնթերով ու էնիմէյշըններով:

Դ) Աննախընթաց էր «Մարզիկ» պաշտօնաթերթին հանդէպ ցուցաբերուած հոգածութիւնն ու գուրգուրանքը: Թերթին 35-ամեակի տեսանիւթին ցուցադրութիւնը, անկասկած, որ իր դերը ունեցաւ հետաքրքրութիւններ սրելու աշխատանքին մէջ, բայց պէտք է ընդունիլ նաեւ, որ նորաստեղծ շրջաններու համար «Մարզիկ»ի ընդմէջէն աշխարհին ներկայանալու անհրաժեշտութիւնը կը ներկայանար զգալի կերպով: «Մարզիկ»ի աշխատանքներէն խանդավառուած՝ թերթին կայքէջին արդիականացման ի նպաստ կատարուեցան կարգ մը նուիրատուութիւններ:

Ե) Միութեան 100-ամեակը ներկայութիւն էր խորհրդաժողովի օրակարգի գրեթէ բոլոր կէտերուն մէջ: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերէն մինչեւ բանակում, կեդրոնական հանդիսութեանէն մինչեւ քարոզչական, հրատարակչական եւ տեղեկատուական այլազան ծրագիրներ, 100-ամեակը մնայուն նիւթ էր բոլորին համար, արժանավայել շուքով նշուելու եւ միութեան պատմութեան մէջ նոր դարձակէտ մը կազմելու նախանձախնդրութեամբ:

Եան յոտնկայս լուծեամբ՝ ի յարգանս Սուրբոյ պատերազմին զոհուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ Արցախի ռազմա-ճակատներուն վրայ նահատակուած հայ զինուորներուն

Ներկաները ողջունեց եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ բարի գալուստի խօսք արտասանեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ներկայացուց միջ-դիւանական խորհրդաժողովներու նպատակն ու կարեւորութիւնը եւ շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը միայն սկստուածութիւն չէ, միայն մարզական միաւոր չէ, այլ՝ կազմակերպական տարածուն ցանցով միութիւն մըն է, որուն համար նըման խորհրդաժողովները ունին մեծ

իմաստ, որովհետեւ անոնք շրջանները իրարու եւ կեդրոնին կը կապեն, փորձառութիւններու փոխանակման կը ծառայեն, ընդհանրական մտահոգութիւններ կը քննեն եւ եղբայրական սերտ կապեր կը ստեղծեն մասնակիցներուն միջեւ:

**ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ**

Խորհրդաժողովի աշխատանքներուն առաջին օրը յատկացուեցաւ շրջաններու զեկուցումներուն: Շրջանային թէ Մեկուսի վարչութիւններ ներկայացուցին իրենց մասնաճիւղերու վերջին մէկ տարուան յաջողութիւնները: Անոնք պարզեցին նաեւ իրենց շրջանին դիմագրուած մարտահրաւէրները:

Շրջաններու զեկուցումներէն յա-



**ԲԱՑՈՒՄԸ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ**

Միջ-դիւանական 9-րդ խորհրդաժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ մէկ վայրկ-



տուկ ուշադրութեան արժանացան հետեւեալները:-

**Գանատա-** Զգալի վերաշխուժացում մը կ'ապրի Սէնթ Գաթրինգի մասնաճիւղը: Մեծ թիւով սուրիահայեր Գանատա հաստատուելով՝ սկսած են մաս կազմել Հ.Մ.Ը.Մ.ին: Շրջանը կը դիմագրաւէ կարգ մը դժուարութիւններ, ինչպէս՝ սեփական մարզադաշտի չգոյութիւն, 30-45 տարեկան երիտասարդներու ներգրաւման հարց եւ գաղութային ձեռնարկներու խաչաձեւման պատճառով՝ նիւթականի ապահովման դժուարութիւն:

**Հայաստան-** Կազմած է շեփորախումբ մը՝ հայրենիք հաստատուած սուրիահայ Հ.Մ.Ը.Մ.ականներէ: Կազմակերպած է Ապրիլեան քառօրեայ պատերազմին վնասուածներու օժանդակութիւն: Հիւրընկալած է եւրոասիական տարածաշրջանի 6-րդ համաժողովը եւ երիտասարդական 3-րդ Փորումը: Օժանդակած է Թիֆլիսի նորաստեղծ մասնաճիւղի աշխատանքներուն՝ Նորընծայի գիտելիքներ փոխանցելով Թիֆլիսցի սկաուտներու: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը Երեւանի մէջ ունի իր կեդրոնը, սակայն մասնաճիւղերը գրասենեակներ չունին: Արմաւիրի շրջանը ունի Երեւանի նման անդամական թիւի աճ, սակայն յարմար գրասենեակ չունի՝ կարենալ ընդունելու համար բոլոր դիմողները: Շրջանի ներկայացուցիչին սրամիտ վկայութեամբ՝ «Այ ջան, բոլորը հայ են, ի՛նչ միութիւն Հայաստանի մէջ»:

**Հարաւային Ամերիկա-** Գլխաւոր դժուարութիւնները երկուք են՝ լեզուական հարց եւ 18-28 տարեկան երիտասարդները ներգրաւելու դժուարութիւն: Աշխատանք կը տարուի վեներուելլայի, Պրազիլի եւ Զիլի մարզասէր հայորդիները Հ.Մ.Ը.Մ.ին կապելու: Անոնք կը հրաւիրուին Հ.Մ.Ը.Մ.ի միջմասնաճիւղային Նաւասարդեան մարզախաղերուն:

**Արեւելեան Մ. Նահանգներ-** Շրջանին նորութիւնը Շարլոթի միաւորն է, որ ունի 13 սկաուտ եւ 17 անդամ: Միաւորը 2015-ին հիմնուած է Քարոլայնա նահանգին մէջ: Սկաուտական եւ մարզական աշխատանքները կ'ընթանան ընթացիկ թափով: Անցնող տարի կազ-



# ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական խորհրդաժողովները ընթացք առած են 1985-ին: Այնուհետեւ, չորս տարուան յաջորդականութեամբ, գումարուած են ինը խորհրդաժողովներ՝ հետեւեալ ձեւով.-

Ա. խորհրդաժողով, 5-7 Ապրիլ 1985, Միլանո, Իտալիա:

Բ. խորհրդաժողով, 24-27 Մարտ 1989, Լոնտոն, Անգլիա:

Գ. խորհրդաժողով, 13-16 Յուլիս 1993, Լաւալ, Գանատա:

Դ. խորհրդաժողով, 26-28 Մարտ 1997, Փարիզ, Ֆրանսա:

Ե. խորհրդաժողով, 13-15 Օգոստոս 2001, Պէյրութ, Լիբանան:

Զ. խորհրդաժողով, 1-3 Օգոստոս 2005, Աթէնք, Յունաստան:

Է. խորհրդաժողով, 9-11 Ապրիլ 2009, Փարիզ, Ֆրանսա:

Ը. խորհրդաժողով, 29-31 Մարտ 2013, Սիկոսիա, Կիպրոս:

Թ. խորհրդաժողով, 27-29 Յոկտեմբեր 2016, Սիկոսիա, Կիպրոս:

## ՋՕՐԱԿՑԱԳԻՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԻ

Հ.Մ.Ը.Մ.Ի միջ-դիւանական 9-րդ խորհրդաժողովը (Նիկոսիա, 27-29 Յուլիտեմբեր 2016) իր եռօրեայ նիստերուն ընթացքին լայնօրէն անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.Ի պատմական շրջաններէն Սուրիոյ ներկայ իրավիճակին:

Խորհրդաժողովը դրուատիքով արձանագրեց, որ հակառակ Սուրիան հարուածող արիւնալի պատերազմին, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ 5 մասնաճիւղերը՝ Հալէպը, Դամասկոսը, Լաթաքիան, Գամիշլիին եւ Քեսապը, ազգային բարձր գիտակցութեամբ եւ միութենական օրինակելի յանձնառութեամբ, իրենց գործունէութիւնը կը շարունակեն անխախտ հաւատքով եւ կամքով:

Հ.Մ.Ը.Մ.Ի գաղափարական դրօշին տակ ծառայող քոյրեր եւ եղբայրներ իրենց բոլորանուէր մասնակցութիւնը կը բերեն գաղութի պահպանման ու պաշտպանութեան վեհ գործին՝ ի հարկին զոհաբերելով իրենց գարուն կեանքերը:

Հ.Մ.Ը.Մ.Ի միջ-դիւանական 9-րդ խորհրդաժողովը միութեան աշխարհասփիւռ մեծ ընտանիքին անունով խոնարհեցաւ Սուրիոյ պատերազմին զոհուած 24 Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին դիմաց եւ իր բարձր գնահատանքը յայտնեց տազնապալի պայմաններու մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի ազգանուէր գործը շարունակող հաւատաւոր միութենականներուն:

Այս առիթով խորհրդաժողովը շեշտեց Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ ընտանիքին ամբողջական զօրակցութիւն ցուցաբերելու անհրաժեշտութիւնը, որպէսզի շրջանը անխափան շարունակէ նորահաս սերունդներու հայապահպանման նուիրական իր առաքելութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ  
9-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

մակերպուած են ձմեռնային եւ ամառնային սկառուտական գոյգ բանակումներ, նաեւ՝ Նաւասարդեան մարզախաղեր՝ 9 մասնաճիւղերու 250 մարզիկներու մասնակցութեամբ:

**Աւստրալիա-** Շրջանի հինգ մասնաճիւղերէն չորսը ունին բնականոն գործունէութիւն: Կազմալոյծ վիճակ կը պարզէ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղը, որուն անդամներուն մեծամասնութիւնը փոխադրուած է Սիտնիի հիւսիսային շրջաններ եւ անդամակցած է «Անդրանիկ» մասնաճիւղի շարքեր: Մասնաճիւղերը իրենց աշխոյժ մասնակցութիւնը բերած են Ապրիլ 24-ի, Արցախի զօրակցութեան եւ սուրիահայութեան ի նպաստ կազմակերպուած գաղութային ձեռնարկներուն:

**Լիբանան-** Գլխաւոր իրագործումը

Այնճարի մասնաճիւղի մարզահամալիրին կառուցումն է: Շրջանը կը դիմագրաւէ դաշտերու հարց: Բաւարար դաշտեր չունի մարզական բոլոր խումբերու փորձերուն համար: Ունի նաեւ նիւթականի տազնապ:

**Սուրիա-** Շրջանը Հ.Մ.Ը.Մ.ական 24 նահատակ տուած է պատերազմի սկիզբէն ի վեր: Այս ամառ բոլոր մասնաճիւղերը կատարած են իրենց տարեկան բանակումները: Կը գործեն 1100 սկառուտներ եւ 475 մարզիկներ: Նախապատրաստութիւններ կը կատարուին Թարթուսի մէջ սկառուտական կորիզ մը ստեղծելու համար՝ տրուած ըլլալով որ մեծ թիւով հալէպահայեր ապաստանած են Սուրիոյ ծովեզերեայ շրջանները, ուր միութենական կառոյց գոյութիւն չունի:

**Կիպրոս-** Շրջանը վերաշխուժացման



մէջ է: Ունի 62 սկառուտ: Ձեռնարկած է ակումբի վերաշինութեան ծրագիրը: Փորձեր կը կատարուին Հ.Մ.Ը.Մ.Ի կորիզներ յառաջացնելու Լառնաքայի եւ Լիմասոլի մէջ: Մասնաճիւղին պոլիսկի խումբը հանդիսացած է Կիպրոսի բաժակակիր եւ գրաւած է երկրի ախոյեանութեան երկրորդ դիրքը: 2016-ի ամբողջը, իրանի ՀՄԱԿ-ին հետ կատարած է բանակում: Գլխաւոր դժուարութիւններ՝ լեզուի նահանջ, հայերէն կարդացողներու թիւի նուազում: Կիպրոսի ներկայացուցիչին վկայութեամբ՝ «Դըրամը կու գայ, լեզուն չի գար»:

**Վիեննա-** Երկար տարիներ միայն վարչական գործունէութեամբ բաւարարուելէ ետք, անցնող տարի ձեռնարկած է սկառուտական շարքերու կազմակերպման եւ, 12 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով, կազմակերպած է ամառնային բանակում: Այժմ կազմակերպած է գերմաներէնի դասընթացք՝ Միլին Արեւելքէն շրջան հասնող հայերու համար: Ծրագրի վրայ ունի Եւրոպայի երիտասարդական Ֆորում մը, որուն պիտի մասնակցին Վիեննայի եւ շրջակայ երկիրներէ հայ երիտասարդերիտասարդուհիներ: Ունի կեդրոնի եւ նիւթական մնայուն աղբիւրներու դժուարութիւն:

**Առնհեմ-** 2016-ի Նոյեմբերին հիմնուած Հոլանտայի այս մասնաճիւղը արդէն ունի 45 սկառուտ: Շրջանին մէջ կրեւոր թիւ կը կազմեն Հայաստանէն



**արտագաղթած հայրերը:** Մասնաճիւղի անդամներուն մեծամասնութիւնը նախկին իրաքահայեր են, որոնք միութենական գործունէութեան ծանօթութիւն ունին, սակայն նիւթական բաւարար կարելիութիւններ չունին:

**Արմիւր- Շրջանը** ունի նոր ակումբի շինութեան ծրագիր: Կը հրապարակէ «Ճրագ» թերթը, որ ցարդ լոյս տեսած է 8 թիւ: Կը դիմագրաւէ մարդուժի տագնապ:

**Լոնտոն-** Ունի մարզիկներու թիւի զգալի աճ: Գործունէութեան վայրը նեղ կու գայ մասնաճիւղի անդամներուն եւ նոր տեղ վարձելու դժուարութիւն կայ: Նկատելի է ծնողներու անտարբերու-

թիւնը միութենական աշխատանքներու նկատմամբ: Կը դիմագրաւէ մարդուժի տագնապ:

**Երուսաղէմ-** Հակառակ մարդուժի եւ նիւթական իր սահմանափակ կարելիութիւններուն, ունի բաւական աշխոյժ գործունէութիւն: Հիմնական դժուարութիւններ կը մնան լեզուի հարցը եւ երիտասարդներ ներգրաւելու կարելիութիւնը: Մասնաճիւղը կը համախմբէ Հայֆայի եւ Եաֆայի մասնաճիւղերը, որոնք ունին 80 Հ.Մ.Ը.Մ.ականներ, մեծ մասը՝ մարզիկներ:

**Սթոքհոլմ-** Ունի սկաուտական աշխոյժ գործունէութիւն: 2016-ին կազմակերպած է իր առաջին բանակումը: Կը

դիմագրաւէ լեզուական դժուարութեան հարց:

**Սոտերթեյիա-** Շուէտի նորաստեղծ մասնաճիւղերէն է, որ ունի սկաուտական լաւ շարժում: Կը հաշուէ շուրջ 80 սկաուտ: 2016-ի ամրան կազմակերպեց իր առաջին բանակումը: Սթոքհոլմի նման կը դիմագրաւէ լեզուական հարց: Ունի հաւաքաժողովի կապուած որոշ դժուարութիւններ:

**Ֆրանս-** Փարիզի Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը, ինչպէս ծանօթ է, ունի սկաուտական լաւ կազմակերպուած շարժում: Գլխաւոր դժուարութիւնը կը մնայ ակումբի չզոյցութեան հարցը եւ պարզ անդամներու մօտ (ո՛չ մարզիկ, ո՛չ սկաուտ) միութենական աշխատանքներու նկատմամբ հետաքրքրութիւն ստեղծելու կարելիութիւնը:

**Վալանս-** Զգալի վերաշխուժացման մէջ է: Վերականգնած է սկաուտական իր երբեմնի շարժումը եւ այսօր ունի 52 սկաուտ: 2016-ի ամրան, երկար տարիներու ընդմիջումէ ետք, կատարած է տարեկան բանակում: Հիմնական դժուարութիւնը նիւթական է:

**Մարսէյ-** Խոստումնալից շրջան մըն է: Թէեւ մինչեւ օրս զբաղած է Փութպոլով (ունի 300 մարզիկ), սակայն այժմ նախապատրաստութիւններ կը տեսնէ սկաուտական շարժումի մը ստեղծման: Կը դիմագրաւէ լեզուի լուրջ հարց:

**Թիֆլիս-** Հասկնալի պատճառներով մասնաճիւղը կը գործէ սահմանափակ





չուլթեան միամեայ գործունէութեան բարոյական եւ նիւթական տեղեկագիրները, որոնք ներկայացուցան կեդրոնական վարչութեան քարտուղար եղբարաֆֆի կէվօլլլանեանի եւ զանձապահ եղբար վաչէ Նաճարեանի կողմէ:

Ներկայացուած տեղեկագիրներուն շուրջ եղան լուսաբանական կարգ մը հարցումներ, որոնց պատասխանեց կեդրոնական վարչութեան ատենապետ եղբար Գառնիկ Մկրտիչեան: Իր պատասխանին մէջ, եղբար Մկրտիչեան անդրադարձաւ նաեւ խորհրդաժողովէն բացակայող շրջաններու ընդհանուր իրավիճակին:

**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Միջ-դիւանական խորհրդաժողովը իր երկրորդ օրուան աշխատանքներուն սկսաւ միութեան համահայկական ընտանիքը յուզող ընդհանրական դժուարութիւններու քննութեամբ:

Խօսք առնող ներկայացուցիչները առաւելաբար անդրադարձան հետեւեալ երեւոյթներուն.-

ա) Մարդուժի տազնապ միշտ եղած է եւ այսօր ալ կայ: Բայց տարօրինակ է այդ տազնապը, որովհետեւ մենք մարդուժի պատրաստութեան կը սկսինք երեք տարեկանէն սկսեալ (մոկլիներէն) եւ մինչեւ որոշ տարիք մարդուժի հարց չենք ունենար: Մենք մարդուժ ունինք, սակայն զայն պահելու հմտութիւնը չունինք: Միութեան ոչ-գործօն անդամները (սկառուտական կամ մարզական շարքերէն դադրածները) մեր շուրջը պահելու դժուարութիւնը ունինք եւ այդ է մեր հարցը:

բ) Պէտք է ճշդել, թէ ինչպիսի՞ վարչութիւններ կ'ուզենք ունենալ. դրա՞մ բերող թէ դաստիարակութիւն ջամբող: Ժամանակները փոխուած են եւ նիւթական մեր կարիքները բազմացած են: Նիւթականի կարիքը կը զգացուի սուր կերպով, յատկապէս սեփական ակումբ ու մարզադաշտ չունեցող շրջաններու պարագային, որոնք ստիպուած են տարեկան մեծ գումարներ ապահովել վարձքերու վճարման համար: Նիւթական ապահովելու նախկին միջոցները սպառած են այլեւս: Հարկ է մարդոց



կարելիութիւններով: Պետական իշխանութիւններ հաշտ աչքով չեն դիտեր կատարուած աշխատանքները: Արգելած են Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան անդամ եղբար Բագրատ Եսայեանի մուտքը վրաստան: Շրջանի երիտասարդութիւնը կը դիմագրաւէ լեզուի հարց:

**Միւնիխ**- Նորաստեղծ մասնաճիւղ է: 2016-ին կատարած է իր առաջին բանակումը:

**Մոսկուա**- Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելու երկրորդ փորձը կատարուեցաւ վերջերս: Առաջին փորձը կատարուած էր 2008-ին եւ երկար կեանք չէր ունեցած: Մասնաճիւղը 2016-ի ամրան կատարեց իր առաջին բանակումը՝ 12 սկառուտներով եւ 10 համակիրներով: Մարդուժի ներգրաւման հարցը դիւրին չէ Մոսկ-

ուայի նման միջավայրի մը մէջ: Շրջանի ներկայացուցիչին վկայութեամբ՝ «Ամէն ինչ տեսած երեխան ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ. գայ»:

**Պուկարիա**- Հակառակ 6 մասնաճիւղերով պատմական շրջան մը ըլլալուն, վերջին տարիներուն Պուկարիան կ'ապրի որոշ տեղատուութիւն: Շրջանը կը դիմագրաւէ նիւթականի եւ լեզուի լուրջ հարցեր: Շրջանի ներկայացուցիչին վկայութեամբ՝ «Կը գործենք մեծ փափաքով ու քիչ դրամով»:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

Շրջաններու գեկուցումներու աւարտին, խորհրդաժողովը լսեց Սեպտեմբեր 2015-ին ընտրուած կեդրոնական վար-

ծրագրերն են ներկայացնել՝ դրամաշընորհներ ստանալու համար, որովհետև ընթացիկ նուիրատուութիւններու ձեւը ժամանակավրէպ կը թուի ըլլալ: Պէտք է գիտնալ Հ.Մ.Ը.Մ.ը ի՞նչպէս ներկայացընել մեր հարուստ միջավայրին:

գ) Լեզուական հարցը կը մնայ գլխաւոր դժուարութիւն Միջին Արեւելքէն դուրս գործող միութենական շարքերուն համար: Այս գծով, քննադատելու փոխարէն՝ պէտք է քաջալերել երիտասարդները, որպէսզի միջոցներ գտնեն յաղթահարելու այս դժուարութիւնը: Լեզուական դժուարութիւնը կ'ազդէ նաև քարտուղարական, դաստիարակչական եւ լրագրական («Մարզիկ»ի թղթակցութիւններու պատրաստութեան) մեր աշխատանքներուն:

դ) Ընդհանուր մտահոգութիւն է միութենականութեան նահանջը քիչ մը ամէն տեղ: Մեր մարզիկները տեղ-տեղ

սկսած են իրենք զիրենք աւելի ֆուլթայուրիստ դալ՝ քան Հ.Մ.Ը.Մ.ական: Օրւան մարտահրաւէրն է՝ ի՞նչպէս ֆուլթայուրի ահումբէ մը միութեան վերածուիլ: Նորերը պէտք է լաւ գիտնան, որ մարգախաղերը միջոց են եւ ոչ՝ նպատակ: Պէտք է մերժել յաղթանակի մոլութիւնը, ամէն գնով առաջին հանդիսանալու ձգտումը, որովհետև երբ միջոցը նպատակի կը վերածուի՝ այդ կ'ենթադրէ միլիոնաւոր տոլարներ եւ արհեստավարժ խաղացողներ, ինչ որ կը հակասէ միութենական մեր ըմբռնումներուն եւ համոզումներուն:

ե) Տեղեկատուական արհեստագիտութիւնը այսօր աշխարհը «փոքրացուցած է»: Պէտք է առաւելագոյն օգտուիլ այսօրուան արդի հաղորդակցութեան միջոցներէն եւ աւելի անմիջական, սերտ ու առօրեայ կապեր հաստատել իրարու հետ՝ ամէնօրեայ դրութեամբ փորձա-

ուութիւններ փոխանակելու համար:

Միաժամանակ, սակայն, պէտք է շեշտել մարդկային շփումներու անհրաժեշտութիւնը՝ նման խորհրդաժողովներու աւելի յաճախակի կազմակերպումով: Հ.Մ.Ը.Մ.ի նման միութիւններ չեն կրնար մեքենականորէն, միայն արհեստագիտական միջոցներով գործել, կենդանի հաղորդակցութեամբ պէտք է պահել ոգին ու միջնորդար:

**ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
10-ՐԴ ՄԱՐԶԱԿԱՆ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարգախաղերը տեղի պիտի ունենան 20-29 Յունիս 2017-ին, Հայաստան: Մարգախաղերը պիտի նուիրուին միութեան 100-ամեակին եւ պիտի ընդգրկեն տասը մարգախաղեր՝ ֆուլթայուլ, պասքէթբոլ, վոլեյբոլ, թենիս, փինկ-փոնկ, աթլէթիզմ, լող եւ ճատրակ: Իբրև նորու-

**ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ**



Միջ-դիւանական խորհրդաժողովի առաջին օրուան աշխատանքներու աւարտին, 27 Յունիսէն երեկոյեան, խորհրդաժողովին մասնակիցները եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները ընթրիքի հիւրը եղան Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանին:

Մեծ է Վարդգէս Մահտեսեանի վաստակը կիպրահայ համայնքի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի աշխատանքներուն յաջողութեան մէջ: Անոր անձնական միջամտութիւնը իր օգտակար ներդրումը ունեցաւ ինչպէս նախորդ,

նաև այս միջ-դիւանական խորհրդաժողովին կազմակերպման մէջ: Յետեւաբար, պատեհ առիթն էր շնորհակալութիւն յայտնելու իրեն՝ Հ.Մ.Ը.Մ.ին ցուցաբերած իր աջակցութեան համար:

Ընթրիքը տեղի ունեցաւ պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի տունը: Կատարուեցան խօսքերու փոխանակումներ՝ հիւրընկալ պրն. Մահտեսեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը գլխաւորող, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Սկրտիչեանի կողմէ: Խօսքերէն ետք, եղբ. Սկրտիչեան յուշանուէրով մը պատուեց պրն. Մահտեսեանը: Ապա, շուրջ երկու ժամ ներկաները վայելեցին տանտիրոջ հիւրընկալութիւնը:

Այս միջոցին, պրն. Մահտեսեան առանձնաբար ծանօթացաւ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ներկայացուցիչներուն հետ, մօտէն հետաքրքրուեցաւ շրջաններու իրավիճակով եւ իր ողջոյնները փոխանցեց աշխարհասփիռ Հ.Մ.Ը.Մ.ականներուն:





թիւն նկատի առնուած են Ֆուլթսալը եւ պատմիւթը: Իւրաքանչիւր շրջանի արտօնուած է իւրաքանչիւր մարզախաղի մասնակցի մէկէ աւելի խումբով: Կրտսերներու մասնակցութիւնը եւս քաջալերելի է:

Մարզախաղերը պիտի ունենան իրենց դաստիարակչական ծրագիրը եւ ժողովրդային ծառայութեան բաժին մը, ուր առիթ պիտի տրուի Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներուն Հայաստանի զանազան շրջանները այցելելու, ժողովուրդին հետ շփման մէջ մտնելու եւ բարեսիրական աշխատանք մը կատարելու:

Այս մարզախաղերուն նախորդներէն աւելի շատ առիթներ պիտի ստեղծուին մարզիկներուն իրարու հետ ըլլա-

լու, իրարու ճանչնալու եւ միասնաբար միութենական հարազատ մթնոլորտ ստեղծելու: Նկատել տրուեցաւ, որ միայն մարզական ակնոցով պէտք չէ դիտել այս մարզախաղերը: Մարզախաղերը առիթ են, որ մեր մարզիկ-մարզիկուհիները Հ.Մ.Ը.Մ.ական ու ազգային ոգիով լեցուն են երբ իրենց երկիրները վերադառնան՝ այդ ոգին փոխանցեն իրենցմէ կրտսերներուն:

**Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Այս օրակարգով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուց ցարդ իր առած քայլերը. 100-ամեակի նշանակի որդեգրում, 100-ամեակի նշա-

նաբան («Պատուաբեր անցեալէն՝ յաղթական ապագայ»), 100-ամեակի երգ եւ յանձնախումբերու կազմութեան պատկերացում:

100-ամեակի ծրագիրներուն բացումը կը կատարուի Յուլիս 2017-ին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերով եւ աւարտին կը հասնի Յուլիս 2018-ին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումին յաջորդելիք Երեւանի կեդրոնական հանդիսութեամբ: Միջանկեալ, մէկ տարւան վրայ նախատեսուած են բազմաթիւ տօնախմբութիւններ, ցուցահանդէսներ եւ հրատարակութիւններ Հայաստանի եւ սփիւռքեան տարբեր շրջաններու մէջ:

Իր կարգին, խորհրդաժողովը կարգ մը առաջարկներ ներկայացուց 100-ամեակի ծրագիրներու շարքին նկատի ունենալու համար 100-ամեակի գիտաժողովի մը կազմակերպում, վաւերազրական յատուկ ֆիլմի մը պատրաստութիւն՝ օտարներուն ծանօթացնելու համար Հ.Մ.Ը.Մ.ը, 100-ամեակի առիթով աշխարհի տարբեր շրջաններէն Հայաստանագնացութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի արխիւներու թուայնացում, Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանային իրերու ցուցադրութիւն Եղեռնի յուշահամալիրի թանգարանին մէջ, միութեան քայլերդ «Յառաջ նահատակ»ի պաշտօնական կատարում եւ արձանագրուած այդ օրինակի օգտագործում բոլոր շրջաններու մէջ:

Ներկայացուած հետաքրքրական առաջարկներէն կ'արժէ նշել նաեւ հետեւեալները.- Վահան Չերազի կիսանդրիի տեղադրում Կիւմրիի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի դամբարանի մը ստեղծում Երեւանի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշի գետեղում Արագածի ու Արարատի կատարին եւ այլն:

**ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումը տեղի պիտի ունենայ Յուլիս 2018-ին, բայց նախապատրաստական աշխատանքները ընթացք առած են արդէն: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան վերջին լիազումարը նշանակած է բանակումին ընդհանուր խմբապետը եւ շուտով կազմակերպական աշխատանքները կը սկսին լուրջ թափով:

Բանակումին թուականը կը զուգա-



գիպի Հ.Մ.Լ.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակին, առ այդ՝ նախատեսուած է, որ մասնակցութեան թիւերը գերազանցեն նախորդները, մանաւանդ որ այս անգամ շրջաններու մասնակցութեան թիւի սահմանափակում չէ կատարուած:

Համա-Հ.Մ.Լ.Մ-ական 11-րդ բանակումի օրակարգին առընթեր, խորհրդաժողովը քննեց սկստական «Արարատեան» կարգի (2018) եւ սկստական գիրքերու կապուած շարք մը հարցեր, որոնց մեծ մասը սպառիչ քննարկման արժանացած էր համա-Հ.Մ.Լ.Մ-ական 7-րդ խմբապետական համագումարին, Յուլիս 2016-ին, Երեւան:

**«ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ**

Միջ-դիւանական խորհրդաժողովի երրորդ օրուան աշխատանքները սկսան միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի իրավիճակին քննարկումով:

Նիստին սկիզբը, անակնկալ մը կը սպասէր «Մարզիկ»ի խմբագիր եղբ. Վի-



գէն Աւագեանին եւ ներկաներուն: Եղբ. Աւագեան, անցնող աշնան, Սփիւռքի նախարարութեան կողմէ արժանացած էր «Մայրենիի պաշտպան» շքանշանին: Օրին, եղբոր փոխարէն շքանշանը ըստանձնած էին Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ներկայացուցիչները յարմար առիթի մը գայն Պէյրութի դրկելու նպատակով: Այդ օր, ըստ երեւոյթին, յարմարագոյն առիթն էր, Հ.Մ.Լ.Մ-ի մեծ ընտանիքի անդամներուն ներկայութեան, շքանշանը եղբոր փոխանցելու եւ շնորհաւորելու «Մայրենիի պաշտպան»ութեան իր գործը, իբրեւ 30-ամեայ կրթական

մշակ եւ 21-ամեայ խմբագիր «Մարզիկ» պաշտօնաթերթի:

Հետեւաբար, գեղեցիկ անակնկալով մը, նիստին սկիզբը Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան յայտարարեց եղբ. Վիգէն Աւագեանի պարգեւատրման լուրը եւ հրաւիրեց Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ներկայացուցիչներէն եղբ. Պերճ Թիւֆէնկճեանը՝ եղբոր յանձնելու շքանշանը: Յանձնումի եւ ստանձնումի պահը եղաւ խորհրդանշական եւ սպաւորիչ:

Այնուհետեւ, խորհրդաժողովի մասնակիցներուն ցուցադրուեցաւ «Մարզիկ»ի 35-ամեակին առիթով պատրաստուած տեսանիւթը, որ կը ներկայացնէր թերթին ծնունդը, երկարամեայ երթը եւ առաքելութիւնը՝ միութենական թէ ազգային մեր կեանքին մէջ: Տեսանիւթէն օրինակներ տրամադրուեցան խորհրդաժողովի մասնակիցներուն, որպէսզի շրջաններ իրենց վերադարձին կազմակերպեն 35-ամեակի յատուկ ձեռնարկներ:



*Elegance Plus*

Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

**H. N. BOYADJIAN & CO.**

Տեսանիւթի ցուցադրութեան յաջորդեց «Մարզիկ»-ի խմբագիր եղբօր կողմէ թերթին նոր կայքէջի ծրագրին ներկայացումը փառուրդ փոյնթով: Կայքէջ մը, որ պատրաստ պիտի ըլլայ համա-Հ.Մ.-Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու նախօրեակին, ամբողջովին նոր տեսքով եւ հարուստ բովանդակութեամբ: Կայքէջը պիտի օժտուի նաեւ «որոնումի» (searching) դրութեամբ:

**ՎԱՐՁԱԿԱՆ-ԴԻԻԱՆԱԿԱԼԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ**

Խորհրդաժողովը իր օրակարգին վրայ ունեցաւ նաեւ վարչական-դիւանակալական ընթացիկ փոխանցումներ, որոնք կը նպատակադրէին աւելի կանո-

նաւորել շրջաններուն իրարու միջեւ եւ կեդրոնին հետ հաստատուած կապերը, ատենագրութիւններու եւ նամակագրութիւններու ճիշդ ու արագ ձեւով փոխանցումը եւ կը շեշտէին տեղեկութիւններու եւ զանազան փոխանցումներու համար տեղեկատուական արհեստագիտութեան նորագոյն միջոցներու օգտագործումը:

Նոյն օրակարգով կատարուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.-ի առցանց վաճառատան ծանօթացումը, ինչ որ ստեղծեց մեծ խանդավառութիւն: Առանձին ներկայացում մըն ալ կատարուեցաւ Google-ի փորձառական այն ծրագրին մասին, որ այսօր կ'օգտագործուի միութեանկան ներքին աշխատանքներու մէջ:

**ԱՅՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

Վերջին օրակարգով, խորհրդաժողովին մասնակիցները զեկուցում մը լսեցին Հ.Մ.-Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտական միջազգային կազմակերպութեան հետ ունեցած կապերուն մասին: Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան լայն տեղեկութիւններ փոխանցեց վերջերս Երեւանի մէջ տեղի ունեցած սկաուտական երոսասիական տարածաշրջանի 6-րդ համաժողովին եւ երիտասարդական 3-րդ Փորումին մասին:

Կեդրոնական Վարչութիւնը զեկուցեց նաեւ 2019-ի ամրան տեղի ունենալիք համահայկական 7-րդ մարզախաղերուն մասին: Այս գծով մասնակիցները արտայայտեցին շարք մը մտահոգութիւններ՝ մարզախաղերուն պարզուած կարգ մը երեւոյթներուն ի տես:

Խօսուեցաւ նաեւ Եւրոպայի մէջ կազմակերպուող մարզախաղերու մասին, որոնք վերջինտարիներուն կը ներգրաւեն մեծ թիւով երիտասարդներ, ներառեալ՝ Հ.Մ.-Ը.Մ.-ի Եւրոպայի կարգ մը մասնաճիւղերու խումբեր: Շեշտուեցաւ Եւրոպայի մէջ աւելի կազմակերպուելու եւ հեռանկար ունենալու անհրաժեշտութիւնը՝ երիտասարդութիւնը Հ.Մ.-Ը.Մ.-ի շուրջ հաւաքելու համար:

Օրակարգի աւարտին, խորհրդաժողովի դիւանին արտօնութեամբ, Հ.Մ.-Ը.Մ.-ի Սուրիոյ ներկայացուցիչը ցուցադրեց Հայկաի հայկական թաղամասերու ինքնապաշտպանութեան մասին տեսանիւթ մը, որ մեծ ազդեցութիւն գործեց ներկաներուն վրայ:

Հուսկ, շրջաններու ներկայացուցիչները փոխանցեցին իրենց սրտի խօսքերը, որմէ ետք ընթերցուեցաւ խորհրդաժողովին կողմէ Սուրիոյ շրջանին յղուելիք զօրակցագիրը (տեսՆԵՂ Էջ 18):

Միջ-դիւանական խորհրդաժողովը աւարտեցաւ երեկոյեան ժամը 6:30-ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:

Ցաջորդեցին յուշանուէրներու փոխանակումները եւ յիշատակի նկարները:



# ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



**Լեոնի Սարմազեան (Գանատա).** «Խորհրդաժողովը կարծեք համալսարան մըն էր: Երեք օրուան ընթացքին համալսարան մը ավարտեցի»:

**Պերժ Թիֆէնկեան (Հայաստան).** «Օրակարգը շատ լաւ քննուեցաւ: Նման քննարկում բաւական է չէր կատարուած»:

**Փաթիլ Եսայեան (Լիբանան).** «Այս խորհրդաժողովէն կը մեկնիմ այն համոզումով, որ Հ.Ս.Ը.Մ.ը միայն միութիւն չէ, կեանքի իմաստ է ու պայքար»:

**Արպի Յարութիւնեան (Աւստրալիա).** «Շատ աւելի տարբեր է՝ երբ միասին ենք: Հպարտ ենք, որ Հ.Ս.Ը.Մ.ին կը պատկանինք»:

**Ռազմիկ Փանոսեան (Արեւելեան Մ.Ն.).** «Կը խոստանանք շարունակել մեր ընթացքը եւ 2017-ին, համա-Հ.Ս.Ը.Մ.ական մարզախաղերուն, տեսնուիլ Հայաստան»:

**Մանուկ Քեօշկերեան (Սուրիա).** «Հ.Ս.Ը.Մ.ը այն գեղեցիկ կամուրջն է, որ նման խորհրդաժողովներով մեզ իրարու կը կապէ»:

**Սեսիլիա Սամանձեան (Հարաւային Ամերիկա).** «Մինչեւ հիմա զաւակներուս կը նախանձէի: Ուրախ եմ, որ ես ալ ի վերջոյ իրենց պէս նոր քոյրերու եւ եղբայրներու ծանօթացայ: Նորոգուած կը վերադառնամ շրջանս»:

**Աննա Ալեքսանձեան (Թիֆլիս).** «Շատ հպարտ եմ, որ հայ եմ»:

**Սերոբ Սահակեան (Հայֆա-Եաֆա).** «Ունինք բաներ, որոնց արժէքը չենք գիտեր: Խորհրդաժողովի այս սեղանը ամէնէն հարուստն է: Դուք մեր հարստութիւնն էք: Ձեր խմորը տարբեր է: Ձեր նմանը շատ տեղ չկայ: Հոգեկան գոհացում կը զգամ, երբ ձեզի նմաններու հետ կ'ըլլամ: Ընդունինք, որ Հ.Ս.Ը.Մ.ը միայն ազգային արժէք չէ, այլ նաեւ՝ մարդկային արժէք է»:

**Վիգէն Վարդանեան (Միւնիխ).** «Ինքզինքս բնաւ օտար չզգացի: Այս իմ առաջին խորհրդաժողովս էր, բայց ոչ՝ վերջինը»:

**Հայրապետ Հայրապետեան (Սոսերթելիա).** «Հանգիստ եւ մոմավառութիւն Սուրիոյ մեր նահատակներուն»:

**Սալբի Պետրոսեան (Սթրքիոլմ).** «Շատ ուրախ եմ, որ այս խորհրդաժողովին մասնակցեցայ»:

**Նոյեմի Նալպանտեան (Երուսաղէմ).** «Ունիմ երեք գլխարկ՝ Հ.Ս.Ը.Մ., ՀՕՍ եւ Հ.Յ.Դ.: Երեքը զիրար կ'ամբողջացնեն»:

**Մաքսիմ Աձեմեան (Փարիզ).** «Երբեք Հ.Ս.Ը.Մ.ական այսքան մեծաթիւ ներկայացուցչութիւն չէ եղած

Ֆրանսայի դ ր օ շ ի ն տակ: Ուրախ եւ հպարտ եմ այս երեւոյթով»:

**Էրիք Սարաձեան (Մարսէյ).** «Շատ բան սորվեցանք այս խորհրդաժողովէն: Մենք դժուարութիւններէն վախցողը չենք, կը յառաջանանք շարունակ»:

**Կարօ Ստեփանեան (Վալանս).** «Վերադարձին մենք պատրաստ ենք ձեռնարկ մը կատարելու «Մարզիկ»ին համար: «Մարզիկ»ը արժանի է մեր գուրգուրանքին»:

**Էտմոնտ Աբրահամեան (Լոնտոն).** «Սուրիահայերը մեր մտքին մէջն են: Մենք յատուկ ներուժով կը վերադառնանք մեր շրջանները»:

**Յարութ Աղազարեան (Կիպրոս).** «Հ.Ս.Ը.Մ.ական ըլլալը դիւրին է, Հ.Ս.Ը.Մ.ական մնալը է դժուար»:

**Լիպարիտ Սիմոնեան (Առնհեմ).** «Աստուած պահէ ու պահպանէ սուրիահայ մեր եղբայրները: Աստուած այնպէս ընէ, որ ձեր դէմքերը անգամ մը եւս տեսնեն»:

**Գեորգ Յակոբձեան (Վիեննա).** «Միլիոններ եթէ ծախսենք նման մթնոլորտ չենք կրնար ունենալ: Հարկ է որակին աւելի ուժ տանք: Կեղեւէն անցնինք կորիզին»:

**Մէլի Խաչիկեան (Պուլկարիա).** «Անմոռանալի օրեր անցուցի այս խորհրդաժողովին: Յուսամ յաջորդին քիչ մը աւելի հայերէն կը խօսին»:

**Մոսիկ Թովուզեան (Կեդր. Վարչութիւն).** «Կրնա՞ք մեր ժողովուրդին պատմութիւնը երեւակայել առանց Հ.Ս.Ը.Մ.ի»:

**Րաֆֆի Կելօղլանեան (Կեդր. Վարչութիւն).** «Մենք կատարեալ «խենթ»եր ենք: Հպարտ ենք ձեզմով»:

**Վաչէ Նաճարեան (Կեդր. Վարչութիւն).** «Մեր տեսլականը, նպատակը եւ «ո՞ր կ'երթանք»ը նոյնն է, ուրեմն մենք կը յաղթենք անպայման»:

**Ալէք Խաչատրեան (Կեդր. Վարչութիւն).** «Հ.Ս.Ը.Մ.ի գաղտնիքը միշտ երիտասարդ մնալու մէջն է»:

**Իշխան Եղիայեան (Կեդր. Վարչութիւն).** «Այս խորհրդաժողովը փաստեց, որ մեծ ու փոքր շրջաններ չկան: Բոլորս կը մեծնանք իրարմով»:

**Գառնիկ Սկրտիչեան (Կեդր. Վարչութիւն).** «Մարդ չի կրնար բաժնել Հ.Ս.Ը.Մ.ը իր ժողովուրդէն: Բոլորս կը գործենք մէկ դրօշի տակ, մէկ նպատակի, մէկ Դատի ու հայրենիքի ի խնդիր»:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԼԻԱԳՈՒՄԱՐԻ ՆԻՍՏԵՐԸ



կուսի վարչութիւններուն աշխատանքները: Յատուկ անդրադարձ կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ շրջանին, որ հակառակ քաղաքական եւ ապահովական ծանր պայմաններու, անխափան կը շարունակէ միութենական գործ կատարելը:

Լիազուժարը գնահատանք արձանագրեց Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի աշխատանքներուն ընդարձակման համար: Այսօր, Երեւանի մէջ արդէն կը գործեն 5 միաւորներ: Աշխույժ գործունէութիւն կը ծաւալեն նաեւ Երեւանէն դուրս գտնուող 8 միաւորներ: Աշխատանք կը տարուի միաւորները օժտելու համապատասխան վարչութիւններով: Լիազուժարի նախօրեակին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. հիւրընկալեց սկաուտական երոստիական տարածաշրջանի 6-

**2** 015-2019 քառամեակի Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան երկրորդ լիազուժարի նիստերը տեղի ունեցան միջ-դիւանական 9-րդ խորհրդաժողովի նախօրեակին, 25 եւ 26 Հոկտեմբեր 2016-ին, Նիկոսիոյ մէջ, Կիպրոս:

Լիազուժար նիստերուն ներկայ գտնուեցան Կեդրոնական Վարչութեան գրեթէ բոլոր անդամները եւ «Մարգիկ» պաշտօնաթերթին խմբագիրը: Յարգելի պատճառներով նիստերէն բացակայեցաւ եղբ. Հրաչ Մեսրոպեան:

Լիազուժարը նախ զեկուցում մը լսեց Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ մասնաճիւղերու գործունէութեան մասին: Կեդրոնական Վարչութեան անդամներ ընդհանուր գիծերով ներկայացուցին իրենց շրջաններու Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային եւ Մե-

րդ համաժողովը եւ երիտասարդական Յ-րդ Ֆորումը: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ներկայացուցիչ եղբ. Արթիւր Խաչատրեան ընտրուեցաւ երոստիական տարածաշրջանի կոմիտէի անդամ:

Հ.Մ.Ը.Մ. զգալի գործունէութիւն կը ծաւալէ նաեւ Մոսկուայի մէջ: Թիֆլիսի պարագային, ուր 50-60 սկաուտներ կը գործեն, լիազուժարը մտահոգութեամբ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեանի Վրաստան մուտքին դէմ դրուած արգելքին: Շեշտուեցաւ, որ սկաուտութիւնը ոչ-քաղաքական շարժում է եւ մարդկային իրաւանց կոպիտ խախտում է Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցիչին դէմ կամայականօրէն դրուած արգելքը:



Լիազույցված անունները քննեց Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին համար նախատեսված տոնակատարությունները եւ անհրաժեշտ նկատեց քարոզչական ու հրատարակչական լայնածավալ աշխատանքով 100-ամեակը ներկայացնել նաեւ օտար շրջանակներու: Նպատակաշարմար նկատուեցաւ 100-ամեակի ձեռնարկներուն բացումը կատարել 2017-ի համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերով, իսկ փակումը՝ 2018-ի բանակումով եւ եզրափակիչ հանդիսութեամբ, Երեւանի մէջ: Որդեգրուեցաւ միութեան 100-ամեակի նշանակը, երգը (խօսք՝ Ներսէս Լիպարեանի, երաժշտ.՝ Վահրամ Էմմիեանի, կատարողութիւն՝ Գառնիկ Սարգիսեանի) եւ նշանաբանը («Պատուաբեր անցեալէն՝ յաղթական ապագայ»):

Օրակարգի յատուկ նիւթ դարձան համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերուն եւ բանակումին առնչուած հարցեր: Ցարդ կատարուած աշխատանքներու մասին փառուրդ փոյնթով գեկուցումներ ներկայացուցին Կեդրոնական Վարչութեան տուեալ մարզերու պատասխանատուները:

Այնուհետեւ, քննուեցան միութեան կազմակերպական եւ դաստիարակչական աշխատանքներուն վերաբերող ծրագիրներ, որոնց կարգին հիմնական նորութիւնը կը կազմէր Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական բաժանմունքը, որ միութեան ռազմավարական ծրագրի գլխաւոր առաջադրանքներէն մէկն է: Բաժանմունքը կը նպատակադրէ Հ.Մ.Ը.Մ-ի շուրջ համախմբել 18-26 տարեկան երիտասարդներ: Այս գծով բաւական լուրջ փորձեր կը կատարուին Արեւմտեան Մ. Նահանգներու մէջ: Եւրոպայի մակարդակի երիտասարդական նախա-ձեռնութեան մը դիմած է Վիեննայի մասնաճիւղը:

Առանձին քննարկումի արժանացան միութեան սկաւտական եւ մարզական գործունէութեան դիմագրուած դժուարութիւնները եւ անոնց յաղթահարման ձեւերը: Խօսուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի քոյր մասնաճիւղերու դրութեան, արհեստագիտական տեղեկատուութեան, համահայկական մարզախաղերու, զանազան հրատարակութիւններու, Հ.Մ.Ը.Մ-ի թանգարանի, արխիւներու եւ տնտեսական գլխաւոր ծրագիրներու մասին:

Իբրեւ նորութիւն, լիազույցված ծանօթացաւ Կեդրոնական Վարչութեան առջանց վաճառատան ծրագիրին, որուն շնորհիւ Հ.Մ.Ը.Մ. այսուհետեւ կարելիութիւնը պիտի ունենայ միութեանական իրեր, յուշանուէրներ, տարազներ, սկաւտական եւ մարզական պիտոյքներ վաճառել առջանց դրութեամբ: Նոյն առիթով, ներկայացուեցաւ նաեւ «Մարզիկ» պաշտօնաթերթի համացանցի արդիական նոր կայքէջին ծրագիրը:

Տեղին է նշել, որ ի տարբերութիւն նախորդ լիազույցվածներու, այս լիազույցված քննութեան արժանացած բոլոր նիւթերը ներկայացուեցան լատենտական արդիական միջոցներով՝ տեսանիւթերով, փառուրդ փոյնթերով եւ համակարգչակալին նորագոյն ծրագիրներով:

Աւարտին, լիազույցված արժարժեց Հ.Մ.Ը.Մ-ի միջ-դիւանական խորհրդաժողովին ուշադրութեան յանձնուելիք հարցեր:

Աւարտին, լիազույցված արժարժեց Հ.Մ.Ը.Մ-ի միջ-դիւանական խորհրդաժողովին ուշադրութեան յանձնուելիք հարցեր:



Pink Kimberley  
AUSTRALIA

PinkKimberley.com.au



Diamonds beyond rare

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ Ի ՊԱՏԻ ԱԼԼԱ ԼԵՒՈՆԵԱՆԻ ՀԱՄԵՐԳԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ՝

# Հ.Մ.Ը.Մ.Ը ԵՂԱՔ ԴՊՐՈՑ ՄԸ՝ ՄԱՐԴԱԿԵՐՏՄԱՆ ՈՒ ՀԱՅԱԿԵՐՏՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՎ

Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՅԱԿՈՒԲ ԳԱԶԱՆՃԵԱՆ

**Հ**ՄԸՄԸ-ի միջ-դիւանական խորհրդատուները մասնակիցները, ժողովական իրենց նիստերու երկրորդ օրուան աւարտին, Ուրբաթ, 28 Հոկտեմբերին, առիթն ու պատիւը ունեցան Ստրովոլոսի քաղաքապետութեան հանդիսասրահին մէջ ներկայ գտնուելու հայրենի երգչուհի Ալլա Լեւոնեանի համերգին:

Կիպրահայ հոծ բազմութեան մը ներկայութեան, Ալլա Լեւոնեան իր առաջին ելոյթն էր, որ կ'ունենար Կիպրոսի մէջ: Համերգին իրենց մասնակցութիւնը բերին դաշնակարուհի Զարա Բարխուդարեան եւ Համազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի «Սիփան» պարախումբը, զեղարուեստական ղեկավարութեամբ՝ լիբանանահայ Գօգօ Քէլչեանի:

Իրենց ներկայութեամբ համերգը պատուեցին կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Հ.Յ.Դ. Կիպրոսի կոմիտէի ներկայացուցիչ Սիմոն Այնէճեան, Նիկոսիոյ եւ Լառնաքայի քահանայ հայրերը՝ Մոմիկ Քհնյ: Հապէշեան եւ Մաշտոց Քհնյ: Աշգարեան:

Համերգին բացումը կատարելով, կազմակերպիչ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի վարչութեան անունով եղբ. Յակոբ Գազանճեան յայտնեց, որ ուրախութիւն է ողջունել Հ.Մ.Ը.Մ.Ի միջ-դիւանական Գրգ խորհրդատուները մասնակիցները, որոնք հեռաւոր ամիսներէ գալով, իբրեւ կայան ընտրած են Կիպրոս կղզին՝ խորհրդակցելու, տեսակէտներ փոխանակելու, ծրագիրներ մշակելու եւ հեռաւոր ամիսներու վրայ գործող Հ.Մ.Ը.Մ.ականներու ձայնն ու ցանկութիւնը լսելի դարձնելու համար:

Եղբ. Գազանճեան հաստատեց. «Համախմբուած ենք, որ պէսզի միասնաբար դիմագրուենք մեր դէմ ցցուած մարտահրաւէրները: Պիտի կազմակերպուինք, պիտի շարունակենք 98-ամեայ մեր պատմութեան երթը եւ պիտի թիափարենք հոսանքն ի վեր՝ հասնելու համար նոր կազմաւորուող գաղութներ, մանաւանդ՝ Միջին Արեւելքի տագնապներուն պատճառով արեւմտեան ամիսներուն ձեւաւորուող հայկական նոր օճախները»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.Ի պատմական դերակատարութեան անդրադառնալով, եղբ. Գազանճեան շեշտեց. «Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքը կապեց Հայաստանին: Ան չեղաւ սոսկ մարզական միութիւն մը, չեղաւ սոսկ սկառուական միութիւն մը, այլ եղաւ դպրոց մը՝ իր մարդակերտման ու հայակերտման ծրագիրներով: Եղաւ առաքելութիւն մը՝ իր վեհ սկզբունքներով ու ազնուագոյն իտէալներով: Ան իր մէջ ամփոփեց հայու հարազատ ապրումները, ձեւաւորեց եւ հունաւորեց երիտասարդ սկառուին ու մարդիկին ուղին, դարձաւ սփոփիչ գործօն»:



Իր խօսքին աւարտին, եղբ. Գազանճեան ներկայացուց օրուան ասույթը՝ հայրենի երգչուհի Ալլա Լեւոնեանը, որ 2008-էն ի վեր կը հանդիսանայ UNICEF-ի բարի կամքի դեսպանը Հայաստանի մէջ: Ան արժանացած է բազմաթիւ կոչումներու եւ գնահատական շքանշաններու:

Բացման խօսքէն ետք ընթացք առաւ օրուան համերգը եւ երգչուհի Ալլա Լեւոնեան շուրջ երկու ժամ իր տպաւորիչ ելոյթով հմայեց բոլորը: Ժողովրդային, ազգագրական եւ հայրենասիրական սիրուած երգերով Ալլա Լեւոնեան յուզիչ եւ խանդավառ պահեր ստեղծեց ներկայ հանդիսականներուն մօտ, որոնք երկար ծափերով իրենց անկեղծ գնահատանքը յայտնեցին հանրաճանաչ արուեստագիտուհիին:

Ալլա Լեւոնեանի անզուգական կատարումները փոխանցեցին հարազատ կանչը հայրենիքին, քաջարի սիրանքները հայ զինուորին, յոյսերն ու երազները հայ մօր: Կարճ՝ Ալլա Լեւոնեան իր երգերով գովքը հիւսեց համազգային մեր տեսիլներուն եւ այդ տեսիլներուն հասնելու հայ մարդոց կամքին եւ վճռակամութեան:



ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ՝

# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

ՕՐՈՒԱՆ ԱՆԱԿՆԿԱԼԸ. Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԺՐԱՋԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԳԱԶԱՆՃԵԱՆԸ

**Մ**իջ-դիւանական 9-րդ խորհրդաժողովի աւարտին, Շաբաթ, 29 Հոկտեմբեր 2016-ի երեկոյեան, խորհրդաժողովին մասնակիցները ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի սկստական խումբի խոստման արարողութեան:

Արարողութիւնը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Նիկոսիոյ մարզադաշտին վրայ, մեծ թիւով ծնողներու եւ հարազատներու ներկայութեամբ: Ներկաներու շարքին էին կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Հ.Յ.Դ. Կիպրոսի կոմիտէի ներկայացուցիչ Սիմոն Այնէճեան, վաս-





տակաշատ սկաուտապետ Յարուսթին Անմահունի, Նիկոսիոյ եւ Լաոնաքայի հոգեւոր հովիւներ՝ Մոմիկ Քհնյ. Հապէշեան եւ Մաշտոց Քհնյ. Աշգարեան:

Մարգադաշտի մուտքին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներն ու միջ-դիւանական խորհրդաժողովի մասնակիցները դիմաւորուեցան կարգապահ շարքերով պատուի կանգնած սկաուտներով:

Բացումը կատարուեցաւ Կիպրոսի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշներուն մարգադաշտ մուտքով: Ապա, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ-ի շփորախումբին առաջնորդութեամբ տեղի ունեցաւ մասնաճիւղի սկաուտական խումբերու հանդիսաւոր տողանցք: Հնչեցին քայլերգները եւ բարձրացան Կիպրոսի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները:

Օրուան բացման խօսքը արտասանեց մասնաճիւղի փոխ խմբապետուհի քոյր Ժինա Նիկողոսեան: Ան ողջունեց հիւրերը Հ.Մ.Ը.Մ.-AYMA 77-րդ սկաուտական խումբի խոստման արարողութեան եւ ներկայացուց խոստման արարողութեան իմաստը միութենական կեանքին մէջ:

Ապա, խումբ մը գայլիկներ եւ արծալիկներ կարճ ընթերցումներով ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը՝ նորահաս սերունդներու դաստիարակութեան մէջ: Յաջորդեցին սկաուտական փոխանցումները, զնահատագիրներու եւ պէճերու յանձնումը:

Այս առիթով խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ-ի վարչութեան ատենապետ եղբ-

Յակոբ Գազանճեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ ներկայացուցիչներուն ներկայութիւնը կը հարստացնէ մասնաճիւղը եւ կը հունաւորէ անոր երթը՝ անսակարկ ծառայելու Աստուծոյ, ազգին ու հայրենիքին:

Եղբ. Գազանճեան նչեց, որ բազմաթիւ են անոնք, որոնք հերոսացած են իրենց քաջագործութիւններով ու կը վայելեն մեր ժողովուրդին համակրանքը, ըլլան անոնք Ֆետայիներ, քաղաքական գործիչներ թէ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարժումի հիմնադիրներ, որոնք 1918-ին դարձան մեր հաւատաւոր պահակները՝ մոխիրէն յարութիւն առնող ժողովուրդի մը տարագաւոր պաշտպանները:

«Տարիները գլտորեցան,- շարունակեց եղբ. Գազանճեան,- տարագիր հայր իր բախտը փնտուեց աշխարհի չորս ծա-

գերը, գաղութները արմատ նետեցին, նոր պատերազմներ ու արհաւիրքներ եկան ու արմատախիլ ըրին հայութիւնը, նոր տառապանքներ ստեղծուեցան ու կրկնակի տեղահանութիւն կատարուեցաւ: Մենք, մեր սկաուտական առաքելութեան գիտակից զինուորներս, այս օրերուն անդադար կը մտաբերենք Հալէպը ու աւերակոյտերու վերածուած Հալէպի մեր սկաուտներուն առաջ բարեւի կը կանգնինք, մեր զըլխարկները ցած պահելով կը յարգենք անոնց նահատակները, իսկ դրօշակը բարձր պահելով կը զնահատենք Հ.Մ.Ը.Մ-ականի վայել իրենց կեցուածքը, ու «Յառաջ նահատակ»ը կ'երգենք՝ մեր թմբուկները թնդացնելով ու իրենց կողքին ըլլալու լուրը աւետելով»:

Շարունակելով, եղբ. Գազանճեան







Հաստատեց, որ այսօր որեւէ ժամանակէ աւելի, սկառտտութիւնը հիմնական դեր ունի կատարելիք գաղութներու մէջ: Ժամանակները ցոյց տուին, որ սկառտտութիւնը լոկ փայլուն տարազաւորի մը ներկայացումը չէ հանրութեան, այլ՝ հանդէս գալն է նուիրումի զգացումով, հաւատարմութեան ապրումով, պատասխանատուութեան ոգիով, զոհողութեամբ գործելու եւ ծառայելու հրամայականով:

Իր խօսքին վերջին մասով եղբ. Գազանճեան նշեց. «Քիչ առաջ յիշեցի հալէպահայութեան անտանելի վիճակը: Այս առթիւ կ'ուզեմ փոխանցել մեր խմբապետական կազմին որոշումը՝ զօրակցութեան նամակ մը յղելու Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի սկառտտական խմբապետական կազմին: Կարգալէ առաջ նամակը, կը



ՃԱՆՉՆԱՆՔ

«ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ»  
ՇՔԱՆՇԱՆՈՎ  
ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱԼ  
ԷՂԲ. ՅԱԿՈՒԲ  
ԳԱԶԱՆՃԵԱՆ



Եղբ. Յակոբ Գազանճեան ծնած է Նիկոսիա, Կիպրոս: Ան իր նախնական կրթութիւնը ստացած է Նարեկ վարժարանին մէջ, իսկ երկրորդականը կատարած է տեղական վարժարանի մը մէջ: 1981-ին, համալսարանական իր վկայականը ստացած է micromechanics-ի մասնագիտութեամբ: Ապա, համալսարանական ուսումը կատարելագործած է Նիւշաթէի մէջ, Ջուիքցերիա:

Հ.Մ.Ը.Մ.ին մաս կազմած է փոքր տարիքէն: Եղած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի վարչական, իսկ վերջին շրջանին՝ ատենապետ:

Եղբ. Յակոբ 1984-ին մուտք գործած է Հ.Յ.Դաշնակցութեան շարքեր: Եղած է երիտասարդականի ու ապա՝ Հայ Դատի յանձնախումբի ատենապետ: 1999-2004 եւ 2008-2012 վարած է Հ.Յ.Դ. Կիպրոսի Կոմիտէի ներկայացուցիչի պաշտօնը: Եղած է «Արձագանգ» ամսաթերթի աշխատակից, նաեւ՝ փոխ խմբագիր: Մասնակցած է բազմաթիւ խորհրդաժողովներու, համագումարներու եւ Պատգամաւորական ժողովներու՝ Հայաստան, Պրիքսէլ, Լոնտոն, Լիբանան եւ այլն:

Ան Կիպրոսի Թեմի Ազգային Վարչութեան մարդահամարի յանձնախումբին ատենապետն է եւ Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղական խորհուրդի անդամ է:

հրաւիրեմ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբ Երզնանքին Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեանը, որպէսզի ստանայ նամակը»:

Նամակը ընթերցուեցաւ օրուան հանդիսավար քոյր Ժինա Նիկողոսեանի կողմէ, ապա յանձնուեցաւ եղբայր Քէօզկէրեանի (Նամակին բովանդակութիւնը տեսնել էջ 32):

Ստեղծուեցաւ բաւական յուզումնախառն մթնոլորտ, որմէ ետք իր սրտի խօսքը փոխանցելու հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

Եղբ. Մկրտիչեան ըսաւ, որ սկառտտական հանդիսութիւններ շատ եղած են Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան մէջ ու դեռ շատ պիտի ըլլան: Միութեանական հպարտութեան առիթներ շատ եղած են Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան մէջ ու դեռ շատ

կրնան ըլլալ: Բայց ինչ որ այսօր կը կատարուի տարբեր իմաստ եւ կարեւորութիւն ունի Հ.Մ.Ը.Մ-ին համար՝ իբրեւ համահայկական միութիւն, եւ Կիպրոսի հայութեան համար՝ իբրեւ ազգային կազմակերպ հաւաքականութիւն:

«Այսօր, Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ ընտանիքի բազմահազար անդամներու ներկայացուցիչներուն դիմաց, Հ.Մ.Ը.Մ-ի Կիպրոսի շրջանը անգամ մը եւս փաստը կը տայ իր կենսունակութեան եւ առողջութեան, երբ ոգեւորիչ նման ձեռնարկով մը սկառտտական հանդիսութիւն կը կազմակերպէ: Նորեր կ'ընդունի իր շարքերէն ներս, հիները կը գնահատէ՝ աստիճան մը բարձրացնելով եւ միութեան շարքերուն նոր աւելի ու եռանդ կը հաղորդէ: Այս արդէն միութեանական գործ չէ միայն, այլ՝ հայապահպանման աշխատանք է, ու իբրեւ



այդպիսին գնահատելի եւ ծափահարելի երեւոյթ է», ըսաւ ան:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ «Մեր կեանքի այս դժուարին օրերուն, նոր սերունդով զբաղիլը, պատանի-պարմանուհիները արդի հաղորդակցութեան միջոցներէն պահ մը անջատելը, ակումբ բերելը եւ ազգային-միութենական դաստիարակութիւն ջամբելը նուիրական գործ է, որուն համար այլ բառ կարելի չէ գտնել, եթէ ոչ՝ «Ապրի՛ք տղաք»: Ապրի՛ք, որպէսզի ձեզմով Հ.Մ.Ը.Մ.ը ապրի: Ապրի՛ք, որպէսզի ձեզմով ձեր ժողովուրդը ապրի, այն

կազմակերպուածութեամբ եւ աշխատանքով, որուն վկաներն ենք մենք այսօր:

«Դուք մեր պահեստի բանակն էք: Դուք մեր ապագան էք: Վաղը, միւս օր, դո՛ւք է որ պիտի գտնուիք մեր տեղ, այստեղ եւ ձեր գործով ու խօսքով պիտի խրախուսէք ձեզմէ կրտսերները, նորերը: Դուք է որ պիտի պատրաստէք նոր մարդու՝ մեր վաղուան գործին եւ յաջողութիւններուն համար:

«Ու այս է արդէն 98 տարեկան Հ.Մ.Ը.Մ.ին յարատեւութեան եւ յաջողութեան գաղտնիքը. միշտ նորեր պատրաստել եւ շարունակականութիւն ապահովել, որպէսզի 1918-ին սկսուած գործը կիսատ չմնայ, Հ.Մ.Ը.Մ.ի երթը կանգ չառնէ եւ շարունակուի, մինչեւ որ իր լրումին հասնի՝ մեր ազգային վախճանական նպատակներուն իրականացումով»:

Իր խօսքին աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը գեղեցիկ անակնկալ մը ներկայացուց ներկաներուն, երբ յայտնեց, որ Կեդրոնական Վարչութիւնը որոշած է միութեան «Ծառայութեան» նշանով պարգեւատրել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Ժրաջան ատենապետ եղբ. Յակոբ Գազանձեանը: Այս առիթով, ան ընթերցեց եղբոր ծառայանուէր կեանքին ամփոփ գիծերը (տեսնել առանձին) եւ շքանշանն ու հաստատագիրը յանձնեց եղբոր: Եղբ. Մկրտիչեան յատուկ յուշանուէրներ յանձնեց նաեւ կիպրահայ համայնքի երախտաշատ անդամներէն Արթո Դաւիթեանին, Նիկոսիոյ հոգեւոր հովիւին, Նիկոսիոյ Հ.Յ.Դ. կոմիտէի ներկայացուցիչին եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի վարչութեան: Նշենք, որ նմանօրինակ յուշանուէր մըն ալ յանձնուեցաւ կիպրահայ համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանին՝ իր տունը կատարուած պաշտօնական այցելութեան ընթացքին:

Խոստման արարողութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք պարգեւատրեալները ընդունեցին շնորհաւորութիւններ եւ անմուռանալի երեկոն աւարտեցին յիշատակի գեղեցիկ նկարներով:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԻՊՐՈՍԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՆԱՄԱԿԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի խմբապետական կազմին, Հալէպ, Սուրիա.

Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ,

Այս նամակը կը գրենք դժուար զսպելով մեր արցունքները: Ձեզի կը գրենք քաջալերելու, որպէսզի մնաք աննահանջ, հոգեկանով զօրաւոր, քանի լոյսն է որ կը յաջորդէ խաւարին:

Դուք՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներ, կը մարմնաւորէք մեր միութիւնը, Սուրիոյ աւազին մէջ թաղուած մեր հայրերու աճիւններուն սրբութիւնը վկայ: Ձեր երգերով ու վերքերով դուք դարձած էք մեր սեւեռակէտը, որովհետեւ հակառակ մահուան ու քանդումին, հակառակ կոտորածին ու կրակին, տակաւին պատնէշի վրայ էք: Յարգա՛նք Ձեզի:

Ե՛հշդ է, որ տերեւաթափ է, բայց կանաչ պահեցէք ձեր հոգիները: Այսօր մեր խոստման արարողութեան առիթով մենք պիտի վերանորոգենք մեր ուխտը, իսկ նորագիրները, իրենց աչքերը յուսավառ, պիտի առնեն իրենց առաջին քայլը: Մենք իրենց պիտի վստահինք ջախը, ստեղծելով երկնային կամուրջ մը, որ լուսաշող է, բացուած ապագային:

Դուք, իբրեւ հալէպահայութեան պահակներ, հակառակ ձեր դառն ճակատագրին, մի՛ հրաժարիք ձեր երազներէն, մի՛ պակսեցնէք զանոնք, վերջապէս դո՛ւք էք մտքի ու հոգիի կարգապահութեան արտայայտիչները, մանաւանդ մատղաշ սերունդին համար: Ծնունդ տուէք յոյսին, հպարտութեամբ բարձր պահեցէք մեր դրօշը:

Ապագան միասնաբար կերտելու յանձնառութեամբ յառաջանանք, չտկարանանք մեր հաւատքին մէջ: Ծգնաժամը կը պահանջէ լայնօրէն արտայայտել «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի ոգին: Մնալով ամրակուռ բերդ, խրախուսուի՛նք եւ քաջալերուի՛նք մեր գաղափարախօսութեան ընձեռած կարելիութիւններէն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԻՊՐՈՍԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ



**VISA**

# THE FIRST REAL MOBILE PAYMENT

ANDROID APP ON  
Google play

## ByblosPay Application

ByblosPay, the first mobile payment application in Lebanon based on the Host Card Emulation (HCE) technology, transforms your Smartphone into a payment device without the need for modified SIM cards, sticky banking cards, or any other hardware. Download the App from Google Play store, add as many Byblos Bank Visa credit cards as you want, and start experiencing real mobile payment securely at merchants equipped with Visa contactless Point of Sales (POS) in Lebanon or abroad.



**BYBLOS BANK**

(01) 20 50 50 . [byblosbank.com](http://byblosbank.com)



# «ՄԱՐՉԻԿ»Ի 35-ԱՄԵԱԿԸ ԿԸ ՆՇԵՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՄՆԱՃԻԲՂԸ...

## Թղթակից Վիեննա

**10** Դեկտեմբեր 2016-ին, Վիեննայի Հայ Առաքելական եկեղեցու սրահին մէջ կազմակերպուած հանդիսութեամբ մը, Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղը արժանավայել կերպով նշեց միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի հիմնադրութեան 35-ամեակը:

Սկսուածները շքերթով սրահ մուտք

գործելէ ետք, Հայաստանի քայլերգով հանդիսութիւնը պաշտօնապէս բացուած յայտարարուեցաւ: Ապա, մէկ վայրկեան յոտնկայս լուսթեամբ ներկաները յարգեցին յիշատակը վերջերս մահացած, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Բիւզանդ Թորիկեանին:

Բացման խօսքով հանդէս եկաւ եղբ. Յակոբ Սահակեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ «Մարզիկ»ի առաքելու-

թեան: Քոյր Շաղիկ Շատոյեանի հանդիսավարութեամբ յաջորդաբար տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր, կատարողութեամբ մասնաճիւղի ըսկաուտներուն: Գեղարուեստական յայտագիրը ընդգրկեց երգ, նուագ եւ ասմունք: Խումբ մը սկաուտներ սահուն առողանութեամբ «Մարզիկ»ի հին ու նոր թիւերու նիւթերէն հատուածներ ընթերցեցին: Այս առթիւ ներկաներուն ցուցադրուեցաւ «Մարզիկ»ի 35-ամեայ երթը ներկայացնող տեսերիզը:





Հանդիսութեան աւարտին, վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Գրիգոր Հալլանեան, որ անդրադարձաւ ընթացքանութեան դերին ու «Մարզիկ»ի միջոցով նորահաս սերունդներուն առողջ ու հայեցի դաստիարակութիւն ջամբելու անհրաժեշտութեան:

Հանդիսութեան պաշտօնական բաժինը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք հանդիսականները առիթը ունեցան «Մարզիկ»ի 35-ամեայ բերքին մօտէն ծանօթանալու եւ հիւրասիրուելու:



## ...ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀՈՒԱՆՏԱՅԻ ԱՌՆՀԵՄ ՄԱՄՆԱԾԻՒՂԸ

### Թղթակից ԱՌՆՅԵՄ

6 Նոյեմբեր 2016-ը Հ.Մ.Ը.Մ.ի Հոլանտայի Առնհեմի մասնաճիւղին համար ուրախութեան օր մը եղաւ: Այդ օր կատարուեցան սկաուտական փոխանցման արարողութիւններ՝ մոկլի, արծուիկ վոհմակներուն եւ արի խմբակին մէջ: Սկաուտական օրէնքներու համաձայն, եղբ. Բաֆֆի Փոլոյեան եւ քոյր Նայիրի Արսլանեան իրենց խոստումը վերանորոգելով ստացան խմբապետի աստիճան:

Այս առիթով խօսք առաւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Լիպարիտ Սիմոնեան եւ սկաուտական աստիճան ստացող քոյրերն ու եղբայրները շնորհակցելով՝ բեղուն գործունէութիւն մաղթեց անոնց, միութեան նշանաբան «Բարձրացիր-բարձրացուր»ի կամքով: Եղբ. Սիմոնեան իր խօսքին մէջ անդրադարձաւ նաեւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի 35-ամեակին եւ նշեց անոր դերն ու առաքելութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական խօսքին տարածման եւ հայանուէր գործին ծանօթացման մէջ: «Մարզիկ»ի 35 տարւան անխափան հրատարակութիւնը դրուատելով, եղբ. Սիմոնեան հայ մամուլին եւ յատկապէս «Մարզիկ»ին տէր կանգնելու կոչ ուղղեց ներկաներուն:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՄՆԱԾԻՂԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

### Թղթակից ԼԱԹԱՔԻԱ

**Հ**ՄԸՄ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ եւ Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 10 Դեկտեմբեր 2016-ի երեկոյեան ժամը 7-ին, Ազգ. Նահատակաց վարժարանի «Արարատ» սրահին մէջ պաշտօնական հանդիսութեամբ մը նշուեցաւ ՀՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղին հիմնադրութեան 90-ամեակը, ներկայութեամբ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բաֆֆի Կէվօղյանեանի, ՀՄԸՄ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեանի, Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Արմէն Քէօզկէրեանի, Մինաս Պալեանի եւ պատասխանատու այլ եղբայրներու եւ քոյրերու:

### 90-ԱՄԵԱԿԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

90-ամեակի հանդիսութիւնը նախորդեց մասնաճիւղի ըՄ-կառուտ. Խորհուրդին եւ խմբապետական կազմին կողմէ պատրաստուած գեղեցիկ ցուցահանդէսին բացումը: ըՄ-կառուտական կապերով պատրաստուած կամարին տակէն անցնելով, ներկաները հաճոյքով ըմբոշխնեցին մասնաճիւղին 90-ամեայ գործունէութիւնը ներկայացնող պատկերները, վերանորոգեցին հինը նորին կամրջող իրենց յիշատակները, բարձր գնահատելով ներկայացուած աշխատանքը:

Ցուցահանդէսին աւարտին, ՀՄԸՄ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Արմէն Քէօզկէրեան գնահատեց բոլոր այն ՀՄԸՄ-ականները, որոնց թափած քրտինքի կաթիլները իւր դարձան Լուսաւորիչի ճառագայթող կանթեղին, յաւիտեան լուսաւորելու համար ՀՄԸՄ-ի ճամբան:

Ապա, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան հաստատեց, որ 90 տարիներու ընթացքին սերունդները մկրտուեցան ՀՄԸՄ-ի աւազանին մէջ, հաղորդուեցան ՀՄԸՄ-ի գաղափարաբանութեամբ եւ բարձր պահեցին միութեան դրօշը ու դրօշաբարձի նման փոխանցեցին իրենց յաջորդող սերունդներուն:



**ՅՈՐԲԵԼԵՆԱԿԱՆ  
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ**

Ցուցահանդեսն էտք տեղի ունեցաւ յոբելենական հանդիսութեան պաշտօնական բացումը՝ Սուրիոյ եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայքերգներով:

Բացման խօսք արտասանեց մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Յարօ Տէիրմէնճեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ մասնաճիւղի հիմնադրութեան պատմութեան եւ հաստատեց, որ 90-ամեայ այս մասնաճիւղը երիտասարդի ոգիով գինուած՝ միշտ պիտի մնայ կայտառ ու յարատեւող:

Գեղարուեստական կոկիկ յայտագիրով ելոյթ ունեցաւ տիկ. Սեւան Թիւթիւնճեան-Տէիրմէնճեան, որ դաշնամուրով ներկայացուց Կոմիտասի «Գարուն ա» ստեղծագործութիւնը: Ապա, սկառտական եռեակ մը յատկանշական ոճով ներկայացուց Պետրոս Հաճեանի «Ոտքի Հ.Մ.Ը.Մ-ը կ'անցնի» գրուածութիւնը: Քոյր Ալին Հապոյեան-Սիրանոսեան հանդարտ երաժշտութեան ընկերակցութեամբ ասմունքեց Գէորգ Էմինի «Մենք» քերթուածը, որմէ ետք Սօսի Պետուրեան մեներգեց «Գնա՛ կուռնկ»ը, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Սեւան Տէիրմէնճեանի: Գեղարուեստական յայտագրի աւարտին, խումբ մը քոյրեր, եղբ. Րաֆֆի Նազարեանի ցուցմունքներով, հեզաճկուն կերպով ներկայացուցին նազպար մը:

Օրուան բանախօսն էր Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան նշեց, թէ 90-ամեակի տօնակատարութիւնը յարգանքի տուրքն է մասնաճիւղի շարքերուն մէջ ծառայած այն բոլոր Հ.Մ.Ը.Մ-ական ղեկավարներուն, մարզիչներուն եւ սկառտ խմբապետներուն, որոնք յարատեւ ճիգերով սերունդներ դաստիարակեցին, ոգի ու շունչ դրին իրենց նուիրումին մէջ, անխաթար պահելով Հ.Մ.Ը.Մ-ի սրբազան առաքելութիւնը: Եղբ. Մկրտիչեան կարեւորութեամբ ընդգծեց Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի հիմնադիր սերունդին կատարած գնահատելի աշխատանքը, որուն շնորհիւ ծովեզերեայ այս շրջանին մէջ հիմը դրուեցաւ հայ մարմնակրթական շարժումին, համախմբելու համար մեր ժողովուրդի գաղթական զաւակները: Ան յիշեց 90 տարիներու ընթացքին մասնաճիւղին ունեցած մարզական նուաճումները եւ շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի 98-ամեակը եւ Լաթաքիոյ մասնաճիւղին հիմնադրութեան 90-ամեակը լաւագոյն առիթներն են յիշելու անցեալը, գնահատելու ներկան եւ խոհեմ կերպով ծրագրելու մեր ապագան: Վերջապէս, ան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի յաջողութեան գաղտնիքներէն է իր բարոյական դրամազրուիւր եւ տարիներու վարկը, որոնց տոկոսներն են, որ կու գան խտացնելու անոր շարքերը (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 4-6):

Իր խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեանը, որպէսզի ստանձնէ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ Հայկալի շրջանէն եղբ. Զաւէն Տէրվիչեանին շնորհուած Հ.Մ.Ը.Մ-ի «Արտակարգ» պատանշանը: Եղբ. Զաւէն առողջական պատճառներով բացակայ էր հանդիսութենէն: Այնուհետեւ, եղբայրը յոբելեար



մասնաճիւղի ատենապետին փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան յուշանուէրը:

Հանդիսութեան փակման խօսքով, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիւղին 90-ամեայ գործունէութիւնը նշելով, որ ան իր հիմնադրութեան օրէն դարձաւ մարդակերտման մեծ դպրոց եւ, եկեղեցուց ու դպրոցի կողքին, հանդիսացաւ ազգային դարբնոց:

Ապա, նկատի ունենալով որ 2016 տարին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ հռչակուած է «Ծառայութեան տարի», եղբ. Քէօզկէրեան Սուրիոյ Շրջանային Վարչութեան կողմէ պատրաստուած ծառայութեան յուշանուէրներով պարգեւատրեց Լաթաքիոյ մասնաճիւղի շարքերուն մէջ առնուազն 25 տարի ծառայութիւն ունեցող 41 քոյր-եղբայրներ: Շրջանային Վարչութիւնը նոյն յուշանուէրով պատուեց նաեւ Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեանը, զայն հռչակելով Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի հոգեւոր հովիւ:

Հանդիսութեան աւարտին, քահանայ Տօր գրաւոր խօսքը ընթերցեց քոյր Ռիթա Կաղեան-Տիկալիքեան:

Արժանապատիւ քահանայ հայրը իր եզրափակիչ խօսքով կը շեշտէր Հ.Մ.Ը.Մ-ի ունեցած դերը՝ հայ մարդու քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութեան ջամբուումին մէջ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի 98-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ՔԵՍԱՊԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ 23-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ

## Թղթակից ԲԵՍԱՊ

**Ն**ախաձեռնություններով Հ.Մ.Ը.Մ. Սուրիոյ Շրջանային Վարչություն, կազմակերպություններ Հ.Մ.Ը.Մ. Քեսապի մասնաճիւղի վարչություն, Կիրակի, 11 Դեկտեմբեր 2016-ին, «Մասնաճիւղի» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 98-ամեակին եւ Քեսապի մասնաճիւղի հիմնադրութեան 23-ամեակին նուիրուած հանդիսութիւն, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Րաֆֆի Կէփօղլանեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեանի, Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Արմէն Քէօզկէրեանի եւ տղթ. Մինաս Պալեանի:

### ԲԱՅՈՒՄԸ

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով:

Բացման խօսքը ներկայացուց Սկաուտ. Խորհուրդի ատենապետ քոյր Մարինա Բէնդէգեան-Լընդեան: Ան մասնանշեց Հ.Մ.Ը.Մ.ի կարեւոր դերակատարութիւնը հօգի հայութեան կերտման մէջ, միշտ կարգախօս ունենալով «Բարձրացիր՝ բարձրացուր» նշանաբանը, կրթելով հայ պատանին, պարմանուհին, երիտասարդը եւ ապագայ սերունդները, զարգացնելով անոնց մէջ հոգեմտաւոր արժէքները, որպէսզի դառնան յաջող եւ յանձնառու քաղաքացիներ:

Այնուհետեւ, արի-արենոյ միաւորի քոյրերու եւ եղբայր-



Ներու կատարողութեամբ տեղի ունեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր:

### ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան: Ան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի մասնաճիւղը անցնող տարիներուն դարձաւ հայ պատանին ու երիտասարդին կազմաւորման մարզական, սկաուտական ու մարզակերտման մեծ դպրոց: Մասնաճիւղին մարզիկները իրենց յաղթանակներով, պայքարներով, սկաուտական բանակումներով ու տողանցքներով պանծալի էջեր նուիրեցին Քեսապի հայ գաղութին:

Իր խօսքին աւարտին, եղբ. Քէօզկէրեան բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը եւ Կեդրոնական Վարչութեան անդամ





եղբ. Բաֆֆի Կէլօղլանեանը Հ.Մ.Ը.Մ.ի 98-ամեակին եւ «Ծառայութեան տարուան» առիթներով ծառայութեան յուշանշաններով պարգեւատրելու 14 քոյրեր ու եղբայրներ (երեքը յետ մահու), որոնք երկար տարիներու ծառայութիւն ունեցած են Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ եւ հիմնադիր սերունդի հետքերով պատրաստած են նուիրեալ սերունդներ, սկստական տարագով արի-արենոյձներ, երէց-պարմաններ եւ շեփորախումբի անդամներ:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՄՐՏԻ ԽՕՍՔԵՐԸ**

Այս առթիւ իրենց սրտի խօսքերը փոխանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եղբայրները: Անոնք գնահատեցին օրուան հանդիսութիւնը պատրաստած քոյրերն ու եղբայրները եւ շնորհաւորական մաղթանքներով յարատեւ ուժ եւ կորով մաղթեցին պարգեւատրեալներուն:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ «Պահպանիչ»ով:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՍՆԱԾԻՂԸ ԿԸ ՆՇԷ «ՄՈԿԼԻԻ ՕՐ»Ը

**Թղթակից ԼԱԹԱՔԻՍ**

**Հ.**Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ Սկստու. Խորհուրդին եւ խմբապետութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 4 Դեկտեմբեր 2016-ին, պաշտօնական հանդիսութեամբ մը նըշուեցաւ «Մոկլիի օր»ը:

Հանդիսութիւնը սկսաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով, որմէ ետք Սկստու. Խորհուրդի անդամ քոյր Մարալ Գասարճեան-Ճերմակեան կատարեց բացման խօսքը: Ապա, խումբ մը գայլիկներ ներկայացուցին կենդանի պատկեր մը:

Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիւղի Սկստու. Խորհուրդի ատենապետ եղբ. Բաֆֆի Գոչեան, մասնաճիւղի խմբապետ եղբ. Սաբո Քէչէճեան եւ մասնաճիւղի Աքելյա եղբ. Բաֆֆի Նազարեան գայլիկներուն յանձնեցին Մոկլիի հաստապիրները: Այնուհետեւ, բեմ հրաւիրուեցաւ Սուրիոյ Շրջանային Խմբապետ եղբ. Եղիա Քիլճեան, որ խմբապետի աստիճան փոխանցեց եղբ. Բաֆֆի Նազարեանին, իսկ փոխ խմբապետի աստիճան՝ եղբ. Վարուժ Թուլումճեանին:



Այս առթիւ խօսք առնելով եղբ. Քիլճեան փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Սկստու. Խորհուրդին բարեմաղթութիւններն ու շնորհաւորութիւնները՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիւղին հիմնադրութեան 90-ամեակին առիթով: Ան շեշտեց նաեւ Մոկլի կարգի հաստատագիրներու տուչութեան դերն ու կարեւորութիւնը գայլիկարձուիկներու դաստիարակութեան մէջ:



Եղբոր խօսքէն ետք, «Նարնջագոյն» խումբի քոյր-եղբայրները հանդէս եկան եւրոպական պարով մը, իսկ «Կարմիր» խումբէն կարգ մը գայլիկ-արձուիկներ ներկայացուցին ասմունք, գաւազանի մարզանք եւ բուրգ: «Կապոյտ» խումբի գայլիկ-արձուիկները ներկայացուցին հայկական պար մը: Խումբ մը գայլիկ-արձուիկներ ներկայացուցին խարուկահանդէսի խրախճանք մը:

Աւարտին, Արտակ Աբղ. Արապեան իր սրտի խօսքը փոխանցեց եւ «Պահպանիչ»ով օրուան հանդիսութիւնը փակեց:



Հ.Մ.Ը.Մ.Ի 98-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ» ԱՌԻԹՆԵՐՈՎ՝

# ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՐԳԱՆՔԻ ՈՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՀԱԷՊԻ ՄԷՋ

## Թղթակից ՀԱԼԷՊ



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հայկ. մասնաճիւղի վարչութեան

կազմակերպութեամբ, միութեան 98-ամեակին եւ «Ծառայութեան տարուան» առիթներով տեղի ունեցաւ յարգանքի եւ գնահատանքի հանդիսութիւն մը, որուն ընթացքին պարգևատրուեցան յիսուն տարիքը բոլորած եւ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ 25 տարիներու ծառայութիւն ունեցող քոյրերն ու եղբայրները:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ 17 Դեկտեմբեր 2016-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանեկան պարտէզին մէջ, ներ-

կայութեամբ թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, պատկան մարմինի ներկայացուցիչին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Հայկ. տեղական եւ մասնաճիւղի վարչութիւններուն, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին ու համակիրներուն:

Բացումը կատարուեցաւ «Յառաջ

նահատակ» քայլերգով, զոր փողի վրայ մատուցեց Հայկ. մասնաճիւղի խմբապետ եղբ. Յակոբ Ուրիշիկեան:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հայկ. մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Գէորգ Մաւեան: Բարի գալուստ մաղթելով ներկաներուն, եղբայրը նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Հայկ. մասնաճիւղը, իբրեւ ամրապինդ ու անխոնջ կամքով աշխատող մասնաճիւղ, հաւաքուած է բոլորին հարազատ Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզին մէջ, փաստելու համար, որ հակառակ երկրի դժուարին պայմաններուն, «Մի՛շտ պատրաստ» կը մնայ իր առաքելութեան եւ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով բազմաթիւ ամեակներ կը տօնէ, միութեան եւ հայ ազգին դրօշը բարձր պահելով:

Հ.Մ.Ը.Մ.ի Հայկ. մաս-



նաճիւղի Սկաուտ. Խորհուրդէն քոյր Ծովիկ Թէփիրճեան կատարեց օրուան բեմավարութիւնը, իսկ քոյր Դալար Կիրակոսեան արտասանեց իմաստալից նշանախօսքեր եւ յայտարարեց տեղւոյն վրայ կատարուած սրտաբուխ նուիրատուութիւնները:

«Լեւոն Աբգարեան» արի-արենոյշ միաւորէն քոյր Վանա Փաթանեան եւ քոյր Լիլիթ Նալպանտեան ասմունքեցին Միքայէլ Նալպանտեանի «Ազատութիւն» բանաստեղծութիւնը:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան: Ան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի 98 տարիները կը կազեն կազմակերպումի, մաքառումի եւ ծրագրուած աշխատանքի պատկառելի իրագործումներու շրջան մը, որուն յոբելեանով մը անդրադառնալը նուազագոյնը պարտք նկատեց ան:

Իր խօսքին մէջ, եղբ. Քէօզկէրեան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան եւ ի մասնաւորի Հալէպի մասնաճիւղին գործունէութեան մասին, նշելով որ Հալէպի Հ.Մ.Ը.Մ-ը դարձաւ հայապահպանման առաջին միջնաբերդը, ազգային դարբնոցը, հայ եկեղեցիին եւ հայ դպրոցին կողքին: Ան հանդիսացաւ հայ պատանիին ու երիտասարդին կազմաւորման մարզական, սկստական ու մարդակերտման մեծ դպրոցը:

Եղբ. Քէօզկէրեան հաստատեց, որ 1925-էն սկսեալ, 91 տարիներու ընթացքին Հալէպի Հ.Մ.Ը.Մ-ը իր ազգաշունչ միջնորդարտով եւ ժողովրդանուէր ծառայութեամբ պատրաստեց սերունդներ,



որոնք այսօր աշխարհի զանազան անկիւններուն մէջ ղեկավար դիրքերու վրայ կը գտնուին եւ իրենց ձեռքերուն մէջ առած են աշխարհատարած մեր ժողովուրդին ճակատագիրը:

Եղբ. Քէօզկէրեան հանդիսութիւնը նկատեց յարգանքի օր մը Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներուն, վաստակաւոր ու համեստ ղեկավարներուն, վարչականներուն, մարզիչներուն, մարզիկներուն, սկստներուն եւ խմբապետներուն համար, որոնք հաւատաւոր ու յարատեւ ճիգերով սերունդներ պատրաստեցին իրենց լաւագոյնը տալով եւ միութեան առաքելութեան ծառայելով:

Այս առթիւ, եղբ. Քէօզկէրեան յայտնեց Սուրիոյ Շրջանային Վարչութեան մտայղացումը՝ «Ծառայութեան տար-

լան» եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 98-ամեակի զոյգ առիթներով գնահատելու եւ պատուելու 50 տարիքը բոլորած եւ Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ 25 տարիներու ծառայութիւն ունեցող բազմապատակ քոյրերն ու եղբայրները: Առ այդ, ան բեմ հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, Շրջանային Վարչութեան ատենադպրուհի քոյր Գարօլին Քիւրքեան-Առոյեանը եւ Հալէպի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Գէորդ Մաւեանը՝ կատարելու պարգեւատրումը:

31 քոյրեր եւ եղբայրներ պարգեւատրուեցան ծառայութեան յուշանուէրով: Շրջանային Վարչութեան կողմէ եղբ. Քէօզկէրեան երախտագիտական զգացումով յուշանուէր մըն ալ յանձնեց Սրբազան Հօր:





Այնուհետև, Առաջնորդը փոխանցեց իր սրտի խօսքը: Ան հոգեկան մեծ հրճուանքով շնորհակալեց ծառայութեան յուշանուէրով պարգևատրուած Հ.Մ.Ը.Մ.ականները, որոնք մեզի յիշե-

ցուցին այն իրականութիւնը, թէ Հ.Մ.Ը.Մ.ը իւրայատուկ դպրոց մը, որուն անդամակցող քոյրերն ու եղբայրները կը պատրաստուին ազգի ծառայութեան: Հ.Մ.Ը.Մ.ի 98-ամեայ երթը շնորհա-

ւորելով, Առաջնորդը հաստատեց, որ 100-ամեակին մեր ժողովուրդի կեանքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ը պիտի մնայ գործող այն կազմակերպութիւնը, որ հայուն համար, Հայաստանին համար եւ իր ապրած սուրիական հայրենիքին համար իր կեանքն ու վաստակը պիտի տրամադրէ ամբողջանուէր կերպով:

Առաջնորդ Սրբազանին խօսքէն ետք, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 98-ամեակի կարկանդակի հատում:

Ընթրիքի ջերմ սեղաններու շուրջ ներկաները բաժնեկցեցան իրենց ուրախութիւնը: Եղբ. Յակոբ Ուրիշիկեան փողի վրայ ներկաներուն մատուցեց շարք մը եղանակները: Ապա, Լիւսի Յովհաննէսեան եւ Ճորճ Գալայճեան ազգային-յեղափոխական երգերով ճախցուցին միջնորդը:

Երեկոն փակուեցաւ «Արիւնոտ դրօշ» երգով:

## «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՄՆ՝ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ԶԱԿԵՆ ՏԵՐՎԻՇԵԱՆԻ

Թղթակից  
ՀԱԼԷՊ

22

Դեկտեմբեր 2016-ի 11-12-ը, Հ.Մ.Ը.Մ.ի Ծրջանային Սկառու. Խորհուրդին եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան եւ Սկառու. Խորհուրդին ընկերակցութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Ծրջանային Վարչութիւնը այցելեց վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Զաւէն Տէրվիշեանի բնակարանը եւ զայն պարգևատրեց միութեան «Արտակարգ» շքանշանով:



Հանդիպումին բացումը կատարուեցաւ «Ով հայ արի» քայլերգով: Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Ծրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան խօսք առնելով յայտնեց, թէ Սուրիոյ Ծրջանային Վարչութիւնը գեղեցիկ մտադրեցումը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 98-ամեակին եւ «Ծառայութեան տարուան» գոյգ առիթներով պարգևատրել եւ գնահատել եղբ. Զաւէն Տէրվիշեանը, նկատի ունենալով եղբոր

միութենական 60 տարիներու ծառայութիւնը, իբրեւ խմբապետ, Սկառու. Խորհուրդի անդամ, մարզանքի ուսուցիչ եւ վարչական:

Եղբ. Քէօզկէրեան Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները փոխանցեց եղբ. Տէրվիշեանի՝ անոր ցանկալով քաջաուղղութիւն եւ արեւշատ

օրեր: Ապա, ան փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ եղբոր շնորհուած «Արտակարգ» պատուանշանը՝ առ ի երախտագիտութիւն եւ գնահատանք եղբոր վաստակին: Այնուհետև, կատարուեցաւ կարկանդակի հատում:

Եղբ. Զաւէն մեծապէս զգացուած՝ շնորհակալական խօսքերով իր մեծ սէրն ու յարգանքը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

Հանդիպումը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՆՆՋԵՑԵԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

Թղթակից  
ԳԱՄԻՇԼԻ

**Կ**իրակի, 27 Նոյեմբեր 2016-ին, Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադիրներուն եւ հին ու նոր ննջեցեալներուն: Արարողութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչու-



թեան անդամ եղբ. Զաւէն Գասպարեան, մասնաճիւղի վարչութիւնը, Սկառուտ. Խորհուրդը, աստիճանաւորական կազմերը, ինչպէս նաեւ՝ Գամիշլիի կիրակնօրեայ դպրոցին աշակերտներն ու ուսուցչուհիները:



Պատարագը մատուցեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Պսակ Քհնյ. Պէրպէրեան: Ան իր քարոզին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 98-ամեակին եւ ծառայութեան գաղափարին:

Աւարտին, եկեղեցւոյ գաւիթին մէջ հաւաքուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն իր սրտի խօսքը փոխանցեց եղբ. Զաւէն Գասպարեան: Ան լուսարձակի տակ առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Գամիշլիի մասնաճիւղի հիմնադրութեան 85-ամեակը՝ հաստատելով որ երկար տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ականը տեւաբար մնացած է պատնէշի վրայ՝ ծառայելու իր ժողովուրդին եւ պատրաստելու ազգային գաղափարով տոգորուած սերունդներ:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՇԵՓՈՐԱԽՈՒՄԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԵՐԿՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄ ՀԱԼՔՊԻ ՄԷՋ

Թղթակից  
ՉԱԼՔՊ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Հայկալի մասնաճիւղի շեփորախումբի յանձնախումբին կազմակերպութեամբ, Մխիթարեան վարժարանին մէջ տեղի ունեցաւ երկօրեայ բանակում մը, որուն մասնակցեցան շեփորախումբի անդամ 42 քոյրեր եւ եղբայրներ:

Բանակումին պատասխանատուն էր յանձնախումբի ատենապետ եղբ. Վարդան Լախոյեան:

Բանակումին ընթացքին քոյրերն ու եղբայրները կատարեցին փորձեր, ունեցան դասախօսութիւններ եւ խաղեր:

Հոսակ, «Յտեսութիւն» երգով անոնք խոստացան կրկին հանդիպիլ՝ աւելի մեծ թիւով:





# ՀԱՅԿ ԴԵՄՈՅԵԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՄՊՈՐՏԸ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՄԻՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՄԻՆՈՒՄ» ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԵՉՕՆԸ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ

Մ. ք. ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

# 19

Հոկտեմբեր 2016-ի երեկոյեան, մեծ թիւով ընթերցասէր Հ.Մ.Ը.Մ. աւանդուհարց, համակիրներու եւ հիւրերու մասնակցութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի «Գէորգ Անտոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ գինեձօնը Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Հայկ Դեմոյեանի հեղինակած «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան Կայսրութիւնում» հատորին: Ներկայ էին թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը ներկայացնող, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Կոմիտաս Ա. Քհնյ. Թորոսեան, Լոս Անճելըսի մօտ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Արմեյլա Շաքարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ՝ Վիգէն Դաւթեան եւ Օշին Փիրումեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Կարօ Իսթէնճեան, հատորին ներկայացումը կատարող դոկտ. Կարօ Մոմճեան, գիրքի հեղինակ Հայկ Դեմոյեան եւ այլ հիւրեր:

Ձեռնարկին բացումը կատարուեցաւ դրօշակի արարողութեամբ, որուն յաջորդեց քայերգներու կատարումը՝ Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի խմբապետուհի քոյր Իվանա Գրիգորեանի կողմէ:

Ձեռնարկին հանդիսավարութիւնը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամ քոյր Մարօ Քէչիչեան: Ան բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն ըսաւ. «Ամէն անգամ, երբ մարմնամարզի մասին հրատարակու-



թիւն մը լոյս տեսնէ, Հ.Մ.Ը.Մ.ը պատրաստակամութիւն կը յայտնէ զայն ներկայացնելու ընթերցասէր հասարակութեան, որովհետեւ «Առողջ միտքը առողջ մարմինն է մէջ» կարգախօսին հաւատարմով, մտային զարգացումէն անկախ, Հ.Մ.Ը.Մ.ը յատուկ կարեւորութիւն կու տայ ֆիզիքական դաստիարակութեան, որուն լաւագոյն վիճակը շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին կազմակերպած շարունակական հարուստ մարզախաղերն են: Ուրախ ենք, որ նման հրատարակութիւններու հեղինակները եւս, Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն գիտակցելով, նոյն ակնկալութիւնը կ'ունենան անոր մարմիններէն»: Քէչիչեան ուրախութիւն յայտնեց, որ հատորին հեղինակը ներկայ է ձեռնարկին:

Գեղարուեստական բաժինով, քյարինէթով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան նուագախումբի անդամներէն եղբ. Բաֆֆի Աւագեան, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի Պրըպէնքի «Սիփան» մասնաճիւղի արեւոյշներու Վարիչ Առաջնորդ քոյր Արինա Մկրտչեան ասմունքեց Պարոյր Սեւակի «Մարդ էլ կայ,

մարդ էլ» բանաստեղծութիւնը:

Դեմոյեանի հատորին ներկայացումը կատարեց պատմաբան դոկտ. Կարօ Մոմճեան, որ հանրութեան ծանօթ է իր ազգային, զրական, կրթական, ստեղծագործական, դաստիարակչական, հեղինակային եւ մանաւանդ՝ պատմական կարեւորութիւն ներկայացնող ուսումնասիրութիւններով: Ան իր դոկտորական աստիճանը ստացած է UCLA համալսարանէն՝ մասնագիտանալով պատմաբանական գիտութեանց մէջ: Հեղինակն է Հայոց պատմութեան դասագիրքերու շարքի մը՝ «Մեր պատմութիւնը» խորագիրով: Բազմաթիւ մրցանակներու արժանացած դոկտ. Մոմճեան հեղինակած է նաեւ ակադեմիական հատորներ եւ 20-է աւելի յօդուածներ: Ան վերջերս սրբագրութիւնը կատարած է Հ.Մ.Ը.Մ.ի ժողովավարական կանոններու եւ կանոնագրի թարգմանութեանց:

Յիշեցնելով, թէ մարմնամարզը քիչ ուսումնասիրուած նիւթերէն մէկն է մեր ընդհանուր պատմագրութեան մէջ, Մոմճեան հաստատեց. «Մարմնամարզը



ինքնուրույն կերտումի հիմնական միջոցն է, որ շատ կարեւոր է ազգի մը երիտասարդութեան մարտունակութեան համար եւ որուն անտեսումը սխալ է»։ Ապա, հպանցիկ ակնարկ մը նետելով Օսմանեան կայսրութեան փոքրամասնութիւններու (հայեր, յոյներ) միջոցով 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբը մարմնամարզի ոլորտին զարգացման, ան շեշտեց կարեւորութիւնը Հայկ Դեմոյեանի «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» հատորին։ Ըստ Մոմճեանի, 12 գլուխներէ բաղկացած հատորին մէջ կը ներկայացուին։-

- Մարմնամարզի երեւոյթին պատմական հորովոյթը՝ Պոլսոյ, Ջմիւռնիոյ, Կիլիկիոյ եւ Օսմանեան կայսրութեան ներքին նահանգներուն մէջ։

- Մարմնամարզի ռահվիրաներ Շաւարշ Քրիսեան, Գրիգոր Յակոբեան, Վահան Զերազ, Մկրտիչ Մկրեան եւ ուրիշներ։

- 1911-1914՝ Հայկական ողիմպիական խաղերը, որոնք Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ կը շարունակուին «Նաւասարդեան» անուան տակ։

- 1912-ին, հայ մարզիկներ Վահրամ Փափագեանի եւ Մկրտիչ Մկրեանի մասնակցութիւնը միջազգային ողիմպիական խաղերուն։

- Հայոց Յեղասպանութեան հետեւանքով այս բնագաւառին ցաւալի կորուստը եւ անոր վերընծիւղումը որբանոցային միջոցով մէջ եւ, վերջապէս, 1918-1920 մարմնամարզի վերակազմաւորումը եւ սկստութեան ծաղկումը՝

Հ.Մ.Ը.Մ-ի եւ այլ մարմնակրթական միութիւններով։

Սրտի իր խօսքը փոխանցեց նաեւ մարմնամարզի ջատագով տոքթ. Շաւարշ Քրիսեան, որ հաստատեց հատորի մը մէջ համադրած է իր մեծ հօրեղբօր, Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիր, նահատակ Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ» թերթին հրատարակութիւնները։ Քրիսեան առիթը պատեհ գտնելով, շնորհակալութիւն յայտնեց Հայկ Դեմոյեանին՝ մարմնամարզի առնչուող իր հատորին հրատարակութեան համար, որ պատմական մեծ արժէք կը ներկայացնէ։

«Ես կ'ուզեմ, որ երբ այսօր գինք մտիկ կ'ընենք, գիտնանք, թէ իր խօսքերուն ետեւ ինք ինչ լուրջ, լուեկայն, հետեւողական, մեթոտիկ եւ գիտական մօտեցում ցուցաբերած է, ինչ որ որ իսկապէս կը պատկանի ամենայառաջատար գիտաշխատողի մը։ Ինք ինծի համար մեր եզակի երեւոյթներէն մէկն է», ըսաւ տոքթ. Քրիսեան։

Այնուհետեւ, Քէշիշեան ներկայացուց ձեռնարկին գլխաւոր առանցքը հանդիսացող, հատորի հեղինակ, կիւմրեցի Հայկ Դեմոյեանը, որ Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան բաժինը աւարտելէ ետք, պատմական գիտութիւններու դոկտորի գիտական աստիճանին արժանացած է 2012-ին, պաշտպանելով «Ղարաբաղեան հակամարտութիւնը- Թուրքիան. պատմահամեմատական վերլուծութիւն» թէզը։ Պատմաբան ըլլալէ անկախ, ան համալսարանի դասախօս, հրատարակախօս, հատորներու եւ բազմաթիւ ուսումնա-

սիրութիւններու հեղինակ է։ Դեմոյեան վարած է պետական եւ պատասխանատու բազմաթիւ այլ պաշտօններ։ Պարգեւատրուած է «Հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար» 2-րդ աստիճանի, «Գարեգին Նժդէհ», «Դրաստամատ Կանայեան» եւ «Զօրավար Անդրանիկ» մետալներով, ինչպէս նաեւ՝ Հ.Հ. սպորտի եւ երիտասարդութեան հարցերու նախարարութեան ոսկէ մետալով։ 2006-էն ի վեր ան տնօրէնն է Երեւանի Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկին։

Բեմ հրաւիրուելով, Հայկ Դեմոյեան առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան եւ բոլոր անոնց, որոնք ջանք թափեցին ձեռնարկին կազմակերպման համար եւ ուրախութեամբ յայտարարեց, որ 2018-ին, Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակին առիթով, իւրայատուկ ցուցադրութիւն մը պիտի կազմակերպէ Փարիզի մէջ եւ այնուհետեւ՝ ամէնուր։

Հատորը կը վերաբերի 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբը Օսմանեան կայսրութեան տարածքին ձեւաւորուած Հայկական մարմնակրթական լայն շարժումին։

«1900-1922-ը, ընդհանուրը 22 տարի, դա մի ակնթարթ է պատմութեան համար, բայց այս ակնթարթը բաւարար է, որպէսզի մենք լուրջ կերպով ներկայանայինք թէ՛ կայսրութեան ներսում, որպէս առանձին միաւոր եւ թէ՛ առանձին էթնիկ հանրութիւն, իր քաղաքացիներով՝ մշակութային եւ քաղաքակրթական։ Եւ նաեւ կայսրութեան սահմաններէն դուրս»։ Իսկ անդրադառնալով իր հեղինակած հատորին, ան յատկապէս ընդգծեց անոր 8-րդ գլուխին՝ «Սպորտը եւ ազգային մրցակցութիւնը», կարեւորութիւնը, որովհետեւ իրեն համար այդ «...թերեւս առաջին հերթին ազգայնականութեան հետազօտութիւն է»։

Աւելի խորանալով, Դեմոյեան շեշտեց, որ «Հատորը նոր տեսական հիմնաւորումներ է մէջտեղ բերում, որպէսզի մենք հասկանանք ոճրագործների, Տէր Զօրի հոգեբանական մանրամասնութիւններն ու դրուագները՝ որոշում-



ների կայացման, դրանց հիմնադրման առիթով: Այս հատորը եւս մէկ անգամ գալիս է փաստելու Յեղասպանութեան կանխամտածուած լինելը, ծրագրուած լինելը եւ դրա հոգեբանական դրդապատճառները, յատկապէս՝ ոճրագործներին: Սպորտը, դա արդիականացում է, այսինքն՝ «մոտերնիզմ»: Սպորտը, դա առաջադիմութիւն է, մանաւանդ 20-րդ դարի սկզբի համար: Ամբողջ աշխարհով մէկ մարմնակրթական հոսիլու շարժում էր սկսուել, եւ որի նպատակը միայն մշակութային եւ առողջաբանական չէր»:

Հեղինակի համոզումով, 1912 թուականին իսկ մօտաւրտ համաշխարհային պատերազմի մը բռնկման զգացումը գոյութիւն ունէր, եւ այս պատճառով, թրքական ամբողջ մարզական կեանքը, սկիզբէն եւ այնուհետեւ ազգայնական էր, մոլեռանդ էր եւ երիտթրքական էր:

Հետաքրքրական էր նաեւ հատորին մէջ տեսնել առաջին անգամ հրատարակուող պատմական նկարներ, զորս հեղինակը կարողացած էր ձեռք բերել



թրքական աղբիւրներէ եւ մանաւանդ՝ թուրք երիտասարդ պատմաբաններէ: Բնական է, նկարներ նաեւ ձեռք բերած էր Փարիզի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Հայաստանեան արխիւներէ: Դեմոյեան, փառուր փոյնթի ընկերակցութեամբ եւ մանրամասն բացատրութիւններով, մէկ առ մէկ ցոյց տուաւ հատորին նկարները: Ներկաները համբերութեամբ եւ կեդրոնացումով հետեւեցան հեղինակին հետաքրքրական ներկայացման:

Ձեռնարկին վերջին բաժինով տեղի ունեցաւ հատորին գինեձօնի արարու-

ղութիւնը, զոր յատուկ աղօթքով կատարեց Կոմիտաս Ա. Քհնյ. Թորոսեան: Կարգով հատորը գինիով օծեցին հեղինակ Հայկ Դեմոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւթեանն ու Օշին Փիրումեանը, Կարօ Իսբէնճեան, օրուան բանասուս Կարօ Մումճեան, տոքթ. Շաւարշ Քրիսեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ Մանուէլ Մարսէլեան, ձեռնարկի հանդիսավար Մարօ Քէչիշեան եւ ուրիշներ:

Ձեռնարկի աւարտէն ետք հեղինակը ընթերցասէրներուն սիրալոյսով եւ գեղեցիկ մաղթանքներով մակագրեց իր հատորը:

Այս գեղեցիկ նախաձեռնութիւնը վերջ գտաւ ուշ երեկոյեան: Մասնակիցները գոհունակութեամբ մեկնեցան տուն, իրենց հետ տանելով Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան նախաքայլը առած նահատակ Շաւարշ Քրիսեանի նուիրած հատորը եւ անոր ընդմէջէն իրենց առողջութեան նպաստող գիտելիքներու ամբողջութիւն մը:

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Photos: © Yann Arthus-Bertrand, Terre vue du ciel. Licence 075 960031 - Studio V.KEN 2005 P&S

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com





«Հ.Մ.Ը.Մ.Ի ՕՐ»ՈՒԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ՝

# ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ «ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ»ՈՎ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ

Մարո Քէշիշեան  
ԿԼԵՆՏԷՅԼ

Շ աբաթ, 12 Նոյեմբեր 2016-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի «Բաղդասարեան-Շահինեան» սրահին մէջ տիրեց խանդավառ մթնոլորտ: Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան առաջարկով եւ Կեդրոնական Վարչութեան վաւերացումով, «Հ.Մ.Ը.Մ.Ի Օր»ուան տարեկան տօնախմբութեան առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի «Արտակարգ պատուանշան»ով պարգևատրեց Արեւմտեան թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի-ին ցուցաբերած իր մնայուն աջակցութեան եւ հոգածութեան համար: Նաեւ, «Մառաշտեան» շքանշան

ստացան շրջանի 15 մասնաճիւղերու նուիրեալներ: Առաջնորդին ընկերացան թեմի հոգեւոր դասի անդամները, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական Կարօ Իսթէնճեան, Ազգային Վարչութեան անդամներ, Ս. Աստուածածին եւ Ս. Նահատակաց եկեղեցիներու հոգեւոր հովիւներն ու հոգաբարձութիւնը, հայկական կազմակերպութեանց անդամներ, Հ.Մ.Ը.Մ.Ի Նաւասարդեան մարզախաղերու անցեալի պատուոյ նախագահներ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.Ի-ական»ներ, մասնաճիւղերու վարչակազմներ, Հ.Մ.Ը.Մ.Ի-ական խմբակաւոր խմբակաւորներ եւ երիտասարդական բաժանմունքի անդամներ, հիւրեր ու բազմաթիւ անդամներ: Ձեռնարկին բացումը կատարուեցաւ

Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգներու մեներգումով, զոր կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի «Արարատ» մասնաճիւղի խմբակաւորուհի քոյր Իվանա Գրիգորեան: Ձեռնարկի հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Լոս Անճելըսի մասնաճիւղի միաւորի խմբակաւոր եղբ. Շահան Աթմաճեան (հայերէն) եւ «Արարատ» մասնաճիւղէն՝ միաւորի խմբակաւորուհի քոյր Քրիստին Տաշտեմիրեանս (անգլերէն): Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց փոխ ատենապետ եղբ. Սարգիս Կարապետեան, որ ողջունեց ներկաները, շնորհակարտեց պարգևատրեալները, ինչպէս նաեւ շնորհակարտութեան եւ շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդին՝ Հ.Մ.Ը.Մ.Ի աշխատանքներուն իր զօրակցութեան համար:



Photo by Berdj Djamdjian

Հանդիսավար եղբ. Շահան Աթմաճեան հակիրճ կերպով ներկայացուց Առաջնորդին կենսագրականը եւ տասնամեակներու նուիրեալ ծառայութիւնը եւ նշեց, որ Սրբազան հօր գործունէութենէն օգտուեցանք նաեւ մենք՝ Հ.Մ.Ը.Մ.ականներս, սկսած Շրջանային Վարչութեան գրասենեակէն, մինչեւ «Թեքույա» բանակավայր, ՔԱՀԱՄ եւ Նաւասարդեան մարզախաղեր: Առաւել, սկստական կրօնական «Ս. Մաշտոց», «Քայլ Վահան», «Ս. Վարդան» կրօնական շքանշաններու աշխատանքը եւ Տեառնընդառաջի աւանդական սիրոյ սեղանը, որոնք արդիւնքն են Մուշեղ Սրբազանի ծառայութիւններուն: Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի համար պատիւ է մեծարել մեր Սրբազանը, որ հաւատարիմ գինւորն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, ծառան է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ համեստ սպասաւորը՝ հայ ժողովուրդին»:

Եղբ. Աթմաճեան ապա հրաւիրեց Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեանն ու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարտիչեանը, որպէսզի կատարեն Առաջնորդին պատուանշանի տուօնութիւնը:

Երկար ծափերով բեմ հրաւիրուեցաւ Առաջնորդը, որ շքանշանի ու պատուոյ գիրի ստանձնումէն ետք, յուզումնախառն զգացումներով արտասանեց սրտի ու գնահատանքի իր խօսքը: Ան ըսաւ, որ այս օրը իրեն համար հոգեկան անխառն ցնծութեան եւ յուզումի պահ է, եւ փառք տուաւ Աստուծոյ, որ ընծա-

յած է այս յարկին տակ հաւաքաբար խմբուելու առիթը, վկայելու համար Հ.Մ.Ը.Մ.ի ազգանուէր ու սերնդակերտ առաքելութիւնը: Ան ողջունեց բոլոր ներկաները եւ շեշտեց, որ իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան հաւատացող՝ խոնարհաբար կ'ընդունի այս պատիւը: Ապա շեշտեց, որ «հայ հոգեւորականը իր ծառայութիւնը կը կերտէ առանց ակնկալութիւններու, առանց փառքի ու պատիւի հետամուտ ըլլալու»:

Մուշեղ Սրբազան այս առիթով գնահատանքի խօսք ուղղեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական, Շրջանային եւ մասնաճիւղերու վարչութիւններուն, «որոնք լծուած են մեր նոր սերունդները իբրեւ քրիստոնեայ հայ կերտելու վսեմ առաքելութեան»՝ յիշեցնելով, որ «հիմնադիր սերունդէն ի վեր, բիւրաւոր հայրերինք

մուտք գործած են Հ.Մ.Ը.Մ.ի սեմէն ներս, հասակ առած են անոր Եռագոյնի շուքին տակ, տոգորուած ու դաստիարակուած են «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով»:

Առաջնորդը անգամ մը եւս գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին ունեցած կարեւոր բաժինը Արամ Ա. Վեհափառի հիւրընկալման մէջ՝ կազմակերպելով երիտասարդներու հետ հանդիպումը: Վեր առնելով նաեւ Հ.Մ.Ը.Մ.ին ու անոր անդամներուն նուիրեալ ծառայութիւնը՝ Առաջնորդը յայտարարեց, որ իրեն շնորհուած այս պատիւն ու շքանշանը կը ձօնէ անձնդիր բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, հոգեւոր եղբայրներուն ու ազգի նուիրեալներուն:

Առաջնորդը բարի երթ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ին, Աստուծոյ խնդրեց, որ իր



Ս. Աջը հովանի պահէ մարգական այս միութեան աշխատանքի բոլոր անդաստաններուն վրայ, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը միշտ բարձր մնայ մեր հայրենիքի ու արտերկրի օճախներուն վերեւ: «Նաեւ, միասնաբար աղօթենք, որ Սուրիոյ ու մասնաւորաբար Հայկազի պէս օճախներ պատուհասող արհաւիրքները շուտով վերջ գտնեն, ու Հ.Մ.Ը.Մ.ը իր անփոխարինելի մասնակցութիւնը ունենայ հայկական այդ տան վերակերտումին մէջ, ինչպէս կ'ընէ Հայաստանի, Արցախի ու հայկական իւրաքանչիւր օճախի մէջ», ըսաւ ան եւ իր խօսքը եզրափակեց անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնելով իրեն ընծայուած պատիւին համար:

Ընթրիքի դադարէն ետք ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու անցեալ տարեշրջանի իրագործումները ներկայացնող տեսերիկ մը: Այնուհետեւ ներկայացուեցան 2016 տարեշրջանին մեզմէ յաւատարմութեամբ Հ.Մ.Ը.Մ.ականներուն նկարները՝ մեծ յուզմունք յառաջացնելով ներկաներուն մօտ:

Ապա, տեղի ունեցաւ երեկոյին երկրորդ գլխաւոր բաժինը հանդիսացող Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշաններու տուչութիւնը, որ նախապէս որոշուած էր մասնաճիւղերու վարչութիւններուն կողմէ: Շքանշանները եւ հաստատագիրները յանձնեցին Շրջանային Վարչութեան համապատասխան մասնաճիւղերու կապը հանդիսացող եղբայրները: Այսպէս, շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Ծառայութեան» շքանշանը ստացան 15 մասնաճիւղերու մէջ ծառայող հետեւեալ քոյր-եղբայրները՝ առ ի գնահատանք երկար տարիներու իրենց անսակարկ նուիրաբերումին:-

- Սիւզի Մինոյեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղէն:
- Շահէն Աղաբաբեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ծրանսիսքոյի մասնաճիւղէն:
- Նշան Տէր Գալուստեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրեզնոյի «Մասուն» մասնաճիւղէն:
- Արա Եսայեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սոնթեպելլոյի մասնաճիւղէն:
- Սօսի Սէմէրճեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Փաստինայի «Ազատամարտ» մասնաճիւղէն:

## Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ»ՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱԼ ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ՝ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,

Շարաք, 12 Նոյեմբերը յիշարակելի օր մը եղաւ մեզի համար, երբ «Հ.Մ.Ը.Մ.»ի Օրոտան քօնակարարութեան պահուն, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան փափաքին ընդառաջելով մեզ պարտեցիր միութեան «Արտակարգ պարտանշան»ով: Ի սրբէ շնորհակալութիւն կը յայտնենք այս նախաշէնութեան համար:



Հանդիսութեան պահուն մենք նշեցինք, որ հայ հոգեւորականը իր ծառայութիւնը կը մարտնչէ առանց ակնկալութիւններու, հաւաքալով որ Բարչրեայի Աստուած Ինք է մեծագոյն պարգեւարողն ու արդար դարձաւ մեր բոլոր գործերուն: Այսուամենայնիւ, այս պարգեւը մեր սրբին մօտ պիտի մնայ այն մտածումով, որ անկիս պիտի խորհրդանշէ Հ.Մ.Ը.Մ.ին հեղ քրտանաճիւղներու վրայ երկարող մեր գործակցական կապը, նաեւ մնայուն յուշարար մը պիտի ըլլայ այն լայնածիր ծառայութիւններուն, զորս Հ.Մ.Ը.Մ.ը կը մարտնչէ մեր հայրենիքին, ժողովուրդին, մասնաւորաբար նոր սերունդներուն, անոնց հոգիները լիցքաւորելով մեր եկեղեցական, ազգային ու հայրենական արժէքներով:

Վարչքը կարար Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ու անոր հովանիին քակ գործող բոլոր միատրներուն, եւ թող Աստուծոյ Ս. Աջը ընդմիշտ հովանի ըլլայ մէն մի Հ.Մ.Ը.Մ.ականի ու միութեան բոլոր ծառայողներուն աշխարհային դաշտերուն վրայ:

Սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝  
ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ  
Առաջնորդ Ա.Մ.Ն. Արեւմտեան Թեմի

- Անդրէ Փաշայի՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կրեմլի «Արարատ» մասնաճիւղէն:
- Զարուհի Տէր Դաւիթեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Գառնիթի «Սարգարապատ» մասնաճիւղէն:
- Օշին Յարութիւնեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանցիսկո Հովիտի «Մասիս» մասնաճիւղէն:
- Քուրիթ Քեմիթի՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղէն:
- Ռոզին Սաղեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Ինչընտէմիսյրի «Արագ» մասնաճիւղէն:
- Վարդգէս Շիւրրոմեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Քրեմլի Հովիտի «Շանթ» մասնաճիւղէն:
- Երանդա Ղազարեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պրոպէնքի «Սիփան» մասնաճիւղէն:
- Արմինէ Ժամկոչեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Ուոլթըմթ Քրիթի «Կարս» մասնաճիւղէն:
- Համբիկ Շահինեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Նորթ Հովիտի «Զաւախք» մասնաճիւղէն:
- Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին արժանացած էին նաեւ եղբայր-



ներ Հրայր Թաչճեան («Անի») եւ Կապի Գուրիէ (Ֆինիքս), որոնք կամքէ անկախ պատճառներով չէին կարողացած ներկայ գտնուիլ ձեռնարկի ն: Արժանաւոր պարգեւատրեալները երկար ծափերով գնահատուեցան ներկաներուն կողմէ:

Յայտագիրին եզրափակիչ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, որ շնորհաւորեց Առաջնորդը եւ ըսաւ, թէ ան ըստ արժանւոյն կը գնահատուի իր բազմամեայ ծառայութեան համար:

Ան շնորհաւորանքի ու գնահատանքի խօսք ուղղեց նաեւ մասնաճիւղերու պարգեւատրեալներուն եւ ձեռնարկի կազմակերպիչ Շրջանային Վարչութեան եւ իր գոհունակութիւնը յայտնեց, թէ կը գտնուի վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներու մէջ՝ յատուկ հրատարակելով արտայայտուելով անոնց աշխատանքներուն մասին, ապա կանգ առաւ նոր սերունդը հայկական արժէքներով տոգորելու առաջադրանքին վրայ:

Պաշտօնական յայտագրի աւարտին, ներկաները ուրախութեան կանչերով, գրկախառնութեամբ եւ քաղցր խօսքերով շնորհաւորեցին պարգեւատրեալները, իսկ ուրիշներ, ի մասնաւորի երիտասարդները՝ հայկական շուրջպարերով ճոխացուցին մթնոլորտը:

Ձեռնարկը վերջ գտաւ ուշ երեկոյեան, անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ.ի անխախտ գոյութիւնը պահպանելու կամքը դրոշմելով մասնակիցներուն վրայ:

## Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻՒՂԻ 38-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

### Թղթակից ԿԼԵՆՏՅԼ

**3** Դեկտեմբեր 2016-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի «Պաղտասարեան-Շահինեան» սրահը ուրախ եւ տօնական մթնոլորտի մէջ կը գտնուէր, որովհետեւ մասնաճիւղի անդամները, համակիրներն ու հիւրերը կը պատրաստուէին միասնաբար տօնելու մասնաճիւղի հիմնադրութեան 38-րդ տարեդարձը: Այդ օր կեդրոնը վերածուած էր պարահանդէսի վայելուչ սրահի մը:

Ձեռնարկը սկսաւ մասնաճիւղի անդամներէն սփրանօ էփանա Գրիգորեանի կողմէ քայլերգներու կատարումով: Հանդիսավար Ալէք Պաղտասարեան բացման խօսքէն ետք բեմ հրաւիրեց Քալիֆորնիոյ 28-րդ ընտրատարածքը ներկայացնող քոնկրետական էտրմ Շիֆը, որ իր կարգին շնորհաւորեց մասնաճիւղին տարեդարձը եւ դրուատեց անոր տարած աշխատանքները:



Ապա, բեմ բարձրացաւ Արցախի փոխ վարչապետ Արթուր Աղաբեկեան, որ նմանապէս շնորհաւորեց մասնաճիւղին տարեդարձը եւ յաջողութիւն մաղթեց անոր ապագայ գործունէութեան: Ան նաեւ «Արարատ» մասնաճիւղին յանձնեց Արցախի անկախութեան 25-ամեակին առիթով պատրաստուած շքանշաններէն օրինակներ:

Տօնակատարութեան ներկայ էին Քալիֆորնիոյ նահանգային Մերակոյտի անդամ Էնթոնի Փորթմանթինօ, Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Վարդան Կարապետեան եւ Լոս Անճելըս գաւառի վերահսկիչի ներկայացուցիչ Ռիթա Հաճիմանուկեան, որոնք նմանապէս իրենց շնորհաւորական մաղթանքները փոխանցեցին մասնաճիւղին:

Աւելի քան 480 ներկաներու շարքին էին ներկայացուցիչները հայկական զանազան կազմակերպութիւններու, ինչպէս՝ ՀՕՄ-ի, Հ.Յ.Դ.Ի («Զաւարեան» եւ «Ահարոնեան») կոմիտէներ, իրանահայ միութեան եւ «Դաւթեան-Մարիամեան»ի: Ներկայ էին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, Շրջանային Վարչութեան եւ



Հ.Մ.Ը.Մ-ի այլ մասնաճիւղերու ներկայացուցիչներ:

Ընթրիքէն ետք տեղի ունեցաւ տարեդարձի կարկանդակի հատում, որմէ ետք մասնաճիւղը պաշտօնապէս թեւակոխեց իր պատմութեան 39-րդ տարին:

Տարիներու ականդութեան համաձայն, այս տարի եւս, մասնաճիւղի հիմնադրութեան տարեդարձին նշումին տեղի ունեցաւ մասնաճիւղի տիպար անդամներու մեծարանք: Այս տարուան մեծարեալներն էին եղբայրներ Անտրէ Փաշայի եւ Արիկ Գէորգեան:

«Արարատ» մասնաճիւղի վարչութեան անդամ եղբ Կարէն Մողոյեան դրուատեց երկու մեծարեալներուն նուիրեալ ծառայութիւնները: Ան յիշեցուց, որ Փաշայի 1983-ին սկսած է մարզել «Արարատ»ի պասքէթպոլի զանազան խումբերը. անոր առաջնորդութեամբ՝ խումբերը կարողացած են հարստացնել մասնաճիւղի բաժակներու հաւաքածոն:

Մողոյեան ներկայացուց նաեւ մասնաճիւղի երկարամեայ անդամ Արիկ Գէորգեանի երկարամեայ վաստակը, որմէ ետք Գէորգեան յտնկայ ծափահարութիւններու տարափին տակ բեմ բարձրանալով՝ շնորհակալութիւն յայտնեց զինք այս



ճամբուն մղած ընտանեկան պարագաներուն, կնոջ եւ զաւակներուն:

Ապա, էլըն ձիւ եւ իր նուագախումբը իրենց երգերով ու երաժշտութեամբ խանդավառեցին ներկաները, որոնք տօնակատարութիւնը շարունակեցին մինչեւ երեկոյեան ուշ ժամեր:

with the complements of

# Restaurant Al-Mayass



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵԲՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԸ ՈՒՆԵՅԱԲ ԻՐ ՆՈՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Մարտ Բեյրութի  
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

# 28

-30 Հոկտեմբեր  
2016-ի շաբաթա-  
վերջին, Հ.Մ.Ը.Մ.Ի  
«Գեորգ Անտոն-  
եան» սրահին մէջ  
տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան  
Մ. Նահանգներու 38-րդ Շրջանային  
Ներկայացուցչական Ժողովը, շրջանի  
աւելի քան հարիւր ընտրեալ ներկայա-  
ցուցիչներու եւ հրաւիրեալներու մաս-  
նակցութեամբ:

Նոյն օրերուն, Կիպրոսի մէջ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչու-  
թեան լրագումար նիստերու եւ միջ-  
դիւանական Զ-րդ խորհրդաժողովի  
գումարման պատճառով, Կեդրոնա-  
կան Վարչութիւնը ժողովին ներկայա-  
ցուցիչ նշանակած էր Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրո-  
նական Վարչութեան նախկին անդամ  
եղբ. Համլէթ Չրախճեանը: Թուականի  
խաչածեման պատճառով շրջանը ներ-  
կայացուցիչներ չունէր միջ-դիւանա-  
կան խորհրդաժողովին:

Շրջանի Հ.Մ.Ը.Մ.Ի բարձրագոյն  
այս ժողովին բացումը կատարեց Շրջա-  
նային Վարչութեան ատենապետ եղբ.  
Մանուէլ Մարսէլեան, որ բարի գա-



լուստ մաղթելէ ետք ներկաներուն,  
հրաւիրեց գանոնք յոտնկայս յարգելու  
յիշատակը նոր մահացած՝ շրջանի վաս-  
տակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եւ Հ.Մ.-  
Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախ-  
կին անդամ եղբ. Վարդգէս Ալահայտոյ-  
եանին: Ապա, ժողովը ընտրեց առժամ-  
եայ դիւանը: Եռօրեայ օրակարգի վաւե-  
րացումէն եւ մասնաձիւղերու նիւթա-  
կան պարտաւորութիւններու հաստա-  
տումէն ետք, ժողովը ընտրեց իր մնա-  
յուն դիւանը: Ատենապետ ընտրուեցան  
եղբայրներ Վիգէն Աբէլեան եւ Գօգօ  
Մկրեան, իսկ քարտուղար՝ եղբայրներ  
Րաֆֆի Վարժապետեան, Վահէ  
Մկրտիչեան, քոյրեր Պէթի Մկրեան եւ  
Սոնա Մենաշեան:

Ժողովի քուէախոյզ, բանաձեւի եւ  
նախահաշիւի յանձնախումբերու ընտ-  
րութիւններէն ետք, ժողովականները  
իրենց ճշդումները կատարեցին Շրջա-  
նային Վարչութեան երկամեայ բարո-  
յական տեղեկագիրին մէջ եւ լսեցին  
անոր նիւթական զեկոյցը: Հաշուեքննիչ  
եւ արխիւային յանձնախումբերու զե-  
կոյցները ընթերցուելէ ետք, ժողովա-  
կանները իրենց լուսաբանական հար-





Photo by Berdj Djarndjian

ցումները ուղղեցին ընթացակարգի Շրջանային Վարչութեան բարոյական եւ նիւթական տեղեկագիրներուն շուրջ:

Յաջորդ օրուան առաւօտեան նիստին, Շրջանային Վարչութիւնը սուսալի տեղեկագիրներուն մասին ներկայացուած հարցումներուն սպառիչ պատասխանները, որմէ ետք ժողովը անցաւ ըստ հովանի քննարկման օրակարգին: Բոլոր արտայայտուողներն ալ բարձր գնահատեցին ընթացակարգի Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութիւնը, յատկապէս գնահատանք արձանագրեցին շեփոխարկումի վերակազմութեան, երիտասարդական բաժանմունքի եւ Սաքրամենթոյի «Լոռի» միաւորի ստեղծման, դաստիարակչական սեմինարներու կազմակերպման, Վեհափառ Հայրապետի շրջան այցելութեան առիթով կազմակերպուած երիտասարդական հաւաքին, Նաւասարդեան աշխատանքներու յաջող կազմակերպման եւ մասնաճիւղերու հանդէպ ցուցաբերուած հոգատարութեան համար:

Այնուհետեւ, ժողովականները բաժնուեցան խմբակներու եւ հետեւեալ կա-

րելոր նիւթերը քննեցին եւ իրենց համապատասխան առաջարկները ներկայացուցին ժողովին: Կազմակերպչական, Դաստիարակչական, Մարզական, Սկստուական, Բանակավայր, Նաւասարդեան ձեռնարկներ, Հանրային կապ-Մամուլ: Ժողովը յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ 2018-ին գուզադիպող Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին եւ շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 50-ամեակին, անոնց նշումը լաւապէս կազմակերպելու առաջադրութեամբ:

Կիրակի, 30 Հոկտեմբերին, ժողովը զբաղեցաւ շրջանի ներքին կանոնագրի փոփոխութեան կէտերու քննարկումով:

Ապա, ժողովը վաւերացուց բանաձեւի յանձնախումբին ներկայացուցած բանաձեւը, որ «Յոյժ գովելի» կը գտնէր ընթացակարգի Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութիւնը:

Այնուհետեւ, յառաջիկայ երկամեակի նախահաշիւի վաւերացումէն ետք, ժողովը ընտրեց ինը հոգինոց նոր Շրջանային Վարչութիւն մը հետեւեալ կազմով: Եղբայրներ Մանուէլ Մարսէլեան,

Սաֆօ Կարպետեան, Արամ Երեմեան, Արամ Թոմաս, Արտաշէս Ղազարեան, Պերճ Պետոյեան, Փիէր Մանուկեան, Արմանտ Քրիմեան եւ Արամ Պեքարեան:

Հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու ընտրութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով երոյթ ունեցաւ եղբ. Համլէթ Զրախճեան, որ շնորհաւորեց օրուան դիւանը իր դժուարին աշխատանքը լաւապէս կատարելուն համար, իսկ ժողովականները՝ իրենց աջակուրջ հետեւողականութեան համար: Եղբայրը նաեւ շնորհակալութիւն յայտնեց ընթացակարգի Շրջանային Վարչութեան՝ իր բացառիկ աշխատանքին համար, ինչպէս նաեւ շնորհաւորեց եւ յաջողութիւն մաղթեց նորընտիր Շրջանային Վարչութեան:

Դիւանի անունով շնորհակալական երոյթ ունեցաւ ատենապետներէն եղբ. Վիգէն Աբէլեան:

Ժողովը վերջ գտաւ ժամը 1.30-ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

**6** Դեկտեմբեր 2016-ին, Արեւմտահայաստանի Մ. Նահանգներու Ազգային Առաջնորդարան այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի շրջանի նորընտիր Շրջանային Վարչութեան կազմը, գլխավորութեամբ՝ ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանի: Հ.Մ.Ը.Մ.ի կազմը ընդունեցին Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Թեմի Ազգային Վարչութեան ատենապետ Վահէ Յովակիմեան եւ վարչութեան անդամներէն դոկտ. Գալուստ Յակոբեան:

Առաջնորդը շնորհակտեց նորընտիր կազմը եւ յաջողութիւն մաղթեց անոր յառաջիկայ աշխատանքներուն: Ան այս առիթով անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնեց այն պատիւին համար, զոր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, Շրջանային Վարչութեան խընդրանքին ընդառաջելով, ընծայեց իրեն՝ «Հ.Մ.Ը.Մ.ի օր»ուան առիթով պարգեւելով Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատւանշանը: Ան զնահատանքով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան նուիրեալ աշխատանքին մասին, որ իրագործուեցաւ Արամ Ա. Կաթողիկոսի շրջան այցելութեան օրերուն, մասնաւորաբար երիտասարդութեան հետ Վեհափառ Հայրապետին



հանդիպումին կազմակերպման ճամբով: Շնորհակտեցին խօսք արտասանեց նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ Վահէ Յովակիմեան:

Հանդիպումը առիթ մը եղաւ խորհրդակցելու Հ.Մ.Ը.Մ.ի յառաջիկայ ծրագիրներուն մասին, որոնք Ազգային Առաջնորդարանին հետ ունին գործակցութեան դաշտեր: Այդ ծրագիրներու շարքին են սկստուներու եւ գալլիկներու կրօնական-ազգային դաստիարակչական ծրագիրները, որոնց մասնակցողներն ու յաջողութեամբ աւարտողները կ'արժանանան «Ս. Մեսրոպ Մաշտոց» եւ «Գայլ Վահան» շքանշաններուն:

Հիւր վարչականները Առաջնորդին հաղորդեցին, որ 2018-ը Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակն է, որ պիտի նշուի պատշաճ տարողութեամբ, այդ նպատակով նախնական աշխատանքներ սկիզբ առած են:

Առաջնորդը զնահատանքով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սերնդակերտ ու հայակերտ աշխատանքներուն մասին, եւ մաղթեց, որ նորընտիր Շրջանային Վարչութիւնը նոր նուաճումներ արձանագրէ Հ.Մ.Ը.Մ.ի վաստակին մէջ: Հրաժեշտէն առաջ, ան նաեւ յուշանուէրներ յանձնեց հիւրերուն:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԸ ԿՐԹԱՆՊԱՍՏ ԿԸ ՇՆՈՐՀԷ ՄԱՍՆԱԾԻՂԷՆ ԵՐԿՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԻ

**Թղթակից  
ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈ**

**Հ**.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսկոյի մասնաճիւղին կողմէ 2016-ին հաստատուած կրթանպաստներու հիմնադրամը իր առաջին երկու կրթանպաստները (1000-ական սուրբ) շնորհեց մասնաճիւղէն երկու համալսարանականի՝ քոյրեր Քրիտիա Լիսթինի (Տէմիրճեան) եւ Թամար Տէրմէնճեանի:

Մասնաճիւղի նուիրեալ եւ գործօն անդամներ ըլլալու կողքին, երկու քոյրերն ալ գործօն անդամներ են շրջանի Հ.Յ.Դ. «Ռոստոմ» ուխտին: 2014-ին անոնք մասնակցած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ ընդհանուր բանակումին, իսկ Քրիտիան, 2015-ին, վեց շաբաթով մասնակցած է Հ.Յ.Դ.ի «Երիտասարդական Զուգարներ» ծրագիրին Հայաստանի եւ Արցախի մէջ իրականացուցած աշխատանքներուն:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ 75-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

## Թղթակից ԵՐՈՒՍԱՂԵՄ

**9** Դեկտեմբեր 2016-ի երեկոյան ժամը 7-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Երուսաղէմի ակումբին մէջ գումարուեցաւ միութեան 75-րդ Ընդհանուր Ժողովը, մասնակցութեամբ 47 անդամներու եւ 12 հրահանգներու:

Իր մնայուն դիւանը ընտրելէ ետք, յանձինս եղբ. Յակոբ Սեւանի՝ նախագահ եւ քոյր Անժելա Տիկալիքեանի՝ քարտուղար, ժողովը անցաւ իր օրակարգի քննութեան:

2014-2016 տարեշրջանի ընթացաւարտ վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրը եղբ. Յարութ Պաղամեանի կողմէ ներկայացուելէ ետք, ժողովականները քննարկեցին վարչութեան գործունէութիւնը եւ տուին իրենց գնահատականը: Առաջարկներու օրակարգէն եւ դադարէն ետք, Ընդհանուր Ժողովը 11 առաջադրուած թեկնածուներէն ընտրեց 2016-2018 երկամեակի եօթը հոգինոց վարչական կազմը՝ ըստ հետեւեալին.- Յարութ Պաղամեան, Լարա Օհանէսեան, Նոյեմի Նալ-



պանտեան, Պետրոս Պաղամեան, Զոհրապ Գրիգորեան, Յակոբ Սեւադեան եւ Գէորգ Թաշճեան:

«Յառաջ նահատակ» քայլերդի երգեցողութեամբ Ընդհանուր Ժողովը աւարտեցաւ գիշերուան ժամը 11-ին:

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

# HOTEL

★ ★ ★

# PAVILLON MONCEAU

## PARIS

*Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.*

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com



# ՓԱՅՏԵԱՅ ՊԷՏՃԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ

## Թղթակից ՊԵՅՐՈՒՅ

**Հ.Մ.Ր.Մ. Աղբյուր** Մ.Ր.Մ. Լիբանանի Շրջանային Սկսնակական Խորհուրդին ու խմբապետական կազմը, 24-25 Սեպտեմբեր 2016-ին, «Հ.Մ.Ր.Մ. Աղբյուր» մարզամշակութային համալիրին մէջ կազմակերպեցին առաջին կարգի փայտեայ պէտճի տեսական գիտելիքներու սեմինար մը, որուն մասնակցեցան Պէյրութի, Պուրճ Համուտի, Այնճարի, Անթիլիասի, Ժրտէյտի եւ Ռաուտայի մասնաճիւղերէն 50 խմբապետներ: Տեղին է նշել, որ փայտեայ պէտճի գիտելիքներու գործնական հանգրուանները կը կազմակերպուին միայն Լիբանանի սկսնակական ֆետերասիոնին կողմէ:

Սեմինարը ընթացք առաւ 24 Սեպտեմբերի կէսօրին: Դրօշակի արարողութենէն առաջ, խմբապետները իրենց ճիւղերու համաձայն բաժնուեցան խումբերու. գայլիկ-արծուիկ եւ մոկլի ճիւղերու խմբապետները կազմեցին վոհմակին «Կարմիր», «Կապոյտ» եւ «Կանաչ» վեցեակները, արի-արենոյճներու խմբապետները կազմեցին սկսնակ-

տական խումբի «Առիւծ» եւ «Աղուէս» խմբակները, իսկ երէց-պարմանուհիներու խմբապետները կազմեցին փաղանգին 2 տասնեակները: Նախապէս երկու փայտիկի տիրացած քոյրերն ու եղբայրները ստանձնած էին խումբերու պատասխանատուութիւնը՝ քոյր Լուի Պիլյախան նշանակուած էր պատասխանատու վոհմակին, քոյր Մենար Պոյաճեան՝

սկսնակական խումբին, եղբայր Մելքոն Պապէան՝ փաղանգին, իսկ եղբայր Մըկրտիչ Գէորգեան օժանդակ սեմինարի գործադրութեան:

Չորս փայտիկի տիրացած եւ սեմինարի պատասխանատու, Շրջանային պարմանուհի ճիւղի խմբապետուհի քոյր Ռուբինա Սայեաթ խմբապետներուն բացատրեց համաշխարհային փայտեայ պէտճի կարգերը եւ անոնց կարեւորութիւնը:





Ապա, տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն:

Դրօշակի արարողութեան յաջորդեց դասախօսական հետեւեալ շարքը.-

●«Սկստական գործելակերպ»- դասախօս՝ Լիբանանի սկստական ֆետերասիոնի նախկին ընդհանուր խմբապետ Հասան Համմուտ:

●«Սկստական՝ գայիկական, արիական եւ երէցական շրջանները»- դասախօս՝ չորս փայտիկի տիրացած, Շրջանային արծուիկ ճիւղի խմբապետուհի քոյր Լենա Գրիգորեան:

●«Համաշխարհային սկստուութեան պատմութիւնն ու համաշխարհային սկստութեան կառուցը»- զրոյցը վարեց՝ Շրջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Արտա Զէյթունյեան:

●«Արաբական աշխարհի սկստական եւ յատկապէս Լիբանանի սկստական ֆետերասիոնի կազմութեան պատմութիւնը»- Լիբանանի սկստական ֆետերասիոնի գայիկ-արծուիկ ճիւղերու խմբապետուհի քոյր Ռուբինա Խայեաթ:

Դադարէ մը ետք, դասախօսական շարքը շարունակուեցաւ հետեւեալ ձեւով.-

●«Սկստական շարժման սկզբունքներն ու նպատակը»- դասախօս՝ Լիբանանի սկստական ֆետերասիո-

նի ներկայ ընդհանուր խմբապետ Ճորճ Նիսի:

●«Սկստութեան ամէնէն կարեւոր հիմերէն երկուքը՝ խմբակային դրութիւնն ու կարգապահութիւնը»- դասախօս՝ Շրջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Արտա Զէյթունյեան:

●«Կարգապահական հրահանգներու կատարում»- աշխատանքը վարեց երեք փայտիկի տիրացած Շրջանային արի ճիւղի խմբապետ եղբ. Պետրիկ Գասպարեան:

Երեկոյեան, ընթրիքին յաջորդեց երեք փայտիկի տիրացած, նախկին Շրջանային լրատուական եւ հաղորդակցութեան պատասխանատու, խմբապետուհի քոյր Թամար Քէշիշեանի դասախօսութիւնը՝ «Բանակցութեան եւ հաղորդակցութեան» մասին: Դասախօսութենէն ետք, խումբերը պատրաստուեցան խարուկահանդէսին եւ հաճելի պահեր անցուցին երգերով, կանչերով, հաներուկներ լուծելով եւ խաղերով:

**ՍԵՄԻՆԱՐԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԸ**

Սեմինարին երկրորդ օրը ընդգրկեց հետեւեալ նիւթերն ու դասախօսները.-

●«Սկստական յայտագիրներու կազմակերպումի եւ նպատակներու ճշգրտմի ձեւեր»- դասախօս՝ Լիբանանի սկստական ֆետերասիոնի նախկին ընդհանուր խմբապետ Ուսաիմ Ըլ Զէյն:

●«Ի՞նչպէս պատրաստել սկստա-

կան տարեկան յայտագիր մը»- դասախօսներ՝ «Scout du Liban»-ի խմբապետուհի Մարի Քրոտ եւ Լիբանանի սկստական ֆետերասիոնի անդամ Ֆարէս Խալիֆէ:

Սեմինարին յայտագիրը ընդգրկեց սկստական կարգ մը գիտելիքներու վերաբար, ինչպէս՝ մորս, կապեր ու հանգոյցներ, նաեւ՝ խմբակային խաղեր:

Դասախօսութիւններու շարքին էր նաեւ «Աշխատանքներու քննարկում եւ տեղեկագիր պատրաստելու կարեւորութիւն» նիւթը, զոր ներկայացուց քոյր Ռուբինա Խայեաթ:

Ճաշի դադարէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային նախկին ընդհանուր խմբապետ, չորս փայտիկի տիրացած եղբ. Ժանօ Քէշէճեան դասախօսեց «Անհատի մը տարիքային շրջանները» նիւթը:

Սեմինարին ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները եւ Շրջանային Սկստական Խորհուրդի անդամներ: Մասնակիցներուն այցելութիւն տուին մասնաճիւղերու Սկստական Խորհուրդները:

Սեմինարին աւարտին տեղի ունեցաւ սեմինարի արժեւորում եւ վկայականներու բաշխում: Սեմինարը պաշտօնապէս աւարտեցաւ դրօշակի արարողութեամբ եւ «Յառաջ նահատակ» քայլերգի երգեցողութեամբ:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՇԵՓՈՐԱԽՈՒՄՔԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԵՐԿՕՐԵԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

Թղթակից  
ՊՈՒՐԾ ՅԱՍՈՒՏ

**Հ**ՄԸՄԻ Լիբանանի Շրջանային Սկաուտ-Նորհուրդի հովանաւորութեամբ, շեփորախումբի Շրջանային յանձնախումբի առաջարկով եւ Շրջանային խմբապետութեան կազմակերպութեամբ, 15-16 Հոկտեմբեր 2016-ին տեղի ունեցաւ շեփորախումբի անդամներու երկօրեայ դաստիարակչական սեմինար մը՝ ՀՄԸՄԻ Ճիւնիի ակումբին մէջ:

Սեմինարը ընթացք առաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք մասնակիցներուն բացատրուեցաւ սեմինարին նպատակը: Շեփորախումբի անդամները սեմինարին ընթացքին ստացան միութենական եւ սկաուտական հետեւեալ նիւթերը-

● «ՀՄԸՄԻ հիմնադրութեան պատմութիւնն ու գործունէութիւնը»- դասախօս՝ Շրջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Արտա Զէյթունլեան:

● «ՀՄԸՄԻ պատկանելիութիւն»- դասախօս՝ ՀՄԸՄԻ Կեդրոնական Վարչութեան անդամ եւ սկաուտական ներկայացուցիչ եղբ. Վաչէ Նաճարեան:

● «ՀՄԸՄԻ սկաուտական կարգերը, աստիճանները, պաշտօնները եւ սկաուտական տարազը»- դասախօս՝ Շրջանային Սկաուտ-Նորհուրդի անդամ քոյր Աննա Քէօմպէճեան:



● «ՀՄԸՄԻ ընդհանուր կառույցը՝ ժողովներն ու մարմինները»- դասախօս՝ Շրջանային պարմանուհի ճիւղի խմբապետուհի քոյր Ռուբինա Խայեաթ:

Սեմինարը աւարտեցաւ 16 Հոկտեմբերի կէսօրին, «Յառաջ նահատակ» քայլերգով:

Տեղին է նշել, որ սեմինարին ներկայ գտնուեցան նաեւ ՀՄԸՄԻ Լիբանանի շեփորախումբի Շրջանային յանձնախումբի անդամները: Սեմինարի մասնակիցներուն այցելեցին Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներն ու ՀՄԸՄԻ Լիբանանի Շրջանային Սկաուտական Նորհուրդը:

## ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՐԷՅ ԾԻՒՂԸ Կ'ԱՐՇԱՔԷ ԼԻՔԱՆԱՆԻ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԼԵՌԸ ԵՒ ԴՐՕՇԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԱՆՈՐ ԿԱՏԱՐԻՆ

Թղթակից  
ՊՈՒՐԾ ՅԱՍՈՒՏ

**Հ**ՄԸՄԻ Լիբանանի Շրջանային Սկաուտական Նորհուրդի հովանաւորութեամբ, 22-23 Հոկտեմբեր 2016-ին, Շրջանային խմբապետութիւնը կազմակերպեց երէջ ճիւղի երկօրեայ արշաւ մը դէպի Լիբանանի բարձագոյն լեռը՝ Քորնէթ Սաուտա:

Արշաւին իրենց մասնակցութիւնը բերին ՀՄԸՄԻ Պէյրութի, Պուրճ Համուտի, Այնճարի, Անթիլիասի եւ Ժրտէյտի մասնաճիւղերու 40 երէցներ: Հարկ է յիշել, որ երկօրեայ արշաւին իրականացման համար Շրջանային Վարչութիւնը ճիգ



չինայեց, իսկ մասնաճիւղերու Սկաուտական խորհուրդներէն եւ խմբապետական կազմերէն երկուքական եղբայրներ օժանդակեցին արշաւին, որուն ներկայ գտնուեցան նաեւ Շրջանային Սկաուտական խորհուրդի անդամներ:

Խանդավառ երէցները, Շաբաթ, 22 Հոկտեմբեր 2016-ի յետմիջօրէի ժամը 2-ին հաւաքուեցան եւ հանրակառքերով ուղղուեցան Լիբանանի հիւսիս՝ Արզ-Ուլուն Ուրդոշ շրջանը: Հանրակառքերը երէցները հասցուցին ինքնաշարժով հասանելի ամէնէն հեռու վայրը (բարձրութիւն՝ 2682 մ., ջերմաստիճան՝ 12°C), որմէ ետք սկսաւ արշաւը:

Երկօրեայ արշաւին բոլոր գոյքերը իրենց հետ ունենալով, երէցները գիշերային հետաքրքրական արշաւի մը ընթացքին, միայն իրենց լուսարձակներու լոյսով, մօտ 7.5 քլմ. երկարութեամբ արշաւէ մը ետք (երկուքուկէս ժամ) հասան նախօրոք ճշդուած վայրը (բարձրութիւն՝ 2816 մ., ջերմաստիճան՝ 2°C), ուր պատրաստուեցան գիշերելու: Անոնք լարեցին իրենց վրանները եւ պատրաստեցին իրենց հետ բերած ընթրիքը ու վրաններու տակ անցնելով՝ պատասպարուեցան նուազող ջերմաստիճանէն ու հանգչեցան, որպէսզի լաւապէս պատրաստուին յաջորդ օրուան արշաւին:

Կիրակի, առաւօտեան կանուխ ժամերէն, երէցները արթնացան, նախաճաշեցին, հաւաքեցին վրանները եւ պատրաստեցին իրենց հետ ունեցած ձեռնափայտերով դրօշակի կայմին «ձողերը»: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտի լուրջ ու կարգապահ քայլերով, երէցական նշանաբանին հաւատարիմ՝ իրարու օգնելով եւ քաջալերելով, արշաւեցին մօտ 2.5 քլմ. (մէկուկէս ժամ) հասնելով Լիբանանի բարձրագոյն կէտը՝ Քորնէթ Սաուտա: Այս-



պէս, 3088 մ. բարձրութեան վրայ անոնք բարձրացուցին դրօշակի կայմը (Լիբանանի, Հայաստանի ու Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակները) եւ «Յառաջ նահատակ» քայլերդի երգեցողութեամբ կատարեցին դրօշակի արարողութիւն:

Կարճատեւ մը ամպերէն վեր չնաշխարհիկ վայրի մէջ անցընելէ ետք, ու վայելելէ ետք գեղատեսիլ Լիբանանի լեռներն ու տեսարանները եւ մաքուր եւ պայծառ օդը, երէցները յաղթանակի քայլերով բռնեցին վերադարձի ճամբան: 3 ժամ 10 քլմ. երկարող վերադարձի ճամբուն վրայ, անոնք ցանկութիւն յայտնեցին յաջորդին բարձրանալու Արարատի գագաթը եւ հոն կատարելու իրենց դրօշակի արարողութիւնը:



## ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿ ԵՒ ՄՈԿԼԻ ՃԻՒՂԵՐՈՒ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

15

Սեպտեմբեր 2016-ին, «Հ.Մ.Ը.Մ.-Աղբալեան» մարզամշակութային համալիրի «Հրայր Մարուխեան» սրահին մէջ տեղի ունեցաւ գայլիկ, արծուիկ եւ մոկլի ճիւղերու խմբապետական կազմերու ժողով մը, որուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Այնճարի, Անթրիպասի եւ Ժըտէյտէի մասնաճիւղերու գայլիկ, արծուիկ վոհմակներու եւ մոկլի խմբակի խմբապետական կազմերը: Ժողովին ընթացքին արծարծուեցան երեք ճիւղերը հետաքրքրող հարցեր: Ծրագրուեցան նաեւ երեք ճիւղերու 2016-2017 տարեշրջանի աշխատանքները:



Ժողովին աւարտին մասնակիցները հետեւեցան չարաչահումի մասին դասախօսութեան մը:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՌԱՌՒՏԱՅԻ ՄԱՆԱԾԻՂԻՆ ՀՆԳԱՄԵԱԿԸ ԵՒ ՍԿԱՌՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԸ



## Թղթակից ՈՍՈՒՏԱ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի նորագոյն մասնաճիւղը 2016-ին բոլորեց իր հիմնադրութեան Հնգամեակը:

2011-ին հիմնուած այս մասնաճիւղը, բաւական դժուարութիւններէ ետք, վերջին տարիներուն ինքզինք փաստեց 2015-2016 տարեշրջանի իր տարեկան բանակումով եւ 2016-2017 տարեշրջանի քերմէսով ու վերամուտով:

2016-2017 տարեշրջանի պաշտօնական բացումը նուիրուեցաւ մասնաճիւղին 5-րդ տարեդարձին: Պաշտօնական բացումի նախօրեակին, մասնաճիւղին Սկաուտական Խորհուրդն ու խմբապետական կազմը կազմակերպեցին եռօրեայ քերմէս մը՝ 14-16 Հոկտեմբեր 2016-ին: Քերմէսը մեծ խանդավառութիւն ստեղծեց շրջանի պատանիներուն եւ երիտասարդներուն մօտ:

Վերամուտի պաշտօնական արարողութիւնն ու հանդիսութիւնը տեղի ունեցան 16 Հոկտեմբեր 2016-ի յետմիջօրէին, Ռաուտայի «Էհլան» շրջանի բակին մէջ, կազմակերպութեամբ մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին ու խմբապետական կազմին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտական Խորհուրդին եւ Շրջանային խմբապետութեան, «Շուշի» կոմիտէութեան, ծնողներու եւ համակիրներու:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ սկաուտական տողանցքով մը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շեփորախումբին: Դրօշակի արարողութեան ընթացքին տեղի ունեցաւ Նորընծայ արեւոյշներու խոստման արարողութիւն եւ պաշտօնատուցութիւն:

Պաշտօնական արարողութեան աւարտին խօսք առաւ Շրջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Արտա Զէյթունեան, որ Շրջանային Սկաուտական Խորհուրդի եւ Շրջանային խմբապետութեան անունով շնորհակտրեց Ռաուտայի մասնաճիւղը իր 5-ամեակին աւելիով եւ յաջողութիւն մաղթեց Ռաուտայի մասնաճիւղի սկաուտներուն ու բոլոր աշխատանքներուն: Ապա, խօսք առաւ Ռաուտայի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի անդամ եղբ. Մասիս Աւետիսեանը, որ քաջալերեց բոլորը իրենց զաւակները անդամագրելու մարմնակրթական այս միութեան:

Դրօշակի արարողութեան աւարտին, խումբերը կիրարկեցին գեղարուեստական պատշաճ յայտագիր:

Ներկաները մեծ խանդավառութեամբ քաջալերեցին ըսկաուտներուն պատրաստած յայտագիրը, որ վերջ գտաւ «Տուն իմ հայրենի» երգով:





ԵՒՐՈԱՍԻԱԿԱՆ ԵՒ ԶԱՄԱԺՈՂՈՎԻ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ  
Յ-ՐԴ ՖՈՐՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԸՆԹԱՑՔԻՆ՝

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

**Ս**կառուտական եւրո-ասիական տարածաշրջանի 6-րդ համաժողովին եւ երիտասարդական 3-րդ ֆորումին մասնակցող միջազգային պատուիրակութիւններու ներկայացուցիչները այցելեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին: Այցելուներու շարքին եղաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ներկայացուցիչ եղբ. Հրաչ Շմաւոնեան:

Նախագահ Սարգսեան հիւրերը ողջունելով գնահատեց սկառուտական նման հանդիպումներ Երեւանի մէջ կատարելու քայլը եւ երիտասարդութեան ձայնը որոշումներու որդեգրման մէջ լսելի դարձնելու նախանձախնդրութիւնը:

«Հասարակական կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ երիտասարդութիւնը ներգրաւելու եւ անոր գործունէութիւնը խթանելու ձեռք կեցուածքը համահունչ է երիտասարդութեան նկատմամբ մեր երկրի որդեգրած քաղաքականութեան», նշեց նախագահ Սարգսեան: Ապա, ան աւելցուց. «Լիայոյս եմ, որ ձեր աշխատանքը արդիւնաւէտ կ'ըլլայ եւ կարելիութիւն կ'ընծայէ աւելի սերտ կապեր հաստատելու



մեր երիտասարդներուն եւ երիտասարդական կազմակերպութիւններուն, անոնց շարքին նաեւ՝ սկառուտական կառույցին հետ, առիթ դառնալով նաեւ Հայաստանի պատմամշակութային ժառանգութեան ծանօթացման»:

Հիւրերը, իրենց կարգին, շնորհակալութիւն յայտնեցին նախագահ Սարգսեանին՝ իրենց գործունէութեան աջակցելու եւ Երեւանի մէջ սկառուտական տարածաշրջանի համաժողովը եւ երիտասարդական ֆորումը լաւագոյն ձեւով հիւրընկալելու համար:



# ԱՌ ՅԱԲԷՏ ԿՈՐՄՆՑՈՒՑԻՆՔ ԱՐԵԻՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԷՆ ՏԻՐԱՆ ԱՂԱԶԱՐԵԱՆԸ

Յարութ Չեքիճեան  
ՊԵՅՐՈՒԹ

**Շ**աբաթ, 10 Դեկտեմբեր 2016-ին, մեր սովորական գրեթէ առօրեայ գուարձախառն հեռաձայնային խօսակցութեան ընթացքին, ժամադրուեցանք հանդիպելու Երկուշաբթի առաւօտ, իր աշխատավայրին մէջ: Ապահովագրական հարցերու կողքին, Տիգրան՝ այդպէս էր իր դպրոցական օրերու անունը, երկրորդական վարժարանէն մինչեւ համալսարան դասընկերս եղած էր եւ թաղեցի էր: Ամիսը մէկ կամ երկու անգամ կը հանդիպէինք, յատկապէս յօդուածներու մասին իր գնահատականը ու թանկարժէք ցուցմունքները ստանալու համար: Այդ առաւօտ ինծի համար պատրաստած քերականական յատուկ ուղեցոյց մը պիտի յանձնէր:



Երկուշաբթի առաւօտ հասայ գրասենեակը, տարօրինակօրէն ան չէր եկած տակաւին: Ըսին, թէ հիմա կու գայ: Սուրճ բաշխող տիկինը բերաւ սուրճը, ու գաւաթ մըն ալ Տիգրանին համար դրաւ սեղանին վրայ, ըսելով որ եթէ ուշանայ նորը կը բերէ: Կէս ժամ սպասելէ ետք, մտահոգուած՝ քանի մը անգամ հեռաձայնեցի բջիջայինին, սակայն չպատասխանեց: Օրուան ընթացքին փորձեցի հեռաձայնել նաեւ տան հեռաձայնին՝ պատասխանող չեղաւ: Ան առանձինն կը բնակէր:

Երեկոյեան, խիստ մտահոգ՝ հեռաձայնեցի իր ազգականներէն մէկուն, որ իր մասին որեւէ տեղեկութիւն չունէր:

Վայրկեաններ ետք, ան յայտնեց Տիգրանին մահուան գոյժը. ան մահացած էր քիչ առաջ, հիւանդանոցին մէջ:

Ո՛վ չի ճանչնար Տիգրանը: Համեստ նկարագիրով, կատակասէր ու գուարձախօս, սակայն, օրինապահ, խստապահանջ ու բծախնդիր: Ապահովագրական գործին բերմամբ ունէր ծանօթներու շատ լայն շրջանակ, նաեւ՝ լիբանանահայ մամուլին մէջ բծախնդրութեամբ պատրաստած իր ճշգրիտ խաչբառերը ու խաղերը հանրայայտ դարձուցած էին զինք:

Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթին համար ալ միութենական ու մարզական բովանդակութեամբ պատկերազարդ խաչբառներ կը պատրաստէր: Համալսարանական օրերուն, ան խմբագիրը եղած էր Հայկագեան Համալսարանի Հայկական Ակումբին հրատարակած «Նաւասարդ» ամսաթերթին: Նաեւ տարիներ եղած է ուսուցիչ՝ իր ուսանած պատմութեան նիւթը դասաւանդելով: Համակարգիչ չէր գործածեր, ու քանի մը անգամ յայտնած էր, թէ պէտք էր աւելի կանուխ ծանօթանար եւ օգտագործեր գայն, յատկապէս ուսումնասիրութիւններու եւ նամակակցութեան համար: Փափաք կը յայտնէր հրատարակելու հայերէն խաչբառի եւ ժամանցի խաղերու գիրքեր կամ նոյնիսկ պարբերաթերթ, որուն բովանդակութեան պատրաստութեան կարողութիւնը ունէր, սակայն դժբախտաբար կանուխ մեկնեցաւ ու չկարողացաւ իրագործել իր փափաքը:

Հայերէն լեզուն, արեւմտահայերէնը իր «պաշտամունքի» առարկան դարձուցած էր, եւ ունէր լեզուական խիստաճանաչումի բացառիկ տաղանդ: Լեզուական նրբութիւններուն տիրապետած ըլլալով, գրեթէ բոլոր տեսակի գրութիւններու մէջ եւ ամէն մակարդակի հեղինակներու՝ գրականութիւն, հրատարակութիւններ, մամուլ, պարբերաթերթեր, պաշտօնական հաղորդագրութիւններ ու նոյնիսկ բացիկներ, կը գտնէր լեզուական, քերականական, լեզուամտածողութեան, արեւելահայերէնի գործածութեան, չամբողջացած նախադասութեան, վայրի ու ժամանակի եւ տրամաբանութեան յատուկ խախտումներ: Սովորական աչքին «կատարեալ» թուող գրութիւններուն մէջ իսկ երբեմն կը գտնէր տասնեակներով լեզուական սխալներ, հոգ չէ թէ ո՛վ էր հեղինակը:

Յոյց տուած է իր կարմիր մեկնող սրբագրած գրութիւն-

## ՄԱՀԱՊ

«Մարզիկ»ի խմբագրութիւնն ու վարչութիւնը կը գուժեն թերթին երկարամեայ աշխատակիցին՝

**ՏԻՐԱՆ Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆԻ**

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 12 Դեկտեմբեր 2016-ին:



ներէն շատ մը օրինակներ, նոյնիսկ կարծեցեալ «անսխալ» նկատուող հեղինակներէ: Այս լեզուական թերութիւնները ու հրատարակիչին բժախնդրութեան պակասը չափազանց կ'անհանգստացնէին զինք: Ընդհանրապէս կապ կը հաստատէր այդ հեղինակներուն, հրատարակիչներուն կամ խմբագիրներուն հետ, մատնանշելով վրիպումները՝ իր օժանդակութիւնը առաջարկելով անոնց: Ոմանք կ'ընդառաջէին, ու ան սիրայօժար կ'աջակցէր անոնց: Իր նշած ամենատարածուած սխալներէն էր «ներս» բառին սխալ գործածութիւնը փոխան «մէջ»ին՝ սրահին մէջ, բակին մէջ, եկեղեցիին մէջ, ակումբին մէջ եւ այլն, ինչ որ շատ կը նկատենք մամուլի էջերուն մէջ եւ կը լսենք ձայնասփռուէն, նաեւ՝ «որպէս» բառին սխալ գործածութիւնը փոխան «իբրեւ»ին, «ու»ի գործածութիւնը փոխան «ոյ» եւ յատկապէս արեւելահայերէն բառերու ու «երեւանահայերէն» ոճի օգտագործումը արեւմտահայերէն գրութիւններու մէջ...

Քանի մը անգամ խոստացած էի գրութիւններուս վերաբերեալ իր քաջալերանքին ու նպաստին մասին յիշատակութիւն կատարել, ինչ որ սակայն կտրականապէս կը մերժէր:

Սիրելի՛ Տիգրան, ահա այս տխուր առիթով խոստումս կը կատարեմ: Արդեօք քանի՞ լեզուական սխալներ պիտի գտնէիր այս գրութեան մէջ:

Լիբանանահայութիւնը եւ «Մարգիկ»ը քու առ յաւէտ մեկնումովդ կորսնցուցին իւրապատուկ տաղանդներով օժտուած խոստապահանջ ու համեստ ազգային մը:

## «ՄԱՐՁԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Տիրան Վահրատեան (Աւստրալիա) 1000 \$
- Լէոնի Սարմազեան (Գանատա) 1000 \$
- Յ.Մ.Ը.Մ.-Ֆրանս (Փարիզ) 800 Եւրօ
- Յարութիւն Անմահունի (Կիպրոս) 500 \$
- Մարի Տաքետեան (Յորդանան) 300 \$
- Յ.Մ.Ը.Մ.Վիեննա 300 Եւրօ
- Վարդուհի Աղազարեան-Նաճարեան 200 \$
- Եւ զաւակը՝ Արթօ (Դամասկոս)
- Պերճ Միսքճեան (Եգիպտոս) 100 \$

## ՄԱՀԱՉԳ

Յ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը խոր կսկիծով կը գուժէ բազմավաստակ Յ.Մ.Ը.Մ.ական, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝

### ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ԱԼԱՅԱՅՏՈՅԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 24 Յոկտեմբեր 2016-ին, Մ. Նահանգներու մէջ:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱԷ ՍԵԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ - ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ  
HAMAZKAYIN VAHE SETHIAN PRINTING AND PUBLISHING HOUSE

ԳԻՐՔԸ  
ՄԱՐԴՈՒ  
ԼԱԽԱԳՈՅՆ  
ԲԱՐԵԿԱՄՆ Է

BOOKS ARE  
A MAN'S BEST FRIEND



«Շաղոյեան» կեդրոն, Պոլսի Համուտ | Հեռ՝ +961 1 241262/3/4  
Ֆաքս՝ +961 1 260329 | Ե-նամակ՝ print@hamazkayin.com  
Կայքէջ՝ www.hamazkayin-bookstore.com  
Դիմատետր՝ Գանձարան - Hamazkayin Publishing, Bookstore

# «ՄԱՐՁԻԿ»Ի ԽԱՉԲԱՌՆԵՐՈՒ ԱՆԿՐԿՆԵԼԻ ՎԱՐՊԵՏԻՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ (ՏԻՐԱՆ Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

## Վ. Աւագեան ՊԵՅՐՈՒԹ

**Լ**իբանանահայ մամուլի վաղուան պատմագիրը երախտագիտութեամբ պիտի յիշէ Տիրան Մ. Աղազարեանը, որ աւելի քան 35 տարի հայ մամուլը հարստացուց իր խաչբառներով, պահուած բառերով եւ ժամանցի այլազան խաղերով:

Պարոն Տիրանը, ինչպէս որ կը սիրէր կոչուիլ ան, եզակի երեւոյթ էր մեր կեանքին մէջ: Դժուար թէ գտնուի մէկը, որ այսօր հայ մամուլին հանդէպ այնքան երկիւղածութիւն եւ գուրգուրանք ունենայ, որքան որ ան ունեցաւ: Պարոն Տիրան արթուն պահակն էր հայ լեզուի մեր գանձարանին եւ անխնայ խարազանիչը բոլոր անոնց, որոնք անհրաժեշտ յարգանքն ու կարեւորութիւնը չէին տածեր անոր նկատմամբ: Խաչբառներու անկրկնելի վարպետն էր ան: Տասը վայրկեանէն կրնար կազմել խաչբառ մը, որուն լուծումը յաճախ քանի մը ժամ կրնար պահանջել միջին ընթերցողէ մը:

Քիչեր գիտեն, որ խաչբառներու պատրաստութիւնը ազատ ժամերու պարզ նախասիրութիւն մը եղած է ապահովագրական ընկերութիւններու աշխարհէն եկող այս մարդուն համար: «Ազգակ»ի նախկին տնօրէն եւ գլխաւոր խմբագիր Սարգիս Մահչէրէճեանի քաջալերանքով ու մղումով ան մուտք գործած է մամուլի ասպարէզ եւ ինքնաշխատութեամբ տեւաբար կատարելագործած է ինքզինք այնպէս մը, որ խաչբառ լուծելը հաճելի մոլութեան վերածած է իր ընթերցողներուն համար: Շատեր տարիներով թերթ գնած են... խաչբառի սիրոյն: Քանի մը սերունդ հայե-

րէն սորված է իր խաչբառներով, իսկ շատեր բառարանի գործածութեան ընտելացած են դարձեալ իր խաչբառներուն շնորհիւ: Ո՞վ պիտի իմանար կաշնբուռն, սինլթոր եւ հագուագիւտ այլ բառերու իմաստները, եթէ երբեք չըլլային միտք ու յիշողութիւն շարժող իր խաչբառները:

Ոսկեղնիկին հանդէպ ունեցած անհուն սէրը պարոն Տիրանը մղած է աշխատակցելու լիբանանահայ մամուլի գրեթէ բոլոր ներկայացուցիչներուն, առանց կուսակցական, դաւանական կամ որեւէ այլ խտրութեան: Իրեն համար կարեւորը հայ լեզուի պահպանումն ու տարածումն էր, ժողովուրդի բոլոր խաւերուն հասանելի դառնալու անհրաժեշտութիւնը: Այդ պատճառով ալ, ան խտրութիւն չէր դնէր միջոցներուն միջեւ. խաչբառ կը պատրաստէր բոլորին՝ քաղաքական օրաթերթին թէ մարզական ամսաթերթին, Մերանոցի պարբերաթերթին թէ աշակերտական միութեանական տարբեր մրցանքներուն:

Հայ մամուլի պատմութեան մէջ դժուար թէ գտնուի մէկը, որ այսքան հետեւողական եւ տքնաշան կերպով ծառայած ըլլայ հայ տիպ ու տառին: Ամէնօրեայ ներկայութիւն էր ան մեր մամուլին մէջ: Տարիներ շարունակ, շաբաթը եօթը օր իր խաչբառները երեւցած են մեր մամուլին մէջ (կարգ մը թերթեր երկուշաբթի արձակուրդ առնելով Կիրակի լոյս կ'ընծայէին իրենց թիւերն ու խաչբառները...), ինչ որ կ'ենթադրէր հազարի ճիգ ու աշխատանք: Պարոն Տիրան այդ բոլորէն խուսափողը կամ վախցողը չէր, ընդհակառակն՝ ան տեւաբար առաջարկներ ունէր խաչբառներուն չափը մեծցնելու եւ թերթերուն ժամանցի սիւնակները աւելցնելու:

Պարոն Տիրան ունէր համայնագիտարանային ծանօթութիւններ: Տարի-

ներու ընթացքին եղած էր անյազ ընթերցող եւ ամբարած էր շտեմարանային տեղեկութիւններ, գորս տեղին կ'օգտագործէր իր խաչբառներուն մէջ: Թէեւ ան հայագիտութիւն չէր ուսանած, սակայն հայագիտական եւ հայրենագիտական իր ծանօթութիւնները, առանց չափազանցութեան, կրնային մըրցիլ մերօրեայ լաւագոյն հայագէտներուն հետ: Գրաբարին լաւ ծանօթ էր, իսկ արեւմրտահայերէնը գաղտնիք մը չունէր իրեն համար:

Նկարագիրով հեզ ու համեստ էր պարոն Տիրան: Գործին բերումով ան կը յարաբերէր տեսակաւոր մարդոց հետ: Կը ճանչնար լաւն ու վատը, անշահախնդիրն ու շահամուլը, ազնիւն ու «առաւփախաւ»ը, սակայն ինք միշտ կը մնար յարգալիւր ու փափկանկատ բոլորին նկատմամբ: Ամէն ինչ կը փոխուէր սակայն, երբ հարցը վերաբերէր հայ լեզուին վերաբերող անփութութեան մը: Այդ պահուն պարոն Տիրան բոլորովին կ'այլափոխուէր, անբացատրելի խոռվք մը կ'ապրէր ու կը բարկանար: Աններող ըլլալու չափ ան կ'ընդվզէր, երբ մամուլ աշխատակիցներ արեւելահայերէն դարձուածքներ եւ բառակապակցութիւններ կը խառնէին արեւմտահայերէն իրենց գրութիւններուն: Կը փոթորկէր մանաւանդ, երբ վերնագիրներու մէջ կոպիտ սխալներու կը հանդիպէր: Մեր թերթերու խմբագիրները կրնան վկայել, թէ քանի՛-քանի՛ անգամներ պարոն Տիրանէն յանդիմանական շեշտով հեռաձայններ ստացած են յաճախ «մանրուք» նկատուող լեզուական վրիպումներու համար:

Պարոն Տիրանին հետ մեր ծանօթութիւնը ունի քառորդ դարու պատմութիւն: Նախ՝ «Ազգակ»ի խմբագրակազմի անդամակցութեան մեր օրերուն, իսկ 1995-էն ետք՝ «Մարզիկ»ի գլխաւոր

խմբագիրի հանգամանքով մեր հանդիպումները կը կատարուէին ամսական եւ երբեմն ալ երկշաբաթեայ դրութեամբ: Խօսակցութեան նիւթերը ընդհանրապէս նոյներն էին՝ մեր լեզուին եւ մամուլին ճակատագիրը, գրասէր նոր սերունդի մը բացակայութիւնը, լեզուական թափթփածութեան եւ անընթացեան հարցեր, անճոռնի սխալներ ու... բանագողութիւններ: Իւրաքանչիւր հանդիպումին պարոն Տիրան սովորութիւն ունէր աշխատանքի իր նօթատետրին հետ ունենալու հայ մամուլէն տրցակ մը էջեր, որոնց վրայ կարմիրով կատարուած կ'ըլլային սրբագրութիւններ: Ան վարժութիւն դարձուցած էր ձեռքը անցած գրութիւնը կարդալու... կարմիր գրիչով: Յաճախ կը խոստովանէր, որ կարմիրով լեցուն մամուլ էջերը սկսած են դէզեր կազմել իր մօտ: Մինչեւ իսկ կը ծրագրէր օրին մէկը հրատարակել զանոնք՝ համապատասխան սրբագրութիւններով եւ ծանօթագրութիւններով:

Հիմա, որ չկայ այլեւս ան, ո՞վ պիտի հետեւի մեր մամուլին մէջ վխտացող լեզուական սխալներուն: Ո՞վ պիտի տագնապի անոնցմով եւ խմբագրատունէ խմբագրատուն դիմէ՝ անաղարտ հայերէնի մը գործածութեան կենսական պահանջով:

Պարոն Տիրան ապրեցաւ լուռ եւ անշուք: Իր մեկնումն ալ այս աշխարհէն եղաւ նոյնքան լուռ եւ անշուք: Հարագատներու եւ բարեկամներու շատ սեղմ շրջանակ մը միայն ներկայ գտնուեցաւ իր վերջին հրաժեշտին: Մեկնեցաւ՝ առանց խաչբառներու վերջին տրցակը մամուլին յանձնելու: Մեկնեցաւ՝ առանց երազը իրականացնելու, խաչբառներու գիրք մը հրատարակելու:

Մեկնեցաւ պարոն Տիրան, պարկեշտ մարդու եւ հաւատաւոր հայր քաղցր յիշատակներ ձգած իր ետին:

Հողը թեթեւ գայ վրան:

Ձինք պիտի յիշենք ու պիտի փընտռենք շա՛տ երկար:

**«Սարգիկ»ի վերջին խաչբառին լուծումը Տիրան Մ. Աղազարեանի ձեռագիրով:**



Ի յարգանս յիշատակին անոր, որ 25 փարի այս էջը հարապացուց իր խաչբառներով՝ **ՏԻՐԱՆ Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆԻՆ**

խաչբառ թիւ 224

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Տ	Օ	Ծ	Ա	Բ	Գ	Դ	Ե	Վ	Ա	Բ	Գ	Դ	Ե	Վ
2	Ի	Պ	Ա	Ե	Ի	Դ	Տ	Ի	Պ	Ա	Ե	Դ			
3	Փ	Օ	Տ	Ի			Ա	Ա	Ի			Բ			
4	Պ	Պ	Պ				Կ		Ա	Բ	Պ				
5	Ա		Պ	Ե			Ա	Բ	Ա	Բ	Ա	Բ	Ա	Բ	
6	Ե	Ա	Ե	Ի			Ե	Պ	Ա			Ե	Ա	Պ	Վ
7	Կ	Կ		Բ	Կ	Ա	Կ		Ա	Բ	Բ		Ա	Վ	Ի
8	Ե	Պ	Ի	Ծ		Ե	Օ				Վ	Ա	Պ	Ա	Ե
9	Տ	Ի	Պ	Պ	Դ	Ծ					Ի	Վ	Ա		Բ
10	Ի	Ե		Պ		Ա	Վ				Ե		Կ	Ի	Ե
11	Պ		Վ	Ի	Ա	Ե	Ա					Տ	Ա	Պ	Կ
12	Ա	Ա		Ա	Ա	Պ	Ի	Բ			Ծ	Ա	Ե	Ա	Ե
13	Ե	Ե	Ի	Ա		Կ	Բ	Ի		Բ	Պ	Պ		Ե	Ա
14	Ա	Բ		Ե	Ի		Պ		Բ	Պ	Ա	Վ	Վ		Ծ
15	Ե	Ա	Ա	Ա	Վ	Պ	Ա		Տ		Ծ	Ծ		Ա	Փ
16		Տ	Բ	Պ		Ա	Բ		Պ		Ա	Ե	Ա	Ե	
17				Ա	Ա	Ա	Կ	Ա	Տ	Ի	Բ		Փ	Ա	Ի
18				Ե	Ի		Ե		Բ	Փ		Ա	Բ	Ե	
19				Բ	Ե	Ա	Պ	Ի		Ա	Բ	Ա	Տ	Ի	Պ
20				Ա	Տ	Պ		Բ	Ա	Բ	Ի	Ե		Բ	Բ

Եփարեկը՝

1) ԱՊՅԵ ՓԵՊՊԵԻ

2) ԱՊՊՊՊՊ ԱՊՊՊՊՊՊ

3) ԱՊՊՊ ՊՎԿԵՊ

4) ԱՊՊՊ ԱՊՊՊՊՊՊ

